

Հ.Մ.Ը.Մ. Եղաւ հայ դպրոց, եղաւ հայ ակումբ, եղաւ Հայաստան: Ապատ ու անկախ եռագոյնով Հայաստան դարձաւ, նոյնիսկ եկեղեցի եղաւ որոշ չափով:

ԱՐԱՄ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Հ.Մ.Ը.Մ. Եղաւ հայ ժողովուրդի անկորնչելի հարստութեան դրօշակիրը: Եղաւ հայրենիքի ապատարութեան ճանադարհին նուիրեալ կամատր պիւնտրներու բանակը:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմի

Հ.Մ.Ը.Մ. Եղաւ աշխարհացրի սփիւռքի հայրենագոյրկ սերունդներու հոգիներուն մէջ աղբորդ, շնչող ու մանաւանդ ներշնչող անհող հայրենիք:

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

Առաջնորդ Լիբանանի Հայոց

Հ.Մ.Ը.Մ. Եղաւ ամէն տեղ, հայրենիքէն ներս եւ յատկապէս սփիւռքի մէջ, եղաւ թէ՛ տուն եւ թէ՛ դպրոց: Մեզմէ շատեր հո՛ն հասակ առին եւ հոն դիտի մնան միշտ:

ՕՇԱԿԱՆ ԱՐՔ. ՉՈԼՈՅԵԱՆ

Առաջնորդ Ա.Մ.Ն. Արեւելեան Թեմի

Հ.Մ.Ը.Մ. Եղաւ ու կը մնայ հայկական մեր աւանդութեանց հզօր դաշտդանն ու դահադանը:

ՄՈՒՇԵՂ ԵՊՍ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Առաջնորդ Ա.Մ.Ն. Արեւմտեան Թեմի

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Հ.Մ.Ը.Մ. եւ Ազգային Մեծ Գէմքեր» խորագիրը կրող այս գիրքը, ընթացիկ իմաստով Հ.Մ.Ը.Մ.ական գրականութիւն կամ պատմութիւն չէ: Ան տարիներու ջանքով կատարուած ուսումնասիրական աշխատանք մըն է, որ կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի յարգանքին ու հպարտանքին արժանացած հոյլ մը ազգային դէմքեր, որոնց կեանքն ու գործը միութեան իրերայաջորդ սերունդներուն համար եղած է ու կը մնայ ազգային դաստիարակութեան եւ ներշնչման մնայուն աղբիւր:

Գիրքը միաժամանակ անդրադարձ մըն է այն վերաբերումին ու խանդաղատանքին, զոր յիշեալ դէմքերը ունեցած են հանդէպ Հ.Մ.Ը.Մ.ի վաստակին, առաքելութեան եւ հասցուցած սերունդներուն: Ընթերցողը գիրքին էջերէն պիտի լսէ ձայնը պատմութեան, սրտի խօսքը ազգին ու հայրենիքին փառքը հիւսած ընտիրներուն, որոնց վկայութիւնները անպայման որ բարոյական մեծ արժէք կը ներկայացնեն անկրկնելի այս միութեան համար եւ կը նկատուին անոր յաջողութեան լուսագոյն փաստերը:

Հ.Մ.Ը.Մ. եւ ազգային դէմքեր իրարու լրացուցիչ եւ շարունակութիւն են: Փոխադարձութեան օրէնքով անոնք բարոյական եւ գաղափարական նկարագիր կու տան իրարու, կը ներշնչուին իրարմէ, կը յօրանան իրարմով եւ միասնաբար ուղի կը հարթեն հայութեան պայծառ գալիքին:

Կ. ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

85-ամեայ վաստակաշատ կեանք ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ ունեցաւ նորահաս սերունդները ներգրաւող, հայ երիտասարդները առինքնող ու ոգեզինող գաղափարաբանութիւն եւ կենցաղակերպ, որուն էատարբերը կազմեցին յատկապէս,

- «Բարձրացիր, բարձրացուր» նշանաբանը եւ զայն կենսածելի վերածելու նախանձախնդրութիւնը,

- Ազգային արժանապատուութեան տէր կանգնելու պարտաւորութեան ու պատասխանատուութեան գիտակցութիւնը,

- Ազգային Եկեղեցիին հաւատարիմ մնալու եւ Ազգին ծառայելու յանձնառութիւնը,

- Արիութեան հասկացողութեան եւ ասպետական ոգիի կենսագործումը:

Եւ ասոնք՝ անկախ սկառուտական դաւանանքին բարոյակերտ հրահանգներէն:

Այսպիսի ստորոգելիներով բնորոշուող վարքագիծով, հայրենաշունչ կենսընթացով, երիտասարդանուէր երախտիքով, Հ.Մ.Ը.Մ.ը ազգային կեանքին մէջ ամէնուրեք դարձաւ ու մնաց մշտադալար եւ ուշագրաւ ներկայութիւն: Եւ որպէս այդպիսին, արդարօրէն արժանացաւ ազգային-քաղաքական ղեկավարներ Ն. Աղբալեանի, Ս. Վրացեանի, Դրոյի, Կ. Սասունիի... մեծանուն գրողներ Յ. Օշականի, Համաստեղի, Մ. Իշխանի... անուանի հրապարակագիրներ Շ. Միսաբեանի, Մ. Թէօլէլեանի, Վ. Նաւասարդեանի, Չիթունիի, Յ.Ճ. Սիրունիի եւ բազում այլ ականաւոր դէմքերու գնահատանքին ու մեծարանքին: Առաւել, Հայաստանեայց Եկեղեցւոյ գրեթէ բոլոր բարձրաստիճան իշխանաւորներուն՝ Կաթողիկոսներուն, Թեմակալ Առաջնորդներուն Կոնդակներուն, Օրհնութեան Գիրքերուն, հրապարակային ներքողական վկայութիւններուն:

*

* *

Ըստած է, որ «Հ.Մ.Բ.Մ.ը անցեալէ աւելի ներկայ է ու մա՛նաւանդ՝ ապագայ»:

Մեր Միութեան հայաշէն Անցեալով հպարտ, ներկայի քսան հազար հաշուող մեր 90 մասնաճիւղերով ինքնավստահ, սելեռաբիբ կը նայինք Ապագային, ու կ'ըսենք.-

Հ.Մ.Բ.Մ.ը պիտի շարունակէ իր սրբազան առաքելութիւնը Սփիւռքի եւ Հայաստանի զոյգ տարածքներուն վրայ, պատրաստելով Արտերկրի մէջ, Հայրենիքին համար անկախատենչ ու հայրենաբաղձ երիտասարդներու «կամաւոր բանակ». եւ Հայաստանի մէջ, իր արմատներուն վերադարձած, հայրենակերտումի աշխատանքներուն ծառայելու «միշտ պատրաստ» յանձնառու սերունդներ:

Խունկ ու յարզանք Հ.Մ.Բ.Մ.ի տեսանող ու նահատակ ռահվիրայ՝ Շ. Քրիսեանի, հայ սկաուտութեան տեսաբան Յ. Հինդլեանի, բազմերախտ հիմնադիրներ Գ. Յակոբեանի, Տ. Խոյեանի եւ իրենց գաղափարակից ու գործակից համայն նուիրեալներու յիշատակին:

Փառք ու պատիւ իրենց հոգիներուն մէջ Հայալոյս Արեւ ունեցող բոլոր արժանաւորներուն:

ՏՈՔԹ. ՄԻՍԱԲ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Ի զուր չէ, որ կրօնապետ կամ կուսակցապետ, Հայաստանի նախարար թէ օտար պետութեանց ներկայացուցիչ բարձր զնահատեցին, բազմատարած ողջունեցին այս յայտնութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, ամրախարխիս եւ բիրեղապատ անոր կառոյցին մէջ տեսնելով, յառաջապահ գիծի վրայ, Ազգային Հաստատութիւն մը:

Երեւոյթը դարձաւ այլապէս հոգեպարար, աւելի եւս գօտեպնդիչ պարզ այն իրողութեամբ, որ վերնախաւին, դեկավար դասին հետ միաժամանակ, հայ ժողովուրդը ի՛նքը սիրեց, թե ու թիկունք հանդիսացաւ երիտասարդ այս կազմակերպութեան, որ ազգայինին զուգահեռ միջազգային ալ սեւեռակէտով ճամբայ կը բանար դէպի Ապագայ:

Պաղտնի՞ք մը քողագերծած կ'ըլլանք թէ ճշմարտութիւնը հաստատած, եթէ ընդգծենք, որ իր բոլոր նուաճումները (համահայկական որդեգրում, տարածումն հմայք, յարատեւ յաղթանակ) Հ.Մ.Ը.Մ. կը պարտի, առաջին հեթրին, *մարզամտաւորական միահիւս եւ ընդելոյց միութիւն մը ըլլալու երկրէն իր բնոյթին:*

Գեղակերտ մարզիկներուն ճախրն ու սլացքը, դնդերակուռ մարզախումբերուն անզուսպ խոյանքը, բարձրաճակատ արիարենոյշներուն յաղթաբայլ տողանցքը շնչաւորութեան, մի՛շտ ալ սլացք առին Հ.Մ.Ը.Մ.ի ուխտէն ու նշանաբանէն, դաւանանքէն ու գաղափարախօսութենէն, արգասիքը՝ մտաւորական երկունքի:

Փաստօրէն եւ ի սկզբանէ՝ միասին էին, յառաջապահ շրախումբին մէջ քով-քովի կը քալէին *մարզիկը* (Գրիգոր Յակոբեաններ, Քաջունի եղբայրներ, Մերճանօֆներ) եւ *մտաւորականը* (Յ.Ճ. Սիրունիներ, Յովհ. Հինդլեաններ մինչեւ մեր օրերու Մ. Թէօլէօլեաններն ու Տոքթ. Բ. Փափազեանները): Ոմանք ալ եղան միաձուլումը զոյգ հանգամանքներուն, - առաջինը՝ ինքը, Հ.Մ.Ը.Մ.ի ռահվիրան Շաւարշ Քրիսեանը, ապա՝ Վահան Չերազը, մարզիկ,

սկաուտ եւ բանաստեղծ Մ. Չարիֆեանը, մինչեւ մեր օրերուն մարզիկ, հրապարակագիր եւ մշակոյթի մեկեւնաս Եղիշէ Մանուկեանը:

Քնարակիրներ ներշնչուեցան Հ.Մ.Բ.Մ.ի տեսիլքով, շքերթներովն ու յաղթանակներովը, եւ իրենց կարգին խանդավառեցին անոր շարքերը գիրք ու քերթուածով (Գ. Մահարիէն մինչեւ Արմէն Անոյշ): Բեմական խօսքով թէ մամուլի էջերով թե՛ տուին անոր ճախրին ու գրոհին: Աւելին, ոմանց սրտաբուխ կանչը եթէ դարձաւ Հ.Մ.Բ.Մ.ական առօրեայ քայլերգ (Գ. Կառվարենց, Մ. Իշխան), ուրիշներու Հ.Մ.Բ.Մ.էն բեղմնաւորուած ներշնչումն ալ գանձեր տուաւ հայ դպրութեան (Վահան Թէքէեան՝ «Քարչրացիք, Քարչրացուք», Ա. Ճառուկեան՝ «Ուխտը Արարատի»):

Բաց աստի, ազգային դէմքեր, անուանի եւ դիրքի տէր համալսարանականներ միաձուլուեցան անոր շարքերուն, մաս կազմեցին անընդմէջ դիւաններուն եւ ժողովներուն: Բեմադիր, քառերագիր եւ քաղաքական գործիչ Գասպար Իփէկեանի նման անձնաւորութիւններ սիրով ստանձնեցին դատաւորի դեր ու պաշտօն Հ.Մ.Բ.Մ.ի մարգահանդէսներուն, միջ-մասնաճիւղային հանդիպումներուն:

Կոյր եղողն անգամ տեսաւ, որ Հայաստանը Երկաթէ Վարագոյրի ետին մնալէն ասդին, հայախօս եւ հայրենաւանդ Հ.Մ.Բ.Մ.ի ակումբներն ու հաւաքավայրերը դարձան մէկական մանրանկար Հայրենիք՝ օտար աստղերու տակ:

Իր ժողովուրդին հետ աստանդական՝ Հ.Մ.Բ.Մ. մնաց սակայն ա՛յն ասպետը, որ Անկախ ու Միացեալ Հայաստանի խորհրդանիշ Եռագոյնը բռնեց ամուր, մի՛շտ բարձր, եւ անոր հովանիին ներքեւ համախումբ մաքրակենցաղ երիտասարդութիւնը մղեց այնպիսի սխրագործութիւններու, որ ազգային հպարտութիւնը վերածնի եւ Հայրենիք վերադառնալու Յոյսը վառ մնայ տարագիր հայութեան սիրտին մէջ:

3. ԳԵՂԱՐԴ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ «ՍԿԱՌԻՏ ՊԱՏՐԻԱՐԲԸ»՝ ԶԱՒԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 1868ին, Միջագետքի Մուսուլ քաղաքը, ուր պաշտօնավարած է իր հայրը՝ Տէր Աւետիս քհնյ. Տէր Եղիայեան, բնիկ տէրոցի: Մայրը Մարթա (ծն. Խապայեան):

Իր ուսումը ստացած է Սղերդի Միացեալ Ընկերութեան եւ ապա Պաղտատի Ազգային վարժարաններուն մէջ: Ուսման շրջանը ատարտել է ետք, զբաղած է ուսուցչութեամբ: Ուսուցիչ Միհրան Սվանեանի թելադրութեամբ՝ 1890ին կը մտնէ Արմաշի դպրեվանքը:

1892ին կը ձեռնադրուի սարկաւագ. երեք տարի ետք՝ արեղայ, ձեռամբ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի, որ 1896ին իրեն կու տայ նաեւ վարդապետական աստիճան:

1897 թուին քարոզչական պաշտօնի կը կոչուի Սամաթիոյ եւ ապա Խասգիւղի մէջ: Վարչական եւ հովուական փորձառութիւն ձեռք ձգելէ ետք, Օրմանեան Պատրիարքի կարգադրութեամբ, կը մեկնի Կարին՝ Առաջնորդի պաշտօնով, ուր կը մնայ ութ տարի: Ապա կը վերադառնայ Պոլիս եւ Ետի գիւղի եւ Մաքրի գիւղի քարոզչութիւնները կը վարէ: 1908ին կը նշանակուի Վանի տե-



դապահ, ապա՝ Տիարպէքիի Առաջնորդ, ուր կը մնայ մինչեւ 1913:

1913 Օգոստոս 30ին կ'ընտրուի Պատրիարք: Այնուհետեւ, մինչեւ Պաղտատ իր արտորուիլը, հայ ժողովուրդի ընտրանիին ու բազմահոյլ զաւակներուն հետ ինք եւս կը ճաշակէ Մեծ Եղեռնի դառնակակիծ համը: Պոլիսէն Հալէպ, Հալէպէն Տէր Զօր, մինչեւ Ռասուլ Այն եւ Ապու Քեմալ բաց աչքերով կը տեսնէ հայ ժողովուրդի չարչարանքը, սարսափի ու ջարդի տեսարանները, որոնք զինք կը ճմլեն հոգեպէս: Վերջապէս, 26 Սեպտ. 1916ին կը հասնի Պաղտատ, աւելի քան քառորդ դարու բացակայութենէ ետք:

Զինադադարի կնքումով եւ անգլիացիներու իրաք մուտքով վերջ կը գտնեն կեղեքումները: Զաւէն Պատրիարք, որ մինչ այդ ներման արժանացած էր, կը նախընտրէ մնալ իր հօտին քով՝ Մուսուլ, մեղմելու համար տարագիր հայութեան տառապանքը: Ընտրով բարեկամութիւն կը հաստատէ անգլիացի սպաներու հետ եւ, բացատրելով իրենց հայ տարագիրներու դժբախտութիւնը, միութեան օժանդակութիւն, ցորեն եւ այլ սննդեղէններ կ'ապահովէ անոնց: Աւելի'ն. ան կը շրջի գիւղէ գիւղ եւ կը փրկէ տասնեակ հարիւրաւոր պատանիներ եւ կիներ, որոնք ճակատագրի դժբախտ պարտադրանքով ընդունած էին իսլամ կրօնը եւ կամ սայթաքած՝ կտոր մը հացի համար:

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐՋԱՆԸ

Զինադադարի կնքումով վերջ կը գտնէ արտորականի իր կեանքը: Պոլսահայերու խնդրանքին վրայ կ'արտօնուի իրեն վերադառնալ Պոլիս:

Այնուհետեւ իր գործունէութեան սեւեռակէտը կը դարձնէ որբերու խնամատարութեան գործը: Պետական մակարդակի վրայ կը հաստատէ շփումներ ամերիկեան եւ անգլիական կառավարութիւններուն հետ եւ կ'ապահովէ մեծագումար օժանդակութիւն, որուն շնորհիւ Պոլսոյ զանազան շրջաններուն եւ զաւառներուն մէջ կը բանայ որբանոցներ:

1922ի Օգոստոս ամսուան մէջ սկիզբ առած յոյն-թրքական պատերազմը իր չարաղէտ ազդեցութիւնը կ'ունենայ հետզհետէ իր կեանքը դասաւորող հայութեան վրայ: Յոյն զանգուածին հետ հայեր եւս փախուստ կու տան դէպի Յունաստան եւ Պոլ-

կարիա: Նոյեմբեր 1922ին կնքուած Լօզանի դաշնագիրը առաւել եւս կը շէշտէ հայոց յուսախաբութիւնը, որուն իբրեւ հետեւանք կը սկսի սարսափահար փախուստ դէպի արտասահման: Խունապի կը մատնուին նաեւ օտարները եւ իրենց պահած որբանոցները կը սկսին երկրէն դուրս հանել: Այս կացութեան մէջ, Պատրիարքարանը եւս կը մտածէ իր ուղղութեան մէջ փոփոխութիւն մտցնել: Երկարատեւ խորհրդակցութիւններէ ետք, ազգային շահերը գերիվեր համարելով, կը հրաժարի իր պաշտօնէն եւ իր տեղը կը նշանակէ տեղապահ մը:

Այնուհետեւ կ'ունենայ թափառական կեանք: Կ'երթեւեկէ գաղութէ գաղութ՝ Պուլկարիա, Յունաստան, Երուսաղէմ, Կիպրոս, Գահիրէ, Հալէպ եւ ամէնէն վերջը Պաղտատ, ուր կը մնայ մինչեւ իր մահը: Պատրիարք Սրբազանը ամէնուրեք կ'արժանանայ հայ ժողովուրդի յարգալիր վերաբերումին: Ամէն տեղ ազգային իշխանութիւններ մեծարանք եւ սէր կ'արտայայտեն եւ կը հիւրընկալեն իրենց պատրիարքը: 1932ին, կոկորդին վրայ կատարուած գործողութեան մը հետեւանքով, կը կորսնցնէ իր ձայնը:

ՊԱՏՐԻԱՐՔ ՍԿԱՌԻՏԸ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.

Երբ մարմնամարզը եւ սկաուտութիւնը աննախընթաց խանդավառութեամբ մուտք կը գործեն պոլսահայ կեանքին մէջ, Զաւէն Պատրիարք կ'ըլլայ առաջիններէն, որոնք կ'ողջունեն այս նոր շարժումը եւ կը քաջալերեն անոր ղեկավարութիւնը, որովհետեւ մարզական եւ սկաուտական շարժման մէջ կը տեսնէր կրթիչ, դաստիարակիչ եւ բարձրաթոնիչ նպատակներ, որոնք պիտի բարձրացնէին, ազնուացնէին հայ երիտասարդութիւնը Պոլսոյ եւ գաւառներու մէջ: Զաւէն Պատրիարք ո'չ միայն կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի պատուոյ նախագահ, այլեւ կ'արձանագրուի սկաուտ եւ մէջքին կը կապէ սկաուտական գօտին:

Պոլսահայ երիտասարդութիւնը կ'ապրի շարժումին առթած խանդավառութիւնը: Ամէնուրեք կը կազմակերպուին մարզական եւ սկաուտական խումբեր: Կազմակերպչական ներքին կեանքին զուգահեռ, լարուած ուշադրութեամբ կը սարքուին մրցումներ, դասախօսութիւններ, դաշտահանդէսներ եւ ողիմպիական խաղեր: Առաջին եւ երկրորդ հայկական ողիմպիականներէն ետք, 16 Յունիս 1913ին տեղի կ'ունենայ հայկական ԵՐՐՈՐԴ ողիմպիականը, հովանաւորութեամբ Զաւէն Պատրարքի:

Հայ մարմնակրթանքը իր լայն շրջագիծով (Պոլիս, գաւառ եւ արտասահման) համազգային շարժումի մը հանգամանքը սկսած էր առնել, երբ կը պայթի Առաջին Համաշխարհային պատերազմը եւ հայ ժողովուրդը, Թուրքիոյ մէջ, ենթակայ կը դառնայ 20րդ դարուն ամենէն քստմնելի եւ անմարդկային ոճիրին: Բազմահոյլ ընտրանիին հետ կը նահատակուի նաեւ մարզական շարժումի ռահվիրայ եւ «Մարմնամարզ» թերթի խմբագիր Շաւարշ Քրիսեան:

Նոյեմբեր 1918ին, զինադադարի կնքումէն անմիջապէս ետք, քանի մը սրտցաւ Հ.Մ.Ը.Մ.ականներ քով քովի կու գան եւ կ'որոշեն կեանքի կոչել Շաւարշ Քրիսեանի երազը եւ հիմնել մէկ մարմնակրթական ընդհանուր միութիւն: Առաջին նիստին իսկ մարմնամարզը եւ սկաուտութիւնը կը միանան մէկ դրօշի տակ իբրեւ լրացուցիչ մաս իրարու: Ծիշդ այս պատճառով է, որ կ'որդեգրուի ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ անունը, կրճատումով՝ Հ.Մ.Ը.Մ.:

Հայ մարմնակրթանքի այս նոր շրջանին համար ճամբայ բացողներու շարքին մէջ, իր նշանակալի տեղը կ'ունենայ նաեւ հոգիով սկաուտ Զաւէն Պատրիարք Տէր Եղիայեան:

1919 Օգոստոս 3ին տեղի կ'ունենայ յետ պատերազմեան առաջին ողիմպիականը: Օտար բարձրաստիճան զինուորականներու եւ հիւրերու ժամանումէն ետք, իր հետեւորդներով մարզադաշտ կը ժամանէ Զաւէն Պատրիարք: Իր ժամանումը կ'ողջունուի հայկական քայլերգով եւ հայ սկաուտներու ջոկատ մը զինք կ'առաջնորդէ պատուոյ թրիպին: Խանդավառուած է նաեւ ինք, Պատրիարքը, ու կը լայտնէ, որ առջի օր ստացեր է արդէն հայ արիներու ուխտը յատկանշող սկաուտական գօտին - Արարատով, «Բարձրացիր, Բարձրացուր» նշանաբանով:

Հայ սկաուտական շարքերը կը խտանան: Իրարու կը յաջորդեն երդման արարողութիւններ, որոնց կը նախագահէ միշտ Զաւէն Պատրիարք, օրհնելով, խրախուսելով նորընծայ սկաուտները:

Ստորեւ կու տանք Զաւէն Պատրիարքի խօսքը, արտասանուած 25 Յունուար 1925ին, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, սկաուտական երդման հանդիսութեան մը առիթով.

«...Ամէնքս ալ մեծ յուզումով տեսանք այս 60ի չափ պատանհները, որ եկան այստեղ եւ հայուն դրօշակին եւ Աւետարանին առջեւ երդում ըրին հաւատարիմ մնալ Աստուծոյ, ծառայել հայրենիքին եւ գործել իբր պարտականութեան գիտակից մարդ... Ասոնք պիտի ըլլան պարկեշտ եւ պատուաւոր քաղաքացիներ, իբր հայրենիքի քաղաքացի՝ պիտի ըլլան պարկեշտ, իբր զինուոր՝ պիտի ըլլան հաւատարիմ հայրենիքին: Անոնց մեր ամէնուն ներկայութեան ըրած երդումին մէջ հագուստի, զարդարանքի, վազելու, ցատկելու խօսք չկայ. անոնց երդումն է ամբողջապէս ստեղծել բարոյական մթնոլորտ... Մի կարծէք, որ այս երիտասարդական յանդուգն քայլ մըն է եւ վաղը պիտի մոռցուի: Ես այս չեմ ընդունիր: Ես կը հաւատամ, որ այս երդումը պիտի քանդակուի բոլորին սրտերուն մէջ - Հաւատարիմ ընթացք մ'ունենալ եւ կատարեալ կարգապահութեամբ ապրիլ: Գիտէի, թէ ստրկութեան տարիները ահագին ազդեցութիւն գործած են, յարգանքի պակասը մեր մէջ այսքան տարուայ ստրկութեան արդիւնք է: Ահա՛ սկսուտները կ'երդնուն ըլլալ կարգապահ մարդ եւ գիտակից՝ իրենց գործերուն մէջ... Որքա՛ն ուրախ պիտի ըլլայինք, եթէ մեր որբերէն մինչեւ մեծերը, բոլո՛ր մեր դպրոցականները ընէին այս երդումը... Ինչո՞ւ աղջիկներն ալ նոյն բարձր ոգիով, նոյն բարձր ուխտերով եւ երդումներով չներկայանան հո՛ս՝ դրօշակին, Ս. Աւետարանին առջեւ...»

«Երդման այս արարողութիւնը ինձ առիթ կու տայ ըսելու, թէ որքա՛ն հիացումով կը դիտեմ այս ուղղութեամբ յառաջացումը մեր մէջ: Գոհ եմ, որ ամէն թաղի մէջ պատանեկութիւնը սիրով նուիրուած է այս ազգօգուտ շարժումին: Երջանիկ պիտի ըլլայի, եթէ մակապարտէզէն մինչեւ բարձրագոյն վարժարանները տարածուէր այս ոգին...» (ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, էջ 123-124):

*

* *

*Կազմակերպուեցէ՛ք, ազնուացէ՛ք, բարձրացէ՛ք
որքան կրնաք, լեցուցէ՛ք ձեր սիրտն ու միտքը, վասն
զի դո՛ւք պիտի ըլլաք վաղուան սրբազան Հայրենիքին
հրաշակերտ տաճարին սիւները:*

ԶԱԻԷՆ ԱՐՔ. ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ
Պատրիարք Հայոց

Եւ այսպէս, ուր որ գնաց, քաջալերեց, խրախուսեց, օրհնեց
Հ.Մ.Ը.Մ.ի նորագիրները: Նախագահեց իրենց մարզական եւ
սկսնական ձեռնարկներուն: Վերջին անգամ զինք կը տես-
նենք Չահլէ, ալ յոգնած եւ ուժասպառ: Խումբ մը սկսուտներ կը
ներկայանան իրեն՝ իր հայրական օրհնութիւնը առնելու համար:
Երբ Սկսուտ Պատրիարքը կ'իմանայ թէ նոյն օրը տեղի պիտի
ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Պէլրութի մասնաճիւղի սկսուտներուն ամառ-
նային բանակումի եզրափակիչ տողանցքը, կը խնդրէ որ զինք
տանին բանակավայր: Հասած է ժամը. սկսուտական շեփորա-
խումբը կը հնչեցնէ իր եղանակները. ժողովուրդը ոտքի է եւ կը
ծափահարէ նահատակ ցեղի անմահներուն: Պատրիարք Սրբա-
զանը ինքն ալ յուզուած կը մօտենայ սկսուտներուն եւ հայրա-
կան տաք ժպիտով կ'օրհնէ զանոնք: Այդ կ'ըլլայ իր վերջին օրհ-
նութիւնը:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՍԿԱՌԻՏ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ՎԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Աւագանի անունով՝ Լեւոն-Կարապետ Պալճեան, ծնած է 20 Սեպտեմբեր 1908, Պուրբէշի մէջ (Ռումանիա):

1913ին, ծնողքին հետ կ'անցնի Պոլիս, ուր կը մնայ մօտ մէկ տարի:

Լեւոն կը դաստիարակուի ջերմ հայրենասէր եւ եկեղեցասէր ծնողքին շունչով: 1913ին մայր ու որդի կ'անցնին Պոլիս, ուր Լեւոն կը յաճախէ Կէտիկ Փաշայի Սուրբ Մեսրոպեան ազգային վարժարանի ծաղկոցը, որմէ ետք կ'անցնին Ռոտտոթօ, իսկ 1914ին կը վերադառնան Պուրբէշ: Յեղասպանութեան սեւ թուականէն ետք, Էնվեր կ'աշխատի ի գործ դնել Ռումանիա ապաստանած հայերու բնաջնջման ծրագիրը: Այս ծանր իրադրութեան պայմաններուն մէջ, մեծաթիւ հայ ընտանիքներ կը գաղթեն Օտեսա, ապա Ռոտտով: Պատանի Լեւոն-Կարապետ կարճ ժամանակով կը յաճախէ տեղւոյն նորաբաց հայկական վարժարանը: Վերադառնալով կրկին Պուրբէշ, Լեւոն-Կարապետ կը յաճախէ Պուրբէշի «Միսաքեան» ազգային վարժարանը: 1928ին կ'աւարտէ տեղւոյն միջնակարգ վարժարանի առեւտրական ճիւղը: Միաժամանակ կը հետեւի հայ լեզուի եւ գրականութեան գիշերային դասընթացքներուն:

1931-32 ուսումնական տարեշրջանին կը մտնէ Պուրբէշի պետական համալսարանը, իբրեւ մանկավարժութեան, հոգեբանու-



թեան եւ ընկերային գիտութիւններու ուսանող. գայն կ'աւարտէ 1936ին եւ կը պաշտպանէ աւարտանաոր՝ «Կարգապահութեան հարցը մանկավարժութեան մէջ» թեմայով:

Ուսանողական թէ ուսուցչական պաշտօնի շրջանին գործօն մասնակցութիւն կը բերէ գաղութի կրթական, մշակութային, մարմնակրթական եւ վարչական կեանքին, իբրեւ կազմակերպող եւ իբրեւ ուսուցիչ-դասախօս ու հրապարակագիր: Ան եղած է նաեւ լաւ ասմունքող:

ԵՌԱՆԴՈՒՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ

Ճիշդ իր ծննդեան տարեդարձին՝ 20 Սեպտ. 1943ին, կը մեկնի Աթէնք, ուր Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ Լեւոն-Կարապետ Պալճեանի վարդապետական ձեռնադրութիւնը՝ վերանուանուելով **Տ. ՎԱԶԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ:**

Նոյն տարուան Նոյեմբեր 28ին, Պուքրէշի թեմական խորհուրդը գինք կ'ընտրէ առաջնորդական տեղապահ: 1948ին կ'ընտրուի Առաջնորդ եւ 8 Յուլիս 1951ին, Էջմիածինի մէջ, ձեռամբ Գեորգ Զ. Կաթողիկոսի կը ստանայ եպիսկոպոսական աստիճան:

ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ԱԹՈՌԻՆ 130ՐԴ ԳԱՀԱԿԱԼԸ

30 Սեպտեմբեր 1955ին, Ս. Էջմիածինի մէջ, կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս:

ՇԻՆԱՐԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Վեհափառը կեանքի կոչեց Մայր Աթոռի անշուք վիճակը եւ արդարօրէն արժանացաւ Շինարար տիտղոսին: Վեհափառը մեծ եռանդով իրականացուց իր վսեմ ծրագիրները: Վերանորոգեց ու բարեգարդեց հայրենի սրբավայրերը, ինչպիսիք են Ս. Հռիփսիմէն, Ս. Գայիանէն, Խոբ Վիրապը, Օշականը, Գեղարդը եւ բազմաթիւ այլ եկեղեցիներ ու վանքեր:

Հայ ճարտարապետութեան հոյակապ կոթողներու վերաշինութիւնը դարձուցած էր իր կեանքին նպատակը, որպէսզի «երազը անգամ մը եւս իրականութիւն դառնայ»: Եւ հայոց Վեհափառը անընդհատ վերաշինեց «ինչ որ անցեալին չար ձեռքեր քանդեցին դարեր ու դարեր շարունակ»: Վեհափառին յուշարձա-

նէ յուշարձան ուղեորութիւնները եւ անոնց վերականգնման համար նուիրատուներ գտնելը, միաժամանակ իրաքանչիւրին յատուկ ճարտարապետ եւ վարպետ գտնելը մեզի ցոյց կու տան իր մեծ սէրը եւ բացառիկ նուիրումը՝ ճարտարապետական մեր պատմական կոթողները փրկելու գործին մէջ:

Յիշեալ ծրագիրներու իրագործման համար, Վեհափառ Հայրապետը էջմիածինի մէջ հիմնեց ատաղձագործարան, արծաթ-նսկերչական արհեստանոց, ասեղնագործանոց, դերձակատուն, մոմի ձուլարան, նկարչութեան արհեստանոց եւ արդիական տպարան:

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կարապետ Պալճեանի համար հայ դպրոցը, հայ մամուլը եւ հայ գիրքը մնացին հայը հայ պահելու կոչուած կարեւոր ազդակներ: Այս առումով, անոր առաջին սխրանքը հանդիսացաւ «Հերկ» մշակութային, տնտեսական, հասարակագիտական ամսագիրը, որ լոյս տեսաւ Պուքրէշի մէջ, 1937ին: Ռումանահայ մամուլի պատմութեան մէջ «Հերկ»ը նոր խօսք էր եւ կարեւոր երեւոյթ:

1944ին, Պուքրէշի «Հայ Մամուլի Տպարան»էն լոյս տեսաւ Կ. Պալճեանի վերլուծական փորձը՝ «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վէպին մէջ» (62 էջ), որ հետագային թարգմանուեցաւ ռուսերէնի եւ ֆրանսերէնի:

1943ին լոյս տեսաւ «Խրիմեան Հայրիկ որպէս դաստիարակ», 158 էջերէ բաղկացած մանկավարժական ուսումնասիրութիւնը:

1945ին լոյս ընծայեց «Մեր Պատարագը» գործը (104 էջ) եւ «Խօսք Հայրենիքի մասին» գրքոյկը:

1954ին, դարձեալ Պուքրէշի մէջ, հրատարակեց իր հայրենի տպաւորութիւնները՝ «Հայրենի արեւին տակ» խորագրով:

Իր բոլոր գործերուն մէջ ջերմ եւ մաքրամաքուր հայրենասիրութիւնն է, որ ի յայտ կու գայ.

«ՄԱՍԻՍ ՍԱՐԸ ԻՆՉՔԱՆ ԴԻՏԵՍ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՄԲԱՆԵՐԷՆ ԻՆՉՔԱՆ ՔԱԼԵՍ,
ԵՐԵՒԱՆԻ ՊԱՂ ԶՈՒՐԵՐՈՒ ԱՂԲԻՒՐՆԵՐԷՆ

ԻՆՉՔԱՆ ԽՄԵՍ՝ ՉԵՍ ՅԱԳԵՆԱՐ, ՔԱՂՅՐ Է ՍԷՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»:

Վեհափառը նոր կեանք պարգևեց Մայր Աթոռի պաշտօնաթերթ «Էջմիածին» ամսագիրին, որ, իր բացառիկ թիւերով եւ մանաւանդ իր մատենագիտութիւններու ստեղծումով, առաջիններէն մէկը հանդիսացաւ մեր հայագիտական հանդէսներուն մէջ:

ԳԵՂԱՏԻՊ ԱԼՊՈՄՆԵՐ

Հայաստանի մէջ տիրող պայմաններու բերումով, պետական հիմնարկներ չէին կրնար մեր եկեղեցիներու խաչքարերուն եւ Արարատի նուիրուած ալպոմներ հրատարակել. այդ պարտականութիւնն ալ Վեհափառը վերցուց իր ուսերուն եւ մէկը միւսին ետեւէն հրատարակեց գեղեցիկ նկարներով ալպոմներ: Անոնց առաջինը «Հայկական եկեղեցիներ» լուսանկարներու ալպոմն էր: Երկրորդն էր դարձեալ «Հայկական եկեղեցիներ» անունը կրող ալպոմը, ապա՝ խաչքարերու նուիրուած հոյակապ ալպոմը:

Իր կոթողական գործը եղաւ «Էջմիածնի գանձեր» սքանչելի եւ հոյակապ ալպոմին հրատարակութիւնը, որ լոյս տեսաւ 1984ին, Ֆիւլանտայի մէջ:

Կարենոր հրատարակութիւն մըն էր նաեւ «Գանձատուն» ալպոմը: Նպատակը եղած է նորաստեղծ գանձատունը ներկայացնել հայ եւ օտար ընթերցողներուն:

1984ին, դարձեալ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի ջանքերով լոյս տեսաւ հայ ժողովուրդի վեհաշուք խորհրդանիշը եղող Աստուածաշնչական Արարատին նուիրուած գունագեղ ալպոմը:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՕՍԸ

Իր գահակալութեան բովանդակ շրջանին, Վեհափառը խաղաղութեան պատգամախօսը եղաւ միջազգային չափանիշով: Եղաւ ամէնուրեք՝ Էջմիածինէն Սթոքհոլմ, Փրակայի վեհաժողովէն մինչեւ Սոկորսկ, Հելսինքիէն մինչեւ Պերլին: Խաղաղութեան ուղերձներ յիւր գերպետութիւններու նախագահներուն՝ անկէ հասնելով մինչեւ ՄԱԿ, վերջապէս մինչեւ Վատիկան:

Վեհափառը եղած է միասնականության և ջատագովը: Մեծ դերակատարութիւն ունեցած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ երկու կաթողիկոսներու յարաբերութիւնները սերտացընելու գործին մէջ եւ մէկէ աւելի առիթներով դրսեւորած է իր զգացումները:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻՆ ՋԵՐՄ ՊԱՇՏՊԱՆԸ

Առաջին իսկ օրէն, Վեհափառը արդար եւ անյետաձգելի գտաւ արցախահայութեան ազատագրական պայքարը:

Արցախի փրկութեան համար դիմեց ամէնորէք: Իսկ երբ զգաց, որ ուշանալը անհնար է, անձամբ մեկնեցաւ Մոսկուա, համոզելու համար հացադուլ ընողները (Վիկտոր Համբարձումեան, Սօս Սարգսեան, Զօրի Բալայեան եւ ուրիշներ) եւ յաջողեցաւ: Այդ առիթով, այցելեց Գորբաչովին, որուն հետ շօշափեց Արցախի եւ Հայաստանի վերաբերող քաղաքական հարցերը, շեշտելով այս հարցերուն արդար լուծման կարելորութիւնը:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՈԳԻՆ

Սարդարապատի մեծ յաղթանակը միշտ ալ մեծ յարգանքով յիշատակուած է Վեհափառին կողմէ: Ան յաճախ անդրադարձած է Սարդարապատի պատմական նշանակութեան:

Հայաստանի մէջ, առաջին անգամ ըլլալով, Սարդարապատի ճակատամարտը հրապարակաւ հռչակուեցաւ Վազգէն Ա.ի կողմէ:

Առիթով մը Վեհափառը յայտարարած է.

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ՝ ՀԻՄՆԱՔԱՐԸ ԲՈՒՂՈՐ ՀՆԱՐԱՒՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՆԵՐՈՒ»:

ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐԸ

Իր բազմակողմանի եւ բազմաբովանդակ բեղմնատր գործունէութեան համար, արժանացած է միջազգային շքանշաններու.

- Ռումանիոյ հանրապետութեան աստղ (1952),
- Խաղաղութեան Համաշխարհային Խորհրդրդի Ժոլիօ Քիրիի (1962),
- Խաղաղութեան պաշտպանութեան խորհրդային կոմիտէին ոսկի մետալներ (1968),

- Ժողովուրդներու բարեկամութեան (1978):

Վեհափառը ստացած է նաև շարք մը միջազգային քաղաքներու պատուոյ քաղաքացիի վկայագիրներ:

Հայաստանի անկախութեան վերահաստատումէն ետք, ընտրուեցաւ Հայաստանի խորհրդարանի անդամ եւ իր օրհնութեամբ բացուեցաւ առաջին նիստը: 1994ին իրեն շնորհուեցաւ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ» տիտղոսը, որ Հայաստանի բարձրագոյն տիտղոսն է:

Հ.Մ.Ը.Մ.Ա.ԿԱՆԸ

Փոքր տարիքէն կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին եւ գործօն մասնակցութիւն կը բերէ իբրեւ սկաուտ, վարչական անդամ եւ ատենապետ:

12 Փետրուար 1933ին, Պուքրէշի «Երեւան» գեղարուեստական միութեան սրահին մէջ, Լեւոն-Կարապետ Պալճեանի նախագահութեամբ տեղի կ'ունենայ գեղարուեստական երեկոյ մը, ուր խօսք առնելով Կ. Պալճեան կը դրուատէ Հ.Մ.Ը.Մ.ը:

Նոյն թուականի Նոյեմբեր 29ին, Պուքրէշի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 18րդ տարեդարձը: Բացման խօսքով (հայերէնով եւ ռումաներէնով) ելոյթ կ'ունենայ Կ. Պալճեան, ծանրանալով Հ.Մ.Ը.Մ.ը բնորոշող հիմնական երկու կէտերու վրայ.

Հ.Մ.Ը.Մ.ի դերը բուն իսկ մանուկին վրայ,

Հ.Մ.Ը.Մ.ի դերը ազգային տեսակէտէ: Ի վերջոյ կոչ կ'ընէ հասարակութեան բոլորուելու Հ.Մ.Ը.Մ.ին շուրջ: Այս իմաստով յօդուածներ կը ստորագրէ Պուքրէշի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ արի»ի մէջ:

Վեհափառութեան օրերուն իսկ ան հոգիով ու սրտով եղաւ Հ.Մ.Ը.Մ.ին հետ, օրհնեց անոր բոլոր ձեռնարկները եւ աղօթեց անոր բարձրացման համար:

Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայիս 1983ին, Լոնտոն տուած իր հովուապետական այցելութեան ընթացքին, այցելեց նաև Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղի սկաուտներուն եւ արժանացաւ ջերմ ու յարգալիք ընդունելութեան: Վազգէն Ա., որ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ-առաջնորդ Պուքրէշի մէջ (Ռումանիա), հայրաբար հետեւեալ պարզ, յուզիչ եւ գրաւիչ խօսքերը ուղղեց Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի գալլիկներուն եւ սկաուտներուն:



Պուրբեշի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիղի սկսուտ առաջնորդները, 1925ին:
Ուռքի, աջէն երրորդը՝ Կարապետ Լեւոն Պալճեան
(ապա՝ Վապգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց):

«Այս պահին ես շատ յուզուած եմ, որովհետեւ նախ լսեցի ձեր խօսքը, երգը եւ փոքրիկ ֆիլմը, որ ցոյց էր տալիս ձեր բանակումի կեանքի մի հատուած:

«Ես յիշեցի իմ պատանեկութիւնը. ես էլ ձեզ նման սկսուտ եմ եղած եւ, երկար տարիներ, 12 տարեկանից մինչեւ 20 եւ ւաւելի, Ռումանիայում, Բուխարեստ քաղաքում, որ իմ մայրաքաղաքն է:

«Սակայն սկսուտական կազմակերպութիւնը եւ ընդհանրապէս հայ համայնքի կազմակերպումը տեղի ունեցան 1920-22 տարիներին եւ ահա այդ օրերին էր, որ իմ մայրը, իմ ձեռքը բռնած, ինչպէս դո՛ւք՝ յարգելի մայրեր, բերաւ յանձնեց սկսուտական կազմակերպութեան. այնտեղ էլ նոյն անունն էինք կրում՝ Հ.Մ.Ը.Մ. - Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

«Այս բոլորը ես յիշեցի այս պահին. գրեթէ նոյն

երգերն էլ մենք երգում էինք, նոյն երդումները մենք էլ էինք տալիս, նոյն դաստիարակչական եւ հայկական ազգային հայրենասիրական ոգով էինք մենք դաստիարակում: Յետոյ մենք մի քիչ մեծացանք եւ ինքներս եղանք խմբապետ: Ես, օրինակի համար, եղած եմ 4-5 տարի եւ ամբի, եթէ չեմ սխալում, Աքելլա: Այս Աքելլան Պէյտըն Փաուրլի գրքից վերցուած է եւ կը նշանակէ գայլիկների խմբապետ:

«Ես յուզուած եմ ասեցի մի քիչ առաջ, երբ տեսնում եմ, որ այդպէս կայտառ, գեղեցիկ հայկական աչքերով, կանգնած էք իմ առաջ եւ գիտէ՞ք ինչ եմ մտածում, մի երազ, մտածում՝ որ ձեզ բոլորին առնեմ տանեմ Հայաստան, հէնց հիմա, վաղը: Դա անկարելի է անշուշտ, մարմնապէս անկարելի է, բայց ես ուզում եմ գոնէ մտովին ձեզ տանեմ մի պահ դէպի հինաւուրց աշխարհը հայոց:

«Մաղթում եմ ձեզ Աստծու օգնութիւնը, անէ՛ք, զարգացէ՛ք, բազմացէ՛ք, արժէքաւոր զաւակներ եղէ՛ք ձեր ժողովրդին եւ, գոնէ բարոյական իմաստով, զինւորները Մայր Հայաստանին»:

ԱՄԷՆՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.Ը

Իսկապէս Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեր ամէնուս միութիւնն է: Ան ստեղծուեցաւ անմիջապէս 1918-էն յետոյ, մեծ ոգետորութեան շրջանին, երբ հայ ժողովուրդը նոր կեանք մը կը սկսէր ամէն տեղ, բայց մանաւանդ ազատ Հայաստանի մէջ:

Չմոռնանք, որ Պոլսոյ մէջ խումբ մը ողջամիտ մարդիկ Հ.Մ.Ը.Մ.ին ծնունդ տուին ո՛չ թէ գաղութներուն համար, այլ մեր Մայր երկրին՝ Հայաստանի համար:

Անոնք, որ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնեցին, կամեցան երիտասարդ Հայաստանին պարզեւ տանիլ կազմակերպութիւն մը եւ ոգի մը, որուն դրօշին տակ պէտք է բո-

լորուէր ամբողջ հայ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը, դառնալու համար մարմնով՝ առողջ եւ կորովի, մտքով՝ պայծառ եւ արթուն, հոգիով՝ մաքուր եւ ամուր, նկարագրով՝ ուղիղ եւ գաղափարապաշտ: Ու այսպէս, հասակ նետած այդ սերունդը պիտի կոչուէր հայ ազգին ու հայ հայրենիքին իտէալներուն ծառայելու:

Կ. ՊԱԼՃԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականը միայն մարզական չէ, սկսուտական չէ, այլ ԱՄԷ՛Ն ԻՆՉ Է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան իտէալները, հայութեան ապատութեան հետ կապուած ամբողջ յոյսերը, հայութեան պայքարի ամբողջ իմաստը: Արտասահմանի մէջ այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, որոնք հետագային քաղաքական յանձնառութիւններու տակ կը մտնեն, Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ է, որ կը ստանան իրենց պզգային հիմնական դաստիարակութիւնը:

ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԲԸ՝ ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿԵԱՆՔԸ

Երջանկայիշատակ Տ.Տ. Զարեն Ա. Կաթողիկոս ծնալ հայ ժողովուրդի պատմութեան ամէնէն դժնդակ տարին, 1915ի Փետրուար 14ին, Մարաշի մէջ: Իր մանուկ հոգիին վրայ կրեց տարագրութեան եւ արհաւիրքի ցաւերը՝ իր ծննդավայրէն մինչեւ Համա ու Հալէպ, ուրկէ 1930ին մեկնեցաւ Լիբանան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի նորաբաց դպրեվանքին իբրեւ անդրանիկ սան: Այնտեղ, հմուտ եւ



նուիրեալ հոգեւորականներու շունչին տակ կազմաւորուեցաւ իր անձնաւորութիւնը՝ ամուր ակարագրի, հաստատ կամքի, բարի հոգիի եւ ազնիւ սրտի առաքինութիւններով զօրացած:

Դպրեվանքի հնգամեայ ուսումնական շրջանը ասարտելէ ետք, կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ 1935ին: Յաջորդ տարիներուն երիտասարդ վարդապետը զանազան պաշտօններ վարեց վանքէն ներս եւ ասպա դրկուեցաւ Պելճիքա, հետեւելու համար Բիւզանդական պատմութեան եւ Արեւելագիտութեան դասընթացքներուն:

Անթիլիաս իր վերադարձին ստանձնեց վանական զանազան պարտականութիւններ, մասնաւոր առաքելութեամբ մեկնելով

Պասիթ, Թարթուս, Թրիփոլի եւ Լաթաքիա, գաղթականի ցուպը վերստին ձեռք առած՝ հայորդիներուն հոգեւոր մխիթարութիւն մատակարարելու համար:

1940ին կոչուեցաւ Բերիոյ Թեմի Առաջնորդական Տեղապահի պաշտօնին, զոր երեք տարի ձեռնհասօրէն վարեց ու 1943ին արժանի եղաւ բարձրանալու Առաջնորդական աթոռ, տակաւին երեսունին չհասած:

Երջանկայիշատակ Վեհափառը Հալէպի մէջ է, որ իրագործեց ինքզինք, իբրեւ ժողովուրդի հայր եւ հովի: Իր Առաջնորդութեան 16 տարիներու միջոցին ի յայտ եկաւ իր բարձր անհատականութիւնը՝ իբրեւ բարեկամութեան ուժին հաւատացող մարդ, իբրեւ յստակատես միտք, նախանձախնդիր ոգիի եւ անձնական նկարագրի տէր հոգեւորական: Ծուտով դարձաւ իր ժողովուրդի հարազատագոյն զաւակը, շնորհիւ իր բարութեան, ողջմտութեան եւ անաչառութեան:

Իր Առաջնորդութեան շրջանին սուրիացի ժողովուրդը թօթափեց օտար իշխանութեանց լուծը: Երիտասարդ ու կորովի Առաջնորդը իր հօտի բոլոր զաւակներուն հետ միասին կանգնեցաւ ազատագրութեան պայքարի առաջին ճակատներուն վրայ, եւ իր այս կեցուածքը գնահատուեցաւ պետական շրջանակներու կողմէ, որոնք իրեն շնորհեցին սուրիական Ա. կարգի Արժանեաց շքանշան, 23 Սեպտ. 1946ին:

Ազգային ճակատի վրայ եղաւ նոյնքան քաջ ու կորովի: Ոգի ի բռին պայքարեցաւ հայ տոհմիկ դաստիարակութեան եւ ազգապահպանման համար: Հայ ազգային վարժարանները դարձան իր յարատեւ գուրգուրանքին եւ հոգածութեան առարկան:

Բայց իր կարեւորագոյն յաջողութիւնը եղաւ կրթական կալւածէն ներս, իբրեւ անձնական նախաձեռնութեան եւ տեսիլքի իրականացում՝ անկասկած, «Քարէն Եփփէ» ճեմարանի հիմնադրութիւնը:

1956 թուի Փետրուար 20ին ընտրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս: Իր գահակալութեան եօթը տարիները եօթը փշապսակներ եղան իր պայծառ ու մաքուր ճակատին ու եօթը խոցեր՝ իր սիրով յորդուն սրտին: Բայց նուաճումները, որոնց իրաւ գնահատութիւնը պատմութիւնը միայն պիտի տայ, եղան ուշագրաւ:

Վաղահաս մահը զգետնեց կաղնեհասակ հովուապետը, Զարեհ Սքանչելին, որ իր աչքերը փակեց Փետրուար 1963ին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԲԸ ԶԱՐԵՆՆԱ

Զարեն Ա. Բերիոյ Թեմի Առաջնորդութեան շրջանին, 1940էն մինչեւ իր Պէյրութ մեկնումը՝ 1956, եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի պատուակալ նախագահ եւ այս իսկ հանգամանքով նախագահած է Հ.Մ.Ը.Մ.ի գրեթէ բոլոր տօնակատարութիւններուն, ըլլան անոնք սկստուական երդման արարողութիւններ, ջահագրնացութիւններ, հանդիսութիւններ, թէ միջ-մասնաճիւղային գատկական մարզական փառատօներ եւ տողանցքներ:



Հալէպ, 22 Ապրիլ 1946.- Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային 20րդ մարպախաղերուն պատուոյ թրիպիւնը: Հիւրերու շարքին են Զարեն Վեհափառ (աղջ օրերուն Բերիոյ հայոց թեմի Առաջնորդ) եւ գրագէտ Յակոբ Օշական:

Այսօր, այս պատգամներէն իրաքանչիւրը դարձած է կտակ մը եւ անոնց վերջիշումը աւելի իմաստալից եւ ազդու է նոր սերունդին համար, ի մասնաւորի Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

« ...Հայ ցեղի, հայ մեծ ժողովուրդի բոլոր վսեմ ու սրբազան առաքինութիւնները խտացած են Հ.Մ.Ը.Մ.ի հանգանակներուն մէջ: Այդ հանգանակներու լոյսն ու գաղափարական ջերմութիւնը մեր տղաքը կը դարձը-

*Անն զոհաբերութեան եւ հայրենասիրութեան մէջ մէկ
անօթներ»:*

*

**

*«...Կը մաղթեմ, որ պարտութիւն չճանչնայ
Հ.Մ.Ը.Մ.ը: Կը մաղթեմ, մա՛նաւանդ, որ հոգեկան
պարտութիւն չճանչնայ, ու շարունակէ իր փրկարար
գործը՝ ներկայ ու հասնող երիտասարդ սերունդներու
ֆիզիքական ու բարոյական զարգացումով»:*

*«...Հիմա, Ի. դարու մէջ, մեր դարու այնքան բազ-
մաթի՛ւ գիտերէն վերջ, մարմնական քաջութիւնը, ֆի-
զիքական ոյժի արտայայտութիւնը այնքան մեծ արժէք*



Չարեհ Սրբապան Փայասլեան (հետագային Կաթողիկոս Մեծի
Տանն Կիլիկիոյ) 1946ին պաշտօնական բացումը կը կատարէ
Հ.Մ.Ը.Մ.ի նշանատուր «Նաւասարդեան» դաշտին:



Հալեպ, Ապրիլ 1953.- միջ-մասնաճիւղային 27րդ մարպախադերուն պատուոյ թրիպիւնը: Հիւրերու շարքին է Սիսոն Վրացեան: Աջին՝ Չարեհ Վեհափառ (այդ օրերուն Բերիոյ հայոց թեմի առաջնորդ):

եւ նշանակութիւն չեն ներկայացներ, որքան հոգեկան արութիւնը՝ որուն այնքա՛ն պէտք ունինք մեր այժմու կեանքին մէջ: Ես պիտի ուզէի, որ Հ.Մ.Ը.Մ.ի արիւնքը ըլլան մեր պատմութեա՛ն արութեամբը «արի»:

«Պատմութեան մէջ, մենք զմեզ մի՛շտ արի դաւաճած ենք: Կ՛ուզեմ, որ մեր ժողովուրդը թէ Հ.Մ.Ը.Մ.ը պահե՛ն իրենց արիութիւնը, ընդդէմ ամէն տեսակ վատութեանց եւ անարդարութեանց, մէկ խօսքով՝ «անարութեանց», ինչպէս կ՛ըսեն մեր պատմիչները»:

ԶԱՐԵՀ Ա.

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐԸ՝
ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԵԱՆՔԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Սարգիսեան, (աւագանի անունով՝ Նշան), ծնած է 27 Օգոստոս 1932ին, Քեսապ (Սուրիա): Նախակրթութիւնը կը ստանայ գիղին Ուսումնասիրաց Միացեալ Վարժարանին մէջ: 1946ին ան կ'ընդունուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք: 1949ին կ'օծուի Ծայրագոյն Վարդապետ, իսկ 1964ին՝ Եպիսկոպոս:

Դպրեվանքին մէջ, ան երկար տարիներ կը վարէ հսկիչի, դասախօսի եւ տեսուչի պաշտօններ: Երջան մը կը ստանձնէ նաեւ Կաթողիկոսութեան «Հասկ» պաշտօնաթերթի խմբագրութիւնը:

1957ին կը մեկնի Լոնտոն (Անգլիա), Օքսֆորտ համալսարանին մէջ կատարելագործելու համար իր ուսումը: Կը հետեւի աստուածաբանութեան ճիղին: Վերադարձին, 1965-1970 ան կը վարէ Դրան Եպիսկոպոսի պաշտօն: 1971 Փետրուարին կը մեկնի Նոր Զուղա, իբրեւ Իրանա-Հնդկաստանի Թեմի Առաջնորդ: 1973ին կ'ընտրուի Ամերիկայի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Թեմի Առաջնորդ, իսկ 22 Մայիս 1978ին կ'ընտրուի Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

1983 Փետրուարին, Խորէն Ա. Կաթողիկոսի վախճանումով, Գարեգին Բ. Կաթողիկոս կը ստանձնէ Կիլիկիոյ Կաթողիկոսու-



թեան ընդհանուր հովուութիւնը: 1988ին, Հայաստանի աղիտալի երկրաշարժին առիթով կը մեկնի Հայաստան՝ Ս. Էջմիածին, իբրեւ Կաթողիկոս իր անդրանիկ այցելութիւնը կատարելով հայրենիք եւ յատկապէս աղետահար քաղաքներ: 1991ին ան կը մասնակցի Ս. Էջմիածնի միոռոնօրհնէքի արարողութեան, իսկ Օգոստոս 1994ին վերջին օծումն ու թաղման կարգը կը կատարէ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսին, որուն իբրեւ յաջորդ՝ ան Ս. Էջմիածնի գահակալ կ'ընտրուի 4 Ապրիլ 1995ին:

Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոս հեղինակ է հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով տասնեակ մը գիրքերու եւ յօդուածներու: Երկար տարիներ ան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուցած է միջ-եկեղեցական ժողովներու եւ միաժամանակ պատասխանատու պաշտօններ ստանձնած՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին եւ միջ-եկեղեցական այլ կազմակերպութիւններու մէջ: Դասախօսած է միջազգային բազմաթիւ ամպիոններու մէջ եւ արժանացած՝ պատուոյ տասնեակ տիտղոսներու ու շքանշաններու: Իբրեւ Կաթողիկոս, ան հովուական այցելութիւններ կատարած է Սփիոքի հայկական բոլոր գաղթօճախները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան 131րդ գահակալը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ նախկին Կաթողիկոսը իր աչքերը յաիտե՛նականապէս փակեց 1999-ին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԳԱՐԵԳԻՆ Ա.

Իր նախորդներուն նման, Գարեգին Վեհափառ եւս եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի ջերմ բարեկամ: Իրմէ առաջ, Ամենայն Հայոց Վազգէն Վեհափառ իրա՛ւ սկառու էր, Երջանկայիշատակ Խորէն Վեհափառ սկառուութեան մեծ շատագով էր, իսկ Զարեհ Վեհափառ « Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբը» նկատուեցաւ շատերու կողմէ:

Գարեգին Վեհափառ ապրեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառու չեղած ըլլալու տխրութեամբ: «Վրէժ» ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի դէմ, որովհետեւ Քեսապի մէջ իր մանկութեան օրերուն Հ.Մ.Ը.Մ. չկար: Սակայն ան իր «Վրէժը լուծեց» ամենախոր յարգանքով ու սրտագին կոչով. « Հ.Մ.Ը.Մ.ը այն կազմակերպութիւնն է, որուն եւ որով ծառայելու համար ոչինչ պէտք է խնայէք»: Ի՛նք եղաւ առաջիններէն, որ ոչինչ խնայեց անկրկնելի այս Միութեան:



Պատուի՛ ա՛ն - Վեհափառները կը ժամանեն
(Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն եւ Գարեգին Բ.)

Օրսֆորտի ուսանող թէ Դպրեվանքի տեսուչ, Հ.Ե.Հ.Ռ.Մ.ի հինգերորդ թէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի փոխատենապետ, Նոր Զուղայի թէ Նիւ Եորքի Առաջնորդ, Մեծի Տանն Կիլիկիոյ թէ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Գարեգին Վեհափառ եղաւ ու մնաց Հ.Մ.Ը.Մ.ի իտեալներուն եւ արժէքներուն մեծ հաւատաւորը: Սիրե՛ց Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ ոգի, մթնոլորտ, միջավայր եւ կազմակերպութիւն, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ականութեան մէջ տեսաւ «Յարգանքի, հնազանդութեան, ծառայութեան եւ նուիրումի» սկզբունքներուն մարմնաւորումը:

Գարեգին Վեհափառ մասնաւոր համակրանք տաճեց յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական տարազին հանդէպ: Իրեն համար «Միութեան, կարգի եւ ներդաշնակութեան խորհրդանիշ» այդ տարազը «Տասն անգամ անելի արժեց՝ քան շողշողուն հագուստները»:

Փայլուն մտաւորական մը ըլլալու կողքին, Գարեգին Վեհա-

փառ եղաւ նաեւ փայլուն հոետոր մը: Երբ կը խօսէր ան Հ.Մ. Ը.Մ.ի մասին, խօսքերէն աւելի խօսուն կը դառնային աչքերը, որոնք կը վերածուէին մէկական սիրածոր աստղերու: Իր ելոյթներէն ամէնէն աւելի անտոանալի պիտի մնան Մայիսեան Փառատօներու ընթացքին, Պուրն Համուտի մէջ արտասանած պատգամները, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի նորահաս սերունդին համար թարգմանը կը հանդիսանան գաղափարական առողջ սերունդի մը պայծառ տեսիլքներուն:

Գարեգին Վեհափառ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ տեսաւ հայ ժողովուրդի տոկուն ապագային հաւատքը, որուն ամրապնդման ի խնդիր՝ ան կատարեց յիշատակութեան արժանի կարգ մը գործեր: Նախ, իրաքանչիւր տարուան Նոր Կիրակին ան հոշակեց «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Քհնյ. Խոյեանի «Նահատակ ցեղի անմահներ» յուշագրութեան լոյս ընծայման առիթով, Աւագութեան աստիճան շնորհեց արժանապատիւ Քահանայ Հօր: Զարեհ Վեհափառը անուանեց «Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբը»: Իսկ ամէնէն ուշագրաւը, այլեւ ծափահարելի՛ն, Միութեան 75ամեակին առիթով, իբրեւ գնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր գործունէութեան եւ առ ի պանծացում՝ Զարեհ Վեհափառի յիշատակին, խորհրդանշական նուիրատութեամբ մը, ան 75 հազար տոլար նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ին:

Եւ դեռ, Գարեգին Վեհափառ Անթիլիասի Կաթողիկոսարանի սեղանատան մէջ հացկերոյթ կազմակերպեց Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներուն ի պատիւ, համեստ սեղանակիցը եղաւ անոնց: Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնատեղիին պաշտօնական բացումը կատարեց, Հ.Մ.Ը.Մ.ական քանի՛-քանի՛ ակումբներ այցելեց, Հայրապետական Օրհնութեան Գիրերով մասնաճիղեր խրախուսեց, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ոսկէ շքանշանին արժանացաւ եւ, ամէնէն վերջինը, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Ծրջանային Վարչութեան կողմէ «Հ.Մ.Ը.Մ.ի Պատուոյ Անդամ»ի կոչումին տիրացաւ:

Այսօր, մեր կեանքէն բացակայ է այլեւս համակ եռանդ ու տեսիլք ճառագայթող Գարեգին Վեհափառը: Ներկայ են սակայն Վեհափառին հիասքանչ աչքերուն տակ տողանցած այն բազմահազար Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք իրենց հոգեւոր Մեծ Առաջնորդին աղօթքները, մտածումներն ու գործերը ընտրած են իբրեւ կեանքի ուղենիշ:

Մենք մօտէն կը հետեւիինք ձեր աշխատանքին: Ընդհանրապէս, որ յաճախ վաճառքի մէջ երբ կը գտնուիք՝ ձեզ կը տեսնենք միայն շարքերու մէջ հեռուէն, երբ մենք պաշտօնական ձեռով կ'իջնենք, կը քալենք, կ'երթանք եկեղեցի, դուրս կու գանք եկեղեցիէն, կը մասնակցի՞նք թափօրին: Բայց գիտցէք, որ մեր սիրտը, մեր միտքը ձեզ եւ ձեզի նման երիտասարդներու եւ երիտասարդուհիներու հետ է:

... Գիտէ՞ք, ի՞նչն է որ ամէնէն շատ կը սիրեմ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ.- կեցուածքը: Զեր կարգաւոր ընթացքը: Դաշտին մէջ կը դիտենք ձեզ, կը քալէք ռիթմով, կարգով, ինքնին խօսք է ասիկա, ինքնին ցոյց կու տայ հաւաքական ուժը, առանց բացատրութեան: Զեր շարքերուն մէջ ես չեմ տեսներ այսինչեանն ու այնինչեանը, այդ անհատական երանգը կը կորսուի ձեր ընդհանրական գոյնին մէջ, որուն անունն է Հ.Մ.Ը.Մ., հայ ազգի ընդհանուր պատանոյն մէջ վառօրէն ծաղկուն:

Ահա թէ ինչն'ի կ'ուզեմ, որ դուք այս գաղափարով ըմբռնէք ձեր դերը, թէ՛ դուք գործիչներ էք, իբրեւ կեցուածք ունեցող մարդիկ, իբրեւ հաւաքականօրէն շարժիչ գիտցող մարդիկ, կարգին հաւատացող մարդիկ: «Պատրա՛ստ» ձեր նշանաբանը աստուածաշնչական է, Սուրբ գրական ակունքներէ կը բխի: Աստուած, կը կարդանք Հին Կտակարանին մէջ, ուզեց մէկը դրկել իր ժողովուրդին ծառայելու: Ամէն մարդ սկսաւ փախչիլ, «գո՞վ դրկեմ» կը հարցնէր Աստուած մարդերուն: Յանկարծ Եսայի անունով մէկը ըսաւ. «Ահաւասի՛կ ես. առաքեա՛ գիս»:

*

**

Սիրելի սկառուներ, Մամիկոնեան ասպետներ ձեզի պէս միւս ու ոսկոր ունեցող, հայութեան արիւնն ունեցող մարդիկ էին: Անոնք երկինքէն չէին իջած: Մեր

հողին վրայ մեր ազգին շունչով դարձա՛ն Մամիկոնեան: Դուք այսօր ձեր թաղերուն մէջ այդ նոյն շունչը պիտի տարածէք: Գացէ՛ք, փնտոնեցէ՛ք պզտիկները, խօսեցէ՛ք ծնողքին, մի՛ քաշուիք, «միսիոնար» եղէք, պիտի շատցնէք շարքերը Հ.Մ.Ը.Մ.ին, պիտի շատցընէք շարքերը սկառտներուն եւ այդպէս դէպի անդունդ տանող ազդեցութիւններուն դէմ բարձր կեանքով պիտի կանգնիք պատուար, Հ.Մ.Ը.Մ.ակա՛ն պատուար, սկառտական պատուար, իբրեւ թռուցիկ խումբը հայութեան, այսօր այս 20րդ դարուն: Բարձրացէ՛ք միշտ, որպէսզի կարենաք ուրիշներն ալ բարձրացնել առ յաւիտ:

(13 Ապրիլ 1980ին՝ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ունան հռչակման առիթով):

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը կ'ըմբռնենք որպէս կենսախայտ եւ ազդու վերարթնութիւնը այն ասպետական ոգիին, որուն կը պարտինք մեր պատմութեան ամէնէն մեծ սխրագործութիւնները, Վարդանանց դիւցազնամարտէն մինչեւ Սարտարապատի գոյամարտը: Այդ ոգին ջի՛ղն է մեր հայ ժողովուրդի մարմնին. պէտք է միշտ զայն պահել պիրկ, կարենալ տոկալու համար օրէ օր վտանգալից համեմատութիւններու հասնող ապագա-զայնացուցիչ ազդեցութիւններուն դէմ:

(5 Դեկտ. 1983 թուակիր Հայրապետական Օրհնութեան Գիր՝ Հ.Մ.Ը.Մ.ի 65 ամեակին առիթով):

*

**

Ուր որ երթամ եւ Հ.Մ.Ը.Մ.ի ո՛ր ակումբն ալ յանախեմ, կը զգամ, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր երիտասարդութիւնը կ'առաջնորդէ դէպի բուրաստան: Երիտասարդութիւնը ներկան կ'արժեւորէ: Ան կամուրջն է հինին եւ

նորին: Ան ծիածանն է, որ պատմություն կը շինէ: Երիտասարդութիւնը այն գարունն է, որ պէտք է ծաղկի:

... Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը ինծի համար տարազ չեն՝ աչքեր լեցնող, այլ դպրոց են: Արդարեւ, դպրոց մըն է Հ.Մ.Ը.Մ.ը, որուն մէջ կը սորվինք այն մեծագոյն, գերազանց դասը՝ որ ներդաշնակեալ ուժին մէջ է իրական կեանքը:

Ծնողներ՝, տուէք ձեր զաւակները, յանձնեցէ՛ք Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ անոնք հոն պիտի սորվին այն, ինչ որ չեն տեսներ տունը, դպրոցը:

Հեռու ենք մեր հայրենի հողէն: Հայրենիքի գաղափարով ներշնչենք նորահաս սերունդները. նպատակ ունեցող ասպետական ոգիով:

Ասպետական ոգին էր, որ վերստին ծնաւ մեր ժողովուրդի զաւակներէն ոմանց մէջ: Եւ անոնք՝ Ֆետայիները, ձգեցին տուն, կին, զաւակ ու լեռները գացին, վասն հայրենեաց:

Մեր կեանքը սփիւռքի մէջ պայքար է: Հո՛ւ է, որ ասպետական ոգին պիտի առաջնորդէ: Ու երբ քայլեն մեր զաւակները, պիտի ըսեն՝ որ հայեր կ'անցնին պայծառ ճակատով, անցեալի հարստութեամբ, ապագայի պայծառատեսութեամբ:

(20 Նոյեմբեր 1984ին արտասանուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլիի «Արարատ» մասնաճիւղի ակումբին բացման առիթով):

*

* *

... Հ.Մ.Ը.Մ.ի ինքնութիւնը ո՞ր է. ճշդեցէ՛ք: Ինչո՞վ տարբեր էք դուք, այս տարագներուն մէջ, ուրիշներէն: Եթէ ուրիշներուն չափ պիտի ըլլաք, ուրիշներուն պէս պիտի ըլլաք, ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական էք: Ի՞նչն է Հ.Մ.Ը.Մ.ականի իրայատուկ բանը: Ի՞նչ է անոր մասնաւորը, որ ուրիշը չունի, եւ զոր ինքը ունի ուրիշին փոխանցելու առաքելութեամբ եւ ոչ թէ ինքն իրեն մէջ պահելու նեղ հայեացքով:

... Աստուած ձեզ զօրացնէ եւ Հ.Մ.Ը.Մ.ի պայծառ
անունը աւելի պայծառացնէք, եւ մեր ժողովուրդին
այնքան գրաւիչ դարձնէք, որ երբ մարդիկ տեսնեն
ապրելու ձեր եղանակը, մտածելու ձեր ընթացքը, վե-
րաբերուելու ձեր ձեւը, նոյնիսկ երբ տարազ հագուած
չըլլաք, կարենան ըսել:-

Հ.Մ.Ը.Մ.ակա՛ն է:

(6 Ապրիլ 1986ին արտասանուած՝ Անթիլիասի Կաթողիկոսարա-
նի սեղանատան մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի սկառու խմբապետներու հետ
հացկերոյթի ընթացքին):

*

**

**Հ.Մ.Ը.Մ.ի Կրթա-դաստիարակչական գործը ներ-
կայիս աւելի դժուար է, քան էր՝ անցեալին, երբ մեր
հայրերու շունչը տակաւին ուժեղ էր մեր մէջ: Հայրենի
հողին, մեր անցեալին ներկայութիւնը մեր մէջ կը
կշռէր: Այսօր, արդիապաշտութիւնն է, նոր կեանքին
բացուելու ձգտումն է, որ կը տիրէ: Ես ատոր մէջ
ժխտական բան չեմ տեսներ. պայմանաւ սակայն՝ ոչ ի
հեճուկս, ի զոհ մեր ազգային այն ըմբռնումներուն եւ
կեանքի ոճերուն, որոնք կը յատկանշեն Հ.Մ.Ը.Մ.ը
յատկապէս՝ կարգի գիտակցութիւնը մեր ազգին մէջ:
Ատոր դպրոցն է ինձի համար Հ.Մ.Ը.Մ.ը: Անկարգու-
թեան, անձնապաշտութեան, անհատապաշտութեան
եւ քմահաճոյքին այնքան զոհեր տուած ենք: Կարգա-
ւոր հեղինակութեամբ պատասխանատուութեան եւ
պաշտօններու ու ժողովրդական կամքի արտայայտու-
թիւն եղող այս հասկացողութեան շշակման համար,
մենք քաղաքացիական դաստիարակութեան պէտք ու-
նինք: Այդ դաստիարակութեան ամէնէն վառ օճախ-
ներէն մէկը կը նկատեմ ես Հ.Մ.Ը.Մ.ը:**

(31 Յունուար 1987ին արտասանուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնատեղի-
ին պաշտօնական բացման առիթով, Պէյրութ):

*
* *

Գաղափարը, ոգին, տեսլականը եւ առաքելութիւնը չեն կրնար մահ ճաշակել: Այնքան ատեն, որքան իբրեւ հայ կ'ապրինք եւ մանաւանդ որոշած ենք հայօրէ՛ն ապրիլ՝ անպայման Հ.Մ.Ը.Մ.ը եւ երիտասարդութիւն կազմաւորելու արուեստին սպասարկուանոր նման միութիւնները պիտի ապրին մեր մէջ, որովհետեւ,

Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան մէջ կը սաղմնաւորէ եւ կը կերպաւորէ՝

ա) Կարգի ու կանոնի կենցաղակերպը:

Եւ չմոռնանք, որ առանց կարգի ու կանոնի ամրաշէն ազդակներուն՝ մարդիկ չեն կրնար ազգ կազմել:

բ) Պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ ռեւէ հաւաքականութիւն թոյլ ընկերութեան մը կը վերածուի:

գ) Ազգային արժանապատուութեան զգացումը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ կա՛մ սին հպարտութեան եւ կամ անտարբեր, տժգոյն հանրութեան մը կը վերածուի մեր ազգութիւնը:

դ) Արիութեան եւ ասպետականութեան ոգին:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ տերեւի նման շարժող եւ ամէն հովի առջեւ տատանող գոյութեան մը կը դատապարտուի հայութիւնը:

ե) Ծառայութեան եւ նուիրումի պատրաստականութիւնն ու յանձնառութիւն:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ անբովանդակ, կամապաշտ ու անձնակերպոն անձերու գումարի մը կը վերածուի Հայկազեան ցեղը:

զ) Բարձրանալու եւ բարձրացնելու նախանձախնդրութիւնը:

*Եւ շմոռնանք, որ առանց անոր՝ գետնաքարշ, տա-
փակ եւ յետամնաց ընկերութեան մը պատկերին կը
սահմանուի Թորգոմայ ազգը:*

*Է) Աստուծոյ եւ հայրենիքի գերազանցութեան
ընթրնումը:*

*Եւ շմոռնանք, որ առանց անոր՝ ուժաքամ եւ դա-
տարկ խուժանի մը կը փոխակերպուի Լուսաւորչի եւ
Վարդանի սերունդը:*

(10 Ապրիլ 1988 Հայրապետական Օրհնութեան Գիր՝ Հ.Մ.Ը.Մ.ի
70-ամեակին առիթով)

*

* *

*Հ.Մ.Ը.Մ.ը կազմակերպութիւն ըլլալէ առաջ ոգի
մըն է, մարդկային եւ ազգային առողջ ու հարազատ
ապրումներու քուրայ մը, որուն մէջէն անցնող երիտա-
սարդն ու երիտասարդուհին կը զգենուն ճշմարիտ
մարդու եւ վաւերական հայու իսկատիպ կերպարը.
դպրոց մը առանց դասարանի եւ գրասեղանի, առանց
դասագրքի ու գրատախտակի, բայց անման ու զար-
գացման՝ կերպարանիչ հնոց մը, ուրկէ անցնող անձը
կը բիրեղանայ, ինչպէս մետաղը, որ կ'անցնի կրա-
կէն: Մանաւանդ արդի ժամանակներուն, երբ այլասե-
րող բարքեր ու մակերեսային, վաղանցուկ ճաշակնե-
րու եւ կենցաղակերպերու երեւոյթներ լուռ ու մունջ,
բայց խորագդեցիկ ներթափանցութեամբ կ'ազդեն
երիտասարդներու կեանքին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի նման
կազմակերպութիւն մը կոչուած է մարդկային կեանքի
բարոյական ու ազգային տոկուն եւ անժամանացելի
սկզբունքներն ու գաղափարները, պարտականութեան
եւ յանձնառութեան պատրաստակամութիւնը, կարգի
ու ներդաշնակ գործունէութեան եղանակները տարա-
ծել մեր երիտասարդ սերունդի զաւակներուն մէջ:*

(Հոկտեմբեր 1993ին, Հ.Մ.Ը.Մ.ի անդամներուն ուղղուած Գիր՝
Միութեան հիմնադրութեան 75ամեակին առիթով):

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԶՕՐԵՂ ՊԱՏԳԱՄԱԽՕՍԸ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԵԱՆՔԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ ալժմու գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ծնած է 1947ին, Պէյրուք: Հոկտեմբեր 1961ին ան կ'ընդունուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, Անթիլիաս: Մայիս 1965ին կը ձեռնադրուի սարկաւագ: Դպրեվանքի ընծայարանի եռամեայ շրջանի աւարտին կը ձեռնադրուի արեղայ՝ Մայիս 1968ին:



Ապա կը պատրաստէ իր վարդապետական թէզը՝ «Մամբրէ Վերածնող Ե. դարու աստուածաբան» նիւթին շուրջ եւ Ապրիլ 1970ին կը ստանայ վարդապետական աստիճան: Մինչեւ 1978 իր բարձրագոյն ուսումը կը շարունակէ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ժեմարանի, Ամերիկեան Համալսարանի (Պէյրուք), Զուիցերիոյ Պոսէ Էքիւմէնիք Հիմնարկին, Օքսֆորտ համալսարանի արեւելագիտութեան բաժնին եւ Նիւ Եորքի Տորտհամ համալսարաններուն մէջ, արժանանալով Պսակաւոր Արուեստից (BD) Մագիստրոս Աստուածաբանութեան (M.Div.), Մագիստրոս Մերձաւոր Արեւելքի եկեղեցական պատմութեան (S.T.M.) եւ դոկտոր փիլիսոփայութեան (Ph. D.) տիտղոսներուն:

Հոկտեմբեր 1978ին, տակաւին ուսանող Միացեալ Նահանգներու մէջ, կ'ընտրուի Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդական

Տեղապահ: Տարի մը ծառայել է ետք, կ'ընտրուի Առաջնորդ: Մայիս 1980ին կը ստանայ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան եւ յաջորդ օրն իսկ կը ձեռնադրուի Եպիսկոպոս: Յունուար 1985ին, Արամ Եպիսկոպոս կը ստանայ Արքութեան տիտղոս: 28 Յունիս 1995ին, ան կ'ընտրուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս:

Արամ Ա. Կաթողիկոսի եկեղեցական կեանքին մէջ կարեւոր տեղ կը գրաւեն միջ-եկեղեցական էքիմենիք յարաբերութիւնները: Ան գործօն մասնակցութիւն կը բերէ էքիմենիք շարժումին միջազգային համագումարներուն՝ ներկայացնելով Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: 1970էն սկսեալ ան իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (World Council of Churches) զանազան բաժանմունքներու աշխատանքներուն: 1983ին կ'ընտրուի Ե.Հ.Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան անդամ: Իսկ 1991ին, Աւստրալիոյ համաժողովին, ան կ'ընտրուի Կեդրոնական եւ Գործադիր վարչութեանց ատենակապետ՝ եօթը տարուան համար: 1998-ին կը վերընտրուի Ե.Հ. Խորհուրդի պատմութեան մէջ աննախընթաց որոշումով մը:

Միջազգային մեծ հեղինակութիւն վայելող կղերականի իր հանգամանքով, Արամ Ա. կը դասախօսէ աշխարհի զանազան համալսարաններու եւ միջ-եկեղեցական սեմինարներու մէջ: Ան պաշտօնական այցելութիւններ կու տայ եկեղեցական եւ քաղաքական բազմաթիւ անձնատրութիւններու, անոնց հետ միշտ արծարծելով հայ ժողովուրդի, Հայաստանի եւ Արցախի անժամանցելի իրաւունքները:

Արամ Ա. արժանացած է միջազգային պատուոյ տիտղոսներու: Իր կենսագրութիւնը կ'երեւի միջազգային զանազան հրատարակութեանց եւ հանրագիտարաններուն մէջ, իբրեւ աստուածաբանական եւ միջ-եկեղեցական համաշխարհային ղեկավար դէմք: Ան հեղինակն է տասնեակ մը ուսումնասիրական հատորներու (հայերէն, ֆրանսերէն եւ անգլերէն), որոնցմէ մաս մը լոյս ընծայուած են միջազգային հրատարակչատուներու կողմէ:

Որպէս կաթողիկոս Արամ Վեհափառը նոր ծաւալ ու ընթացք կու տայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքին ու առաքելութեան՝ վարչական, տնտեսական, շինարարական, յարաբերական, դաստիարակչական, մշակութային եւ այլ բազմաթիւ կալուածներէն ներս:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱՐԱՄ Ա.

Շատեր գրած են Հ.Մ.Ը.Մ.ի մասին. սակայն քիչեր այնքան հարազատօրէն բնութագրած են անոր բազմերես եւ բազմախորհուրդ պատգամները:

Արամ Ա. Հ.Մ.Ը.Մ.ը ճանչցաւ գիտնականի խորաթափանցութեամբ եւ մտաւորականի նորրբ զգայնութեամբ, նոր աիշ, վերածաղկում ու թարմութիւն բերելով Հ.Մ.Ը.Մ.ի արդի գրականութեան:

Արամ Ա. Հ.Մ.Ը.Մ.ի խանդավառ ու մրրկաշունչ պատգամախօսն է: Կը հրահրէ, կը բոցավառէ, կը հրդեհէ հոգիները՝ սրտերը լեցնելով մեծ խանդավառութեամբ եւ արդար հպարտութեամբ: Իր մտածումները սովորական իմաստով պարզ հաստատումներ չեն, այլ սրտի ընդերքներէն բխած եւ հաւատքով արտասանուած անժամանցելի պատգամներ են, որոնք լուրջ խորհրդածութեան արժանի են ամէն հայու կողմէ:

Վեհափառը միշտ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի հետ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ տեսաւ արժէք: Հ.Մ.Ը.Մ.ին իր գնահատանքը ո՛չ միայն խօսքի ճամբով յայտնեց, այլեւ գործնական միջոցներով աստարեց անոր ծաղկման եւ բարգաւաճման:

1995ին իբրեւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ, Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն իր ցուցաբերած լայն աջակցութեան եւ գուրգուրանքին համար, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը զինք պատուեց Հ.Մ.Ը.Մ.ի Յատուկ Պատուանշանով:

Իր հոգեւոր կեանքի երկար տարիներուն, Արամ Ա. Հայ եկեղեցւոյ ծառայութեան տարբեր աստիճաններով հանդիսապետեց Հ.Մ.Ը.Մ.ի բազմաթիւ ձեռնարկներուն՝ ողջոյնի իր սրտի խօսքը փոխանցելով Հ.Մ.Ը.Մ.ական թէ համակիր շարքերուն:

Ստորեւ կու տանք քաղուածքներ Հ.Մ.Ը.Մ.ի մասին Վեհափառ Հօր պատգամներէն, որոնք արտասանուած են պաշտօնական զանազան հանդիսութիւններու ընթացքին:

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ ու մնաց, բառին ճշմարտագոյն առումով, բարձրացող ու բարձրացնող ներկայութիւն մը սփիւռքահայ կեանքին մէջ:

Չեղաւ ան սոսկ միութիւն, այլ՝

Դպրոց՝ մարդակերտումի ու հայակերտումի իր ծրագրով.

Առաքելութիւն՝ իր վեհ սկզբունքներով ու ազըր-
ւագոյն իտէալներով.

Հայրենիք՝ իր ազգայնաշունչ մթնոլորտով, իր
ազատութեան դրօշով, իր հայրենական չպատգամով:

Ուր որ գնաց այլափոխող ու գունաթափող Սփիւռ-
քին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը մնաց առողջ ու կանգուն իր մթնո-
լորտով, իր ինքնութեամբ, իր առաքելութեամբ՝ միշտ
հաւատարիմ՝ իր արմատներուն, իր ակունքներուն, իր
ձգտումներուն:

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ հաւատարիմ զինք ծնող ժողո-
վորդին: Ուր որ գնաց, ինչ որ ըրաւ, հայութիւնը
առաջնահերթ նկատեց, հայութեան ընդհանրական
իտէալները ամէն բանէ վե՛ր նկատեց: Հայութեան
հաւաքական կեանքը եղաւ իր կեանքին ու գործունէու-
թեան ենթահողն ու շրջագիծը: Ինքզինք չպարփակեց
մարզական աշխարհին մէջ: Նա՛եւ իր գործօն մաս-
նակցութիւնը բերաւ իր ժողովորդի տագնապներուն
ու ձգտումներուն:


Ահա թէ ինչու Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ մեր ժողովորդի
արտի՛ն մէջ տեղ գրաւած միութիւն մը: Ու հո՛ւ կը կա-
յանայ Հ.Մ.Ը.Մ.ի որակը, ուժն ու վարկը:

(Արտասանուած 19 Մարտ 1984-ին)

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը կազմակերպութիւն չէ՛: Հ.Մ.Ը.Մ.ը կա-
րելի չէ կանոնագրութեամբ, կառոյցով հասկնալ,
ընմբռնել եւ բացատրել: Այս բոլորէն առաջ եւ այս բո-
լորէն վեր Հ.Մ.Ը.Մ.ը ոգի՛ է, խորհուրդ է, պատգամ է.
բիրեղ հայութիւն է, որ կը թափանցէ մեր ժողովորդի
կեանքէն ներս:



*
* *

...Հ.Մ.Ը.Մ.ին մէջ ըլլալ՝ կը նշանակէ հայոց պատմութեան մէջ ըլլալ, հայոց պատմութիւնը ապրի՛լ, հայոց պատմութիւն կերտել:

Հ.Մ.Ը.Մ.ին մէջ ըլլալ՝ կը նշանակէ հայութեան մէջ ըլլալ, հայ եկեղեցւոյ կամարներուն տակ ըլլալ, հայ ուսուցիչին դիմաց ըլլալ, Ղեւոնդին խաչակից ու Վարդանին զինակից դառնալ:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ըլլալ՝ կը նշանակէ Հայաստանի՛ հողին վրայ ըլլալ՝ Սփիւռքի ապահայացնող տխուր ու սոսկալից պայմաններուն մէջ:

(Արտասանուած՝ 19 Մարտ 1989-ին):

*
* *

Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ կեանքը բարձունք մը նուաճելու յարատեւ ճիգ եղաւ, եւ այդ բարձունքը Հ.Մ.Ը.Մ.ին համար ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ ամբողջական Հայաստան ամբողջական հայութեամբ:

... Հ.Մ.Ը.Մ.ը օրականական իմաստով ու արտաքին բնոյթով մարմնամարզական կառոյց է. սակայն ազգային-գաղափարախօսական իր նստուածքով՝ շահ՛տ աւելին է: Ան համակ ծառայութիւն՝ բառին վաւերական առումով:

Համաշխարհային չափանիշով երիտասարդական ուժեղ ՇԱՐԺՈ՛ՒՄ է Հ.Մ.Ը.Մ.-ը: Ո՞վ չէ լսած իր մասին:

Գլխազիր մարդը մարդուն մէջ կերտելու կոչուած ԳՊՐՈ՛Յ է Հ.Մ.Ը.Մ.ը: Ո՞վ չէ հպարտացած Հ.Մ.Ը.Մ.-ով:

Հայը աւելի՛ հայ դարձնելու կոչուած մեր արժէքներուն, մեր աւանդութիւններուն ու սրբութիւններուն

հնո՛ցն է Հ.Մ.Ը.Մ.-ը: Ո՞վ հայօրէն չէ հարստացած
իրմով:

Եւ աւելի՛ն՝

Մնայուն պայքա՛ր է, յանձնառու առաքելութի՛ւն ու
գերագոյն ինքնազոհութի՛ւն է Հ.Մ.Ը.Մ.-ը՝ մի՛շտ
պատրաստ ինքզինք քլլալու ու ինքզինք ամբողջա-
կա՛նօրէն իրագործելու մարդկային վեհ արժէքներու
եւ մեր ժողովուրդի ձգտումներուն ու «անկատար տե՛ն-
չեր»ուն համար:

*

**

Դուք, սիրելի՛ պատանհներ, երիտասարդներ ու
երիտասարդուհիներ, հո՛ն, դաշտին վրայ, սոսկ
Հ.Մ.Ը.Մ. չէք: Դուք կը մարմնաւորէք հայութիւնը՝ իր
ամբողջ երգերով ու վերքերով, մաքառումներով ու
երազներով, իր անցեալով ու ներկայով ու մա՛նա-
ւանդ՝ իր լուսաշող ապագայով:

... Ձեզմո՛ւ վ է որ հայութիւնը կանաչ է՝ ծլարձակող
ծառի մը նման: Ձեզմո՛ւ վ է որ հայութիւնը լուսաւոր է՝
ճառագայթող արեւի մը նման:

Դուք մեր լո՛յսն էք անմար՝ կեանքի խաւարին դի-
մաց: Դուք մեր բոնցքացած կա՛մքն էք՝ անարդարու-
թեան դիմաց: Դուք մեր պայքարի կրակն էք՝ պար-
տուողականութեան դիմաց: Դուք մեր աչքն էք յուսա-
վառ՝ ապագային բացուած:

Դուք այսօր խտացած վկայութիւն էք ու կ'ըսէք մե-
զի եւ աշխարհին, թէ հայութիւնը անցեա՛լ չէ, պատ-
մութի՛ւն չէ, այլ իր ապագան կերտելու յանձնառու-
թեամբ ապրող ու պայքարող ազգ:

Դուք այսօր խտացած հաւատք էք ու կ'ըսէք մեզի
ու աշխարհին, թէ հակառակ մեր դառն ճակատագ-
րին, հակառակ մահուան ու քանդումին, հայութիւնը

վերածնեա՛լ ազգ է, մահէն կեա՛նք կերտած յարութեան ժողովուրդ:

... Դուք մեզի համար խտացած տեսիլք էք. ձեզմով մենք կը նայինք մեր ժողովուրդի լուսապայծառ ապագային՝ յուսավառ աչքերով. ձեզմո՛վ մենք կը քալենք դէպի մեր ժողովուրդի ապագան՝ հաստատ քայլերով:

(Արտասանուած՝ 28 Մայիս 1988ին):

*

* *

Ո՞վ չի ճանչնար Հ.Մ.Ը.Մ.ը, մա՛նաւանդ՝ ո՞վ չի սիրեր Հ.Մ.Ը.Մ.ը: Այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի կեանքին մէջ. յարգելի ու, սիրելի կազմակերպութիւն ասէ՛ն տեղ եւ ասէ՛ն ո՛ն կողմէ, Հ.Մ.Ը.Մ.ականին եւ ոչ-Հ.Մ.Ը.Մ.ականին կողմէ, հեռաւորին թէ մօտաւորին կողմէ:

Ուր որ գացած է Հ.Մ.Ը.Մ.ը, մեր ժողովուրդի կեանքին մէջ եղած է իրական ներկայութիւն, ո՛չ պատահական, ո՛չ լուսանցքային, այլ՝ ծրագրուած, իրական եւ ամբողջական ներկայութիւն:

*

* *

Մենք Հ.Մ.Ը.Մ.ը սիրեցինք նոյնի՛սկ իր պարտութեան մէջ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մեզի համար դաշտին վրայ երեւցող մարզիկներու խումբը չեղաւ: Այն ինչ որ մեր ժողովուրդին մէջ անհուն բարութեան, վաւերական գեղեցկութեան, յաւերժական արժէքներու եւ դարաւոր երազներու համագօր էր, մենք այդ մէկը տեսանք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:



Արամ Ա. Կ'օրհնէ համաՀ.Մ.Ը.Մ.-ական ճրղ մարպախաղերու շախը

*

**

Մեր ծնողները իրենց զաւակները յանձնեցին Հ.Մ.Ը.Մ.ին, որպէս դպրոց՝ հոն իրենց հայութիւնը վեհ իտէալներով ու ազգային արժէքներով կոանելու: Հ.Մ.Ը.Մ.ը ո՛չ միայն դարձաւ հայ դպրոց, այլ նաեւ մեր հոգեւոր ու բարոյական արժէքներուն պաշտպան: Հ.Մ.Ը.Մ.ը միշտ հաւատաց կրօնական ու հայեցի դաստիարակութեան կենսական կարեւորութեան: Ան մասնակից դարձաւ մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդման պայքարին: Ան հաւատաց ու իր գործօն մասնակցութիւնը բերաւ Ղարաբաղի անկախութեան ու Հայաստանի հզօրացման սրբազան գործին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՇԱԽԱՐՇ Ա. ՔՀՆՅ. ՄԵՀՐԱՊԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Շաւարշ Աւագ Քահանայ Մեհրապեան, (աւագանի անունով՝ Համագասպ) ծնած է 1905ին, Բարձր Հայքի Դերջան գաւառի Դընիկ գիւղը: Ան իր քահանայ հօր եւ երկու քոյրերուն հետ 1913ին կ'անցնի Պոլիս, իսկ 1914ին՝ Կիլիկիա: Ֆետրընաքի հերոսամարտէն ետք, իր հօր՝ Տէր Եղիշէ քահանային հետ կը բռնէ աքսորի ճամբան, Հալէպէն Ղաթմա, Ռաս Իլ Այն եւ Մուսուլ, օրհասական երեք տարիներու ողիսական մը ապրելով: Ռաս Իլ Այնի մէջ, Տէր Եղիշէ կը վարէ տարագիր 30 հազար հայերու հոգեւոր հովուութիւնը:



1918ին, անգլիական բանակին Մուսուլ մուտքէն ետք, Համագասպ աքսորի բազմահարիւր վիրաւորներու հետ կը հիւրընկալուի հիւանդանոցի մը մէջ, ուր ենթակայ կը դառնայ ոտքը կորսնցնելու վտանգին: Յանդգնութիւնը կ'ունենայ սակայն փախչելու հիւանդանոցէն եւ անցնելու Հալէպ, ուր քանի մը ամիս կը մնայ Սապուն Խանի որբանոցը:

Այնուհետև, վիրաւոր ոտքը քաշկոտելով՝ Հալէպէն կը հասնի Պոլիս, ուր Գարակէօզեան որբանոցի եւ Ունճեան-Արամեան Բարձրագոյնի մէջ կ'աշակերտէ Յակոբ Օշականի (գրականութեան ուսուցիչ) եւ Շաւարշ Քրիսեանի սաներէն՝ Սուրէն Փափախեանի (մարզանքի ուսուցիչ):

Որբանոցի հայաշունչ մթնոլորտին մէջ մեծցող պատանի Համազասպ կը նետուի սկստութեան եւ մարզական դասընթացքներու (ֆութպոլ, լող, աթլետիկ): Հակառակ իր վնասուած ոտքին, ան յամառօրէն կը լծուի փորձերու եւ որբանոցին ախոյեանը կը դառնայ բարձրութիւն ցատկելու, մէկ քայլ եւ երեք քայլ ոստումի մարզաձեւերուն մէջ:

Թորքիոյ մէջ Քեմալական շարժումի յաջողութենէն եւ Փոքր Ասիոյ աղէտէն ետք, 1922ին, կը փոխադրուի Յունաստան, Գորֆու, Սիրա կղզիներ եւ ապա՝ Գաւալայի եւ Տրամայի որբանոցները: Ուր որ կը գտնուի, կը հիմնէ մարզական-սկստութեան խումբեր: Ի վերջոյ, Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի հաշուեյարդարին բերումով, Թրակիոյ եւ Մակեդոնիոյ կարգ մը գիւղերը շրջելէ ետք, կը հաստատուի Թեսաղոնիկէ, ուր 1928ին կը կազմէ իր ընտանեկան բոյնը եւ կը բախտատարուի երկու աղջիկով եւ մէկ մանչով:

Աթէնքի մէջ, Համազասպ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն կը միանայ իբրեւ մարզիկ եւ վարչական պատասխանատու: Ծուռով, Գէորգ Յաբէթեանի եւ Դանիէլ Դանիէլեանի հետ ան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի կարկառուն ղեմներէն:

Երկրորդ Աշխարհամարտէն ետք (1939-1945), իբրեւ Յունաստանի Երջանային Վարչութեան անդամ, մեծ եռանդով կը լծուի Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը վերակազմակերպելու եւ մարզական կեանքը վերակենդանացնելու աշխատանքին:

Սկզբնական շրջանին մասնւոյ աշխատաւոր, հետագային «Քոտաք» լուսանկարչական ընկերութեան արուեստին տիրանալով, Համազասպ Աթէնքի մէջ կ'ունենայ իր սեփական խանութը, ուր կը գործէ մինչեւ 1949, երբ կ'ընդունի քահանայական ծառայութիւն կատարել ներգաղթի հետեւանքով առանց հոգեւոր հովիւի մնացած Աթէնքի հօտին:

Յունաստանի թեմակալ առաջնորդ Մազլըմեան Սրբազանի ձեռամբ այդ տարուան Հոգեգալուստին քահանայական կոչում կը ստանայ Գործիհոյ Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, կնքահայրութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Երջանային Վարչութեան: Իբր գնահա-

տանք իր գործունեութեան, ան կ'անուանուի **Տ. Ծարար**, վերապրեցնելու համար յիշատակը հայ մարմնակրթականի ոահվիրայ **Ծարար Քրիսեանի**:

Իր օրով կը ծագի հիւսիսային Յունաստանի եւ կղզիներու հայութեան հովուելու պատասխանատու պաշտօնը, զոր ան կը կատարէ ձեռնհասութեամբ:

1951ին, հարաւային ամերիկահայոց Հայրապետական Պատուիրակ Գարեգին Սրբազան Խաչատուրեանի հրաւերով կը մեկնի Պուէնոս Այրէս, ուր մինչեւ իր յառաջացեալ տարիքը կը ստանձնէ տեղւոյն **Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր**

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւի պաշտօնը: Իր հոգեւոր ծառայութիւնը երկու առիթով կը գնահատուի Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհափառին կողմէ, որ սրբատառ կոնդակներով՝ 1972ին Տէր Ծարարը քահանային կը շնորհէ լանջախաչ կրելու իրաւունք, իսկ 1977ին՝ Աւագութեան տիտղոս:

Հակառակ քահանայական իր ծառայութեան **Տ. Ծարար Արժանթինի** մայրաքաղաքին մէջ երկար տարիներ կը շարունակէ միութենական իր գործունեութիւնը: Ան իր շուրջ կը համախմբէ այլ գաղութներէ եկած Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ կը ձեռնարկէ սկստական շարքեր կազմակերպելու աշխատանքին: Միեւնոյն ժամանակ ան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի հոգեւոր հովիւը:

1985ին, Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութիւնը, գնահատելով Քահանայ Հօր բազմամեայ օգտաշատ գործունեութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս, իբրեւ մարզիկ, պատասխանատու եւ վարչական, զինք պարգեւատրեց Հ.Մ.Ը.Մ.ի արժանեաց ոսկի շքանշանով:

Ծարարը Աւագ Քահանայ վախճանեցաւ 4 Սեպտեմբեր 1995ին, Պուէնոս Այրէս, Հ.Մ.Ը.Մ.ի եւ եկեղեցւոյ ճամբով հայութեան ծառայութեան բեղուն անցեալ մը ձգելով իր ետին: Այդ անցեալը սակայն չսահմանափակուեցաւ միայն գործնական եւ



բանաւոր սահմաններու մէջ, այլ ընդգրկեց նաեւ գրաւորը: Ան նորահաս սերունդին կտակեց խմբագրական պատկառելի վաստակ մը, որ 1924էն մինչեւ իր ծերունագարդ տարիքը հանդէս եկաւ «Ալիք», «Հորիզոն» (Թեսաղոնիկէ), «Նոր Օր», «Ազատ Օր» (Աթէնք), «Արմենիա», «Նաւասարդ» (Պուէնոս Այլէս), «Արեւելք-մարգաշխարհ» (Հալէպ) թերթերու էջերուն: Առանց մոռնալու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պաշտօնաթերթ «Մարգիկ»ը, որուն հրատարակութենէն ետք տարիներ շարունակ (1980-1990) ան դարձաւ անոր հաւատարիմ աշխատակիցներէն՝ գրելով յուշագրական արժէքաւոր յօդուածներ:

Իր խմբագրութեամբ հրատարակուած են «Մարմնամարզ» ամսագիրը, «Սկաուտին ալպոմը» (Աթէնք), «Նաւասարդ» եւ «Արիական հունձք» թերթերը (Պուէնոս Այլէս):

1987ին երկու հատորով լոյս ընծայեց Եղեռնէն ճողոպրածի իր յուշերը՝ «Մեծ Եղեռն հայոց» անունով: Ունի կրօնական, գրական եւ ազգային բովանդակութեամբ անտիպ բազմաթիւ գործեր, որոնց շարքին մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ականի իր յուշերը (1918-1985) ներկայացնող՝ «Յուշեր եւ ապրումներ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան օրերէն»:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՒ ՔՈՅՐԵՐ,

Իրրեւ ԿՏԱԿ՝ ահա կ'արձանագրեմ ու կը պատգամեմ, որ դուք ալ ինձի պէս գործէք աննահանջ եւ անդու: Երբե՛ք, երբե՛ք եւ երբե՛ք չունենաք դեղեւում, տարակոյս, յուսահատութիւն եւ նահանջ: Զեզի վստահած Զահր զարդարուած Ազգային Եռագոյն Դրօշով, ցուցադրեցէք ի սփիւոս աշխարհի ցրուած մեր բեկորներուն, որպէսզի իրականացուին Երկրէն անմտրազ մեկնողներուն երազները, հասնինք Արարատի գագաթը, կոթողելով լոյսը սփռէք եւ դէպի հոն առաջնորդէք Ուխտեալ սերունդները:

*

**

Հայութեան կամքին խորհրդանիշ կազմակերպութիւնն է անկկա՝ Հ.Մ.Ը.Մ.ը, որուն գլխաւոր հիմնադիրը՝ նահատակ Ծաւարշ Բրիսեանը պատգամեց.-

Հաւատքի գործ է անիկա:

Զայն ճանչնալու համար իրաքանչիւր հայ թող իր մտքին դիմաց պատկերացնէ մեր կենսունակութեան խորհրդանիշ եւ համագոյն գուրգուրանքի արժանի կազմակերպութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան չորս բառերու իրաքանչիւրին իմաստը.-

ՀԱՅ.- Ասպետական ցեղն է անիկա, որուն անունն «Արի»ն, քաջ մարդն է, «Արմէն» հոլովումով: Հայը մարդկային պատմութեան մէջ յայտնաբերած իր արի գործերու բերումով տիրացաւ այս տիտղոսին եւ անով կոչուեցաւ ՀԱՅ:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ.- Ցեղին Մարմինն է անիկա, իր ամբողջական կազմութեամբ, մարմինը, որուն ներդաշնակութեան եւ կազմաւորման համար միտքն ու հոգին սերտ գործակցութեամբ կը ձեւաւորեն, կը դաստիարակեն ու կը կրթեն, անձը դարձնելու համար կազմուածքով, տեսքով եւ էութեամբ վայելուչ, հմայիչ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ.- Համայն հայութեանն է, ոչ մէկուն սեփականութիւնն է անիկա, ոչ սեփն ու ճերմակին եւ ոչ ալ կարմիրին ու կապոյտին, ոչ առաքելականին եւ ոչ ալ կաթողիկէին ու աւետարանականին, այլ բառին ամբողջական առումով՝ Ընդհանուրին:

ՄԻՈՒԹԻՒՆ.- Բովանդակ հայութեան արտայայտութիւնն է անիկա, միացած հոգւով ու սրտով, ապրումով եւ գործով, սիրով, եղբայրութեան նուիրական ուխտով զրահուած, կազմակերպութեան շունչով սնանող, անոր գուրգուրանքով ու խնամքով աճող, ծլող-ծաղկող Միութիւն:

ՇԱԻԱՐԾ ՔԶՆՅ. ՄԵՀՐԱՊԵԱՆ

Հ.Մ.Ղ.Մ. ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ, ԱՊԱ ՎԱՐՉԱՊԵՏ
ԱԼԵԲՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 17 Փետրուար 1874ին, Թիֆլիսի մէջ: Հայրը եղած է պետական պաշտօնեայ եւ յարգուած անձնատրութիւն՝ հայ եւ օտար շրջանակներէն: Մայրը՝ գրասէր, հասարակական ջիղի տէր հայուհի: Գրած է վէպեր Մարիսեան ծածկանունով: Մեծ եղբայրը՝ Կոստանդին, Թիֆլիսի յայտնի դեկավարներէն: Այսքանը լիովին բաւական է, հասկնալու համար, թէ ինչ աղբիւրներէ ստացած է ան իր մարմնատր ու հոգեկան սնունդը եւ ինչպէս կազմաւորուած է անոր բարոյական նկարագիրը: Աւարտելով Թիֆլիսի պետական Գիմնազիան, ան բժշկական կրթութիւն կը ստանայ Մոսկուայի եւ Խարքովի համալսարաններուն մէջ. ապա մասնագիտութիւնը կը զարգացնէ Գերմանիոյ մէջ եւ Թիֆլիս վերադառնալով՝ կը նուիրուի բժշկութեան:



Բժշկական ասպարէզը նեղ էր Խատիսեանի խառնուածքը ունեցող անհատի մը համար. ան բնածին հասարակական գործիչ էր՝ բարձր թոնջքներով եւ բազմութիւնները վարելու ձգտումներով: Պերճախօս հոնտոր, բազմազան հետաքրքրութիւններ ու ծրագիրներ հետապնդող, արտասովոր կերպով աշխատունակ, դիրահաղորդ եւ ամէնուն մատչելի, ազնիւ նկարագրի տէր՝ Խա-

տիսեանը ստեղծուած էր հասարակական-քաղաքական գործունէութեան համար: Եւ զարմանալի չէ, որ ան շուտով կը լքէ այնպէս փայլուն կերպով սկսուած բժշկական ասպարէզը եւ ամբողջապէս կը նուիրուի հասարակական գործունէութեան:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

1902ին Խատիսեան կ'ընտրուի Թիֆլիսի քաղաքային խորհուրդի անդամ: 1909էն մինչեւ 1917՝ Թիֆլիսի քաղաքապետ կ'ըլլայ: 1914-1917՝ Կովկասեան 44 քաղաքներու միութեան նախագահ: Ազդեցիկ եւ յարգուած դէմք՝ նաեւ պետական շրջանակներու մէջ, մանաւանդ փոխ արքայ Վորոնցով-Դաշկովի օրով: Սիրուած ժողովրդական դասախօս էր: Յօդուածներ կը գրէր թերթերու մէջ: Կը հրատարակէ զանազան գրքոյկներ հանրային առողջապահութեան, տեղական ինքնավարութեան, տնտեսական ու մշակութային հարցերու մասին: Թարգմանութիւններ կ'ընէ հայ գրականութենէն:

Ինչքան համակովկասեան, նոյնքան եւ հայ կեանքի մէջ Խատիսեան կը բերէ լայն ու գործօն մասնակցութիւն: Հայ-թաթարական կոնիներու ընթացքին կ'օգնէ ինքնապաշտպանութեան գործին եւ վճռական դեր կը կատարէ կոնիներուն վերջ տալու հարցին մէջ: Երբ ցարական Ռուսիան կը սկսի հալածել Դաշակցութիւնը, Խատիսեան ոգի ի բոին կ'աշխատի թերթեցնելու ձերբակալուածներու վիճակը: Առհասարակ, անհրաւուածներու պաշտպան էր ան կառավարութեան մօտ:

Անդամ էր եւ փոխ նախագահ Ազգային Բիւրոյի եւ կամաւորական գունդերու կազմութեան նախաձեռնողներէն մէկը: Իբրեւ քաղաքներու միութեան նախագահ՝ անգնահատելի կ'ըլլայ անոր դերը պատերազմէն փրկուած հայ գաղթականներու խնամատարութեան գործին մէջ:

Ցարական վարչաձեռի խորտակումէն ետք, Խատիսեան ամբողջ էութեամբ կը նետուի հայ ազգային գործունէութեան մէջ: 1917-1918 կը դառնայ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: Անդրկովկասի անջատումէն ետք՝ ՍԷՅՄի անդամ: 1918 Փետրուարին՝ Տրապիզոնի եւ Մայիսին՝ Պարթմի հաշտարար պատուիրակութիւններու անդամ: Հայաստանի անկախութենէն ետք, «Բաջազնունիի հետ կը ստորագրէ հաշտութեան դաշնագիրը՝ թորքերու հետ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Ընդհանուր զինադադարէն ետք, Խատիսեան կը վերադառնայ Հայաստան եւ կը ստանձնէ արտաքին գործոց նախարարի պաշտօնը: 1919 Փետրուարէն 1920 Մայիս կը վարէ Հայաստանի վարչապետութիւնը: Յունիս 1920ին կառավարութեան կողմէ կ'ուղարկուի արտասահման, փոխառութեան ու Ոսկիի Ֆոնտի կազմակերպման համար: Կ'այցելէ Պոլիս, Եգիպտոս, Ֆրանսա, Անգլիա, Պելճիքա, Յունաստան, Ռումանիա, Պուլկարիա եւ Եուկուաիա:

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Խատիսեան կ'անցնի Փարիզ եւ կը շարունակէ քաղաքական իր գործունէութիւնը, որպէս Հ.Հ. պատուիրակութեան անդամ: Կ'աշխատակցի հայ մամուլին եւ լոյս կ'ընծայէ «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» արժէքատր հատորը: Իր աչքերը վերջնականապէս կը փակէ 10 Մարտ 1945ին, Փարիզի մէջ:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԽԱՏԻՍԵԱՆ

Խատիսեանի կապը Հ.Մ.Ը.Մ.ի հետ կը սկսի Պոլիսէն, երբ ան Հայաստանի Հանրապետութեան կողմէ ուղարկուած էր արտասահման, հայկական բանակին ի նպաստ հանգանակութիւն մը կազմակերպելու համար: Իր առաքելութեան ճամբուն վրայ, Պոլսոյ մէջ, կապ կը հաստատէ Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութեան հետ, անոնց կը պարզէ իր ծրագիրը եւ կը թելադրէ կարելի արագութեամբ պատրաստուիլ եւ երթալ Հայաստան՝ ստանձնելու համար հայ որբուկներու հոգատարութիւնը եւ սկաուտական դաստիարակութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր վարչութեան անդամներէն Տիգրան Խոյեան իր «Նահատակ ցեղի անմահներ» գրքին մէջ այս մասին կը գրէ հետեւեալը.

«...1920 Յուլիս 3ին, Բերայի «Սիլլօղոս» սրահին մէջ սքանչելի բանախօսութիւն մը ըրաւ Ալեքսանդր Խատիսեան: Սրահը կը յորդէր բազմութեամբ. ինչպէս ժողովուրդը կ'ըսէ, այնքան ժողովուրդ կար, որ «ասեղ ձգելիք տեղ չկար»:

«Իր արտայայտութեան մէջ Խատիսեան շատ ուղիղ էր ու անկեղծ: Երբեք չփորձեց ծածկել իրականութիւնը: Սրտբացօրէն պարզեց ամէն նեղութիւն եւ ըսաւ. «Դուք այստեղ ամէն յարմարութիւն ունիք, քան մենք: Համազգեստաւոր նուագախումբ եւ պատշաճօրէն հագուած ու մարզուած փոքրիկ աշխոյժ սկաուտ-գինուորներ»: Ապա անելցուց. «Հայաստան պէտք ունի ամէն տեսակի եւ ամէն աստիճանի օգնութեան: Անոնք, որոնք պիտի երթան հայրենիք, պէտք չէ ակնկալեն ճոխ ու հանգստաւէտ ապրելակերպ: Պիտի երթան միայն նուիրումի զգացումով եւ իրենց գլխաւոր վարձատրութիւնը պիտի ըլլայ՝ Հայաստանի անմասն օղն ու ջուրը վայելել ու նորագատ հայրենիքի վերելքին օգնած ըլլալու զգացումով երջանկանալ»:

Ալեքսանդր Խատիսեանի այցելութենէն 10 օր ետք, երբ նուիրեալներ՝ Չերազ, Խոյեան եւ Եագմանեան կը մեկնին Հայաստան, Հ.Մ.Բ.Մ.ի սկաուտական ազնուական ոգիով պատուաստելու համար հայրենիքի մեր նոր սերունդը:



Վահան՝ մէջտեղը Հայաստան վերադարձող նաւուն վրայ, 26 Յուլիս, 1920

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

« ՍՈՒՐԸ ՉԹՈՂԵՑ ՈՐ ԵՐԳԻՉ ԴԱՌՆԱՄ,
ԵՐԳԸ ՉԹՈՂԵՑ ՈՐ ՄԱՐՏԻԿ ԴԱՌՆԱՄ »

Ծնած է 24 Մարտ 1875ին,
Թիֆլիս: Յանախած է Թիֆլիսի
Ներսիսեան վարժարանը,
ապա՝ Էջմիածինի Գեորգեան
ճեմարանը՝ երկու տարի,
Մոսկուայի համալսարանը՝
մէկ տարի եւ Լոզանի համալսարանը՝
մէկ տարի:

Զբաղումը եղած է ուսուցչութիւնը:

Ան առաւելաբար յայտնի է
իբրեւ հանրային-քաղաքական
ու պետական գործիչ, հրապարակախօս,
գրականագէտ,
հռետոր, եւայլն:

Աշխատակցած է բազմաթիւ
թերթերու:

Հանրային պետական
պաշտօններուն մէջ եղած է անդամ՝ Ազգային Բիւրոյի եւ Կամա-
տորական խումբերու Կարգադրիչ Մարմնի: Անդամ՝ Հայաստանի
Խորհրդարանին: Հայաստանի Հանրապետութեան Կրթական
նախարար, նախագահ՝ Կարսի Մայիսեան ապստամբութիւնը
Վերաքննող Մարմնի, Շարորի ցանքերու բաշխման եւ օգտագործման
Վարիչ:



Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Ադրբայեան կը բանտարկուի 1921 Փետրուար 9էն մինչեւ 18 եւ կ'ազատի ժողովրդային ապստամբութեան շնորհիւ: Նոյն տարուան Ապրիլին կը բռնէ տարագրութեան ճամբան: Նախ՝ կ'ապրի Թեհրանի մէջ, ապա՝ Եգիպտոս եւ վերջապէս կը հաստատուի Լիբանան: Լեւոն Ծանթի եւ Համօ Օհանջանեանի հետ հիմը կը դնէ Պէյրութի Համազգայինի ճեմարանին:

Գրադատ, Սաշաթ-Նովայագէտ, պատմաբան, բանասէր, լեզուաբան, յեղափոխական, գաղափարախօս եւ բազմապիսի այլ շնորհներով օժտուած մեծ հայը իր աչքերը կը փակէ 15 Օգոստոս 1947ին:

ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ

Ադրբայեան պայծառ իմացականութեան հրաշալի ժայթք մըն էր: Եթէ չկրցաւ իր ուժերը հունաւորել որոշ ուղղութեամբ, յանցաւորը միայն իր խառնուածքը չէր, այլ՝ հայ կեանքի փոթորկալից այն ժամանակաշրջանը, ուր ապրեցաւ եւ գործեց ինք: «Յեղափոխական շարժումը դուրս հանեց ինձ իմ ալօսից», կը գրէ Ադրբայեան Հայոց Գրականութեան Պատմութեան նուիրուած իր յառաջաբանին մէջ, եւ կ'աւելցնէ. «Սուրը չթողեց որ երգիչ դառնամ, երգը չթողեց որ մարտիկ դառնամ»:

Պարկեշտ մտաւորական մըն էր Ադրբայեան: Գրուած էջի մը հանդէպ իր յարգանքը գրեթէ երկիւղած պաշտամունքի կը հասնէր: «Խօսքը կը թռչի, բայց գիրը կը մնայ,- կ'ըսէր ան իր աշակերտներուն,- եւ ինչ որ կը մնայ, պէտք է կատարելութեան ձգտի»: Հոս պէտք է փնտռել գաղտնիքը իր գրի ժլատութեան եւ բանի շոայլութեան: Ծատ աւելի դիրտութեամբ յանձն կ'առնէր տասը դասախօսութիւն տալ, քան տասը էջ բան գրել: Եւ ի՛նչ աննման դասախօս էր ան, հայ բեմին անգուգական ոսկեբերանը: Միշտ կշռուած, միշտ լուրջ, միշտ իմաստալից եւ ինքնատիպ: Հռետոր չէր՝ ամբոխավարութեան իմաստով. բայց գիտէր ամբոխներ գրաւել իր խօսքին ու շեշտին սրտայոյզ անկեղծութեամբը: Կ'ուսուցանէր, կը դաստիարակէր ու նոյն ատեն կը ներշնչէր:

ՔՆՆԱԴԱՏԸ

Աղբալեան, իբրև կրթական մշակ, դասախօս, խօսակից, ժողովրդական եւ կեանքի ուղեոր՝ կենդանի խօսքով եւ ներշնչումներով կատարեց այն դերը, որ կը պահանջուի քննադատել մը: Ան լրի գիտակցութիւնը ունէր քննադատի բարձր կոչումին:

Չէ պատահած, որ Աղբալեան յօդուածով կամ դասախօսութեամբ հրապարակ գայ եւ կարծիք ձեւակերպել երկի մը մասին, առանց այդ երկը բազում անգամներ կարդալու:

Նոր լոյս տեսած հատորի մը առթիւ իրեն եղած հարցումներուն մէկ պատասխան ունէր. «*Դեռ մոր ձեռքս առի, բարձիս տակն է, կրկին պէտք է կարդալ, միթիւն ծանօթացայ. այժմ պէտք է խորքին եւ կառուցումին հասնիլ*»:

ՄԵԾ ՀԱՅԸ

Աղբալեան մեծ մտաւորական մը ըլլալով հանդերձ, ՄԵԾ ՀԱՅ մըն էր նոյն առեւ: Ան իր անձին մէջ կը խտացներ այն բոլորը, ինչ որ կը պահանջուի Մեծ Հայէ մը: Թերեւս իրմէ անլի հմուտներ եւ զարգացածներ կան՝ իբրև հայագէտ, իրմէ մեծ ճարտասաններ կամ քննադատներ եղած են հաւանաբար, ու պիտի ըլլան: Իրենց կեանքի եւ արեւան գնով հայրենիքի փառքին համար նահատակուածներ շատ ունինք: Բայց Նիկոլ Աղբալեան ա՛յն դէմքն էր, որ մանկութենէն մինչեւ իր խոր ծերութիւնը ապրեցաւ, զգաց ու գործեց իր ազգով բարձրանալու, իր ազգը բարձրացնելու եւ իր ազգին ծառայելու անսպառ ներշնչումով:

Շրջուն հայրենիք էր ինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՅՄԱՆ ՏԵՍԱԲԱՆԸ

Աղբալեան, կարելի է ըսել, առաջինն էր, որ որոշ ու կտրուկ կերպով դրաւ Հայաստանը հայացնելու պահանջը: Ան յաճախ ժամերով կը նստէր Ազգային Խորհուրդի գրասենեակին մէջ, զինուորական մեծ քարտէսին առջեւ, կարմիր ու կապոյտ մատիտները ձեռքին եւ հայկական հողամաս կը չափէր ու կը ձեւէր: «*Այս պէտք է մաքրել*», կ'ըսէր ան՝ ձեռքը դնելով այս կամ այն գաւառին վրայ:

Այդ օրերուն, Ազգային Խորհուրդին մէջ արտասանուած Աղբալեանի բոլոր ճառերը կը վերջանային մէկ պատգամով.

«Հայաստանը պէտք է հայացնել»:

ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Աղբալեանին կը պատկանի Հայաստանի Հանրապետութեան կրթական գործին կազմակերպման պատիւը: Մշակուած բոլոր ծրագիրները կը կրեն Աղբալեանի մտքի դրոշմը: Ան անխոնջ աշխատող էր խորհրդարանական կրթական յանձնախումբին մէջ եւ հիանալի զեկուցող էր Խորհրդարանի նիստերու ընթացքին: Իր օրով եւ իր նախաձեռնութեամբ էր, որ ընդունուեցաւ ընդհանուր եւ պարտադիր ուսման օրէնքը: Ան ընդարձակեց երկրորդական կրթութեան ցանցը, միջնակարգ նոր դպրոցներ ստեղծելով: Վերջապէս, անոր կը պատկանի Հայաստանի անդրանիկ համալսարանի հիմնադրութեան պատիւը:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ

Կրթական նախարարի հանգամանքով Աղբալեան կոչ կ'ուղղէ Հայաստանի պատանիներուն, որպէսզի հաւաքուին նախարարութեան կողմէ ճշդուած կեդրոններուն մէջ եւ սկսուտ արձանագրուին: Այս ուղղութեամբ յարաբերութեան մէջ կը մտնէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ եւ կը խնդրէ մասնագէտ սկսուտ պետեր, որպէսզի Հայաստանի մէջ ամենալայն չափով տարածեն սկսուտական շարժումը եւ հայացնեն հրամանները:

Հայրենիքէն եկած նամակը զօրակոչի կ'ենթարկէ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը: Նոյն օրերուն, Հայաստանէն Պոլիս կու գայ Գրիգոր Մերճանոֆ, որ առաջին օրն իսկ կը տեղեկացնէ, թէ՛ «հայրենիքի մէջ կան 40,000 որբեր, որոնց համար պէտք է զոհել ամէն բան»:

48 ժամ ետք, երեք անձնուէր երիտասարդներ կը նետուին նաւ, մեկնելու համար հայրենիք: Անոնցմէ մէկը, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը ձեռքին, նա բարձրացած պահուն կը բացագանչէ. «Քաջունին կոչ ուղղած է. նախարար Նիկոլ Աղբալեան հայ մարզիչ կ'ուզէ, հայ տղոց համար, հայրենիքի երիտասարդութեան համար: Կարելի՞ է սպասել»:

Երեք նուիրեալները՝ Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օճնիկ Եագմանեան կը հասնին Երեւան:

Աղբալեան ուրախ է: «Երեք հայ մարզիչներ մեզի համար աւելի օգտակար են, քան երեսուն հազար օտար մարզիչներ», կ'ըսէ կրթական նախարարը, որ անձամբ ներկայ կը գտնուի Ա. վարժարանին մէջ կատարուած ֆութպոլի առաջին մրցումին:

Հայաստանի անկախութեան տարեդարձի տօնակատարութեան՝ Երեւանի մէջ, 3000էն աւելի գայլիկ, սկաուտ, արծուիկ եւ արեւոյշ տողանցելով կը հմայեն ժողովուրդը, մինչ Նիկոլ Աղբալեանի կողքին վարչապետն ու բանակի ընդհանուր հրամանատարը երկար ծափերով կ'ընդունին սկաուտներու «պատուի առ»ը:

Ն. Աղբալեանի ճառը՝ խօսուած Հ.Մ.Ը.Մ.ի մէկ երեկոյթին, 4 Յունիս 1948ին, Պէյրութ: Կու տանք յապատումներով:

Մարզիկ չեմ: Գործով հեռու, բայց սրտով մօտ եմ ձեր միութեան՝ իր հանրային մեծ արժէքի համար: Մարզանքի առողջապահական օգուտն անվիճելի է: Ընտանիքներին տալիս է առողջ հարսներ ու փեսաներ, երիտասարդ գոյգերին՝ առոյգ սէր եւ կայտառ երեխաներ եւ ապահովում է ազգի տեւողութիւնը, ինչ որ մեծ բարիք է հանրային առումով:

*

**

Մարզական շարժումը մշակում է միասնութեան ոգի. արիների բանակումները եւ մեծերի մրցանքները մարզում են ոգին. ամէն մէկն ունի մի դեր եւ բոլորի ունեցած դերերով կատարում է մի ընդհանուր գործ: Այս վարժութեամբ պատանին եւ երիտասարդը պատրաստում են ազգի կեանքի մէջ եւս մի դեր ստանձնելու եւ դրանով ազգի պահպանութիւնն ապահովելու: Եւ այս պէտք է լինի գլխաւոր նպատակը՝ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործով նկարագիր ազնուացնել ու զօրացնել:

*
* *

Պէտք է ջանալ մի զգաստ, զուսպ եւ առողջ սերունդ ուղարկել հայրենիք, որ իմանան գնահատել նրա մեծ արժէքը եւ կառչին իրենց հողին:

Հ.Մ.Ը.Մ.ը կառուցուած է ազգային հիմքի վրայ, որով իր յաջողութիւնն ու փառքը հասնում են ազգին:

Պէտք է թեւ ու թափ տալ Հ.Մ.Ը.Մ.ին, որ զօրանայ իբրեւ հաստատուն կաղնի. իր թանձր շուքի տակ՝ բնական բերումով՝ պիտի խամրին վտիտ ծիլերը:

Հ.Մ.Ը.Մ.ի գործը չէ այս խնդիրը լուծել. բայց նրա հանրային պարտականութիւնն է ազնիւ եւ առողջ հայութիւն պատրաստել, որ երբ ժամը հնչէ՝ կարենայ հայրենիքին ներկայանալ իր զգաստ ու առոյգ շարքերով եւ ազնիւ հպարտութեամբ ասել.

- Ահա ե՛ս մանկունք իմ:

(«Ա.ԶԴ.ԱՐԱՐ», 12 Յուլիս 1948, Ա. տարի, քիւ 33):

Ն. Աղբալեանի ճառը՝ խօսուած 8 Յունուար 1944ին, Հ.Մ.Ը.Մ.ի 25ամեակի տօնակատարութեան, Պէյրութ:

Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.ի: Այդ դերը լաւ ըմբռնելու համար, անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն՝ մեր ուժերու, մեր արժէքի, մեր ընթացքի եւ նպատակի պայծառ ըմբռնում: Յարգանք, պատկառանք եւ տեղ այս աշխարհի մէջ՝ ուժով կը ստացւին, կը պարտադրուին եւ կը ներշնչուին: Իսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին:

Կը հետեւի, թէ Հ.Մ.Ը.Մ. ազգային հիմնարկութիւն է, եւ այս կցորդ գաղափարներէն ազգայինն է հիմնականը. հանրութեան համակրութիւնը ատով է պայմանաւոր եւ ատոր մէջ է հանրային արժէքը:

*
* *

Կը մաղթեմ, որ, թէեւ նոր հայրենիքի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ընթանայ հին հայրենիքի գործին զուգահեռ. որովհետեւ թէեւ հեռաւոր, բայց որդին ենք նոյն հայրենիքի. թէեւ տարագիր, բայց եղբայրն ենք նոյն ժողովուրդին, կը ճգնինք պահել նոյն լեզուն, նոյն մշակոյթն ու ոգին, ինչ որ մեր հին հայրենիքի մէջ, թէեւ դարձած ենք նոր եւ ազատ աշխարհի նոր քաղաքացի:

(«ԱԶԴԱՐԱՐ», 15 Յունուար 1944, Բ. տարի, թիւ 63):

Կ'ուզէք քննութեան տակ առէք Հ.Մ.Ը.Մ.ականը,
Կ'ուզէք քննեցէք Հ.Մ.Ը.Մ.ը,

Ասիկա այն միութիւնն է, որ իր ժողովուրդին տուաւ համապզեստի ճաշակ, պարզեց Եռագոյն, հնչեցուց «Յառաջ Նահատակ»:

Ասիկա այն միութիւնն է, որ գօտիին ու գլխարկին վրայ կրեց Արարատ ու Արաքս եւ իր երթին մէջ բարձրացաւ ու բարձրացուց:

Եղեռնէն ետք, որպէս կապմակերպութիւն եւ իր ժողովուրդի անդրանիկ պալակ՝ Հ.Մ.Ը.Մ. իր խառնըւածքով ու կեցուածքով մնաց հարապատ:

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԵՐՐՈՐԴ ՎԱՐՉԱՊԵՏ
ՏՈՔԹ. ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 1873ին, Ախալքալաք: Յաճախել է տք ծննդավայրի հայկական վարժարանը, կը դրկուի Թիֆլիսի, ռուսական վարժարանը:

Թիֆլիսի մէջ կը հանդիպի Քրիստափոր Միքայէլեանին, որուն շունչին տակ ի յայտ կը բերէ ղեկավար դառնալու իր շնորհները: Երկրորդական ուսումը աւարտել է տք, կը մեկնի Մոսկուա, ուր կը հետեւի բժշկութեան:

1898ին, Լեւոն Թադէոսեանի (Պապաշա) հետ հիմը կը դնէ Թիֆլիսի Կարմիր Խաչի մասնաճիւղին: Յաջորդ տարին, ուսումը շարունակելու համար կ'անցնի Չուիցերիա: Երեք տարի Լոզանի բժշկական համալսարանը յաճախել է տք, կ'աւարտէ փայլուն յաջողութեամբ: Այս շրջանին շատ սերտօրէն կը կապուի Քրիստափորին: Կը դառնայ ռուսաճողական շրջանակներու կազմակերպիչ ոգին:

1902ին կը վերադառնայ Թիֆլիս եւ կը զբաղի բժշկութեամբ: 1902էն տք ամբողջութեամբ կը նուիրի իր հանրային-կուսակցական գործունէութեան: Կ'ընտրուի Արեւելեան Բիւրոյի



անդամ: 1905ին կը մասնակցի Ռայոնական ժողովին: Ժողովէն ետք կու գայ Սոֆիա, ներկայ գտնուելու Քրիստափորի թաղումին: Ծատ պարզ, բայց խոր յուզումով դամբանական մը կը խօսի: Վիեննայի չորրորդ Ընդհ. Ժողովին, 1907ին, ջերմ պաշտպաններէն մէկը կ'ըլլայ Կովկասեան Նախագծի աշխատանքներուն:

1908 Դեկտեմբերին Համօ կը ձերբակալուի Թիֆլիսի մէջ. կը բանտարկուի Մետեխի բանտին մէջ: Այս գինք կը փոխադրեն Մոսկուայի եւ Պետրոգրադի բանտերը, մինչեւ որ տեղի կ'ունենայ Դաշնակցութեան հանրածանօթ դատավարութիւնը՝ 1912 Փետրուարին: Դատավարութեան ընթացքին, յեղափոխականի վայել յանդգնութեամբ կ'արտասանէ ճառ մը Դաշնակցութեան մասին: Ներկաներուն վրայ շատ խոր տպաւորութիւն կը ձգէ: Մահապատիժը կը մեղմանայ եւ իր անձին դէմ կ'արձակուի վճիռը. «Տաժանակիր աշխատանք Սիպերիոյ մէջ, չորս տարւան համար»:

Ռուբինա Ֆայն, Սուլթան Համիտի մահափորձի հերոսուհին, կ'երթայ իր սիրելիին մօտ, գայն խնամելու: Սիպերիոյ մէջ կ'ամուսնանան իրարու հետ:

1915ին ազատ կ'արձակուի. կը վերադառնայ Թիֆլիս: Միշտ կամաւորական գունդերու կողքին, իբրեւ բժիշկ, կը շարունակէ իր պարտականութիւնը:

1918 Նոյեմբեր 20ին, Հաշտութեան Վեհաժողովին համար Փարիզ կը մեկնի Աւետիս Ահարոնեանի հետ: Այս պաշտօնին վրայ կը մնայ մինչեւ 1920 թուականի սկիզբը:

Վերադարձին կը մասնակցի Ալ. Խատիեանի դահլիճին եւ կը ստանձնէ արտաքին գործոց նախարարութիւնը:

Մայիսեան բոլշեւիկեան ապստամբութեան հետեւանքով, Խատիսեանի դահլիճը կը հրաժարի: Մայիս 5ին, Բիւրօ կառավարութիւնը, որուն վարչապետը կ'ըլլայ Համօ Օհանջանեան, միաժամանակ պահելով իր արտաքին գործոց նախարարի պաշտօնը, ձեռք կ'առնէ երկրի իշխանութիւնը՝ զսպելու համար ներքին ապստամբութիւնները: Բիւրօ կառավարութիւնը կը յաջողի: Օհանջանեանի վարչապետութեան օրով է, որ Հայաստանի Հանրապետութիւնը կը ճանչցուի դաշնակից պետութիւններու կողմէ՝ համաձայն 1920 Օգոստոս 10ին կնքուած Սեւրի դաշնագրի տրամադրութիւններուն:

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Հայաստանի խորհրդայնացումէն ետք (2 Դեկտ. 1920), Համօ Օհանջանեան կը փորձէ անցնիլ Վրաստան, սակայն, դեռ սահման չհասած, բոլշեիկներու կողմէ կը ձերբակալուի եւ կը նետուի Երեւանի բանտը, ուր կը մնայ մինչեւ Փետրուար 18ի ժողովրդային ապստամբութիւնը եւ կ'ազատի միւս դաշնակցական ընկերներու հետ, որոնք դեռ չէին գնդակահարուած...

Կ'անցնի Պարսկաստան եւ ապա՝ 1923 Յունիսի 13ին կը հաստատուի Գահիրէ, ուր ամբողջ 27 տարի կը շարունակէ իր հանրային-կուսակցական գործունէութիւնը: 1947 Յուլիս 31ին վերջնականապէս աչքերը կը փակէ, ետին թողնելով հանրանուէր եւ բազմարդիւն վաստակ մը:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Արտաքին գործոց նախարարի եւ վարչապետի հանգամանքով, Օհանջանեան եւս Աղբալեանի եւ Խատիսեանի մման բարոյական ամէն աջակցութիւն ընծայեց սկաուտական եւ մարզական շարժումի տարածման՝ Հայաստանի ամբողջ տարածքին: Ամէն առիթով կը քաջալերէր եւ կը դրուատէր Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը, որոնք անձնուիրաբար եկած էին Հայաստան: Կը հաւատար Հ.Մ.Ը.Մ.ի փրկարար առաքելութեան եւ միայն անոր մէջ կը տեսնէր 40.000ի հասնող որբերուն հոգատարութեան կարելոր գործին յաջողութիւնը:

Հ.Մ.Ը.Մ., ուրեմն, գեղեցիկ եւ յուսատու իրականութիւն մըն էր եւ անհրաժեշտ ուժ մը Հայաստանի մէջ, միշտ պատրաստ օգնելու, ժողովուրդին ծառայելու, իր տառապած, ընկճուած, հոգեպէս վհատած հայորդիներուն թեւ-թիկունք ըլլալու, անոնց ուժ ու կորով ներշնչելու, վաղուան համար վստահութիւն ապահովելու եւ հպարտութիւն ու ժպիտ պարգեւելու:

Բացայայտօրէն նոր ու յուսաշող մթնոլորտ մը սկսած էր զարգանալ: Աւետիս Ահարոնեան, Փարիզէն, հեռագիր դրկած էր, յայտնելով որ թորք պատուիրակութիւնը ստորագրած է ՍԵԻՐԻ ԴԱՇՆԱԳԻՐը: Մեր տղաքը ուրախ են: Կը պատրաստուին ուժերու առաւելագոյն լարումով մասնակցելու համահայկական տողանցքին: Հոն է նաեւ վարչապետ Համօ Օհանջանեան, որ ար-

տասուախառն աչքերով կը դիտէ մեր տղոց հպարտադէմ տողանցքը եւ կ'արտասանէ ոգետորուած ճառ մը: Ահա թէ ինչ կը գրէ պատուիրակութեան անդամ Տիգրան Քհնյ. Խոյեան:

«Անմոռանալի օր մը.- Օգոստոս 19, 1920, Հինգշաբթի օր, Երեւանի բոլոր վաճառատուները, պաշտօնատուները, մամուլը, ամէն ինչ փակ էր: Ամէն կողմ դրօշազարդուած՝ քաղաքը տօնական մթնոլորտ ունէր, եռուզեռ՝ ամէն կողմ: Քաղաքի հրապարակին վրայ մեծաշուք հանդէս: Նախարարական ամբողջ կազմը եւ բարձր զինուորական դասը ներկայ էին: Կային նաեւ օտար ներկայացուցիչներ: Վարչապետ Համօ Օհանջանեանէն յոյժ ոգետորուած ճառ մը: Մէջընդմէջ կը նուագէր զինուորական «ֆանֆառ»ը:

Հանդէսը, իբրեւ հանդէս, նուիրուած՝ այդ պատմական մեծ արժէք ներկայացնող օրուան, շատ համեստ էր, մանաւանդ մեզի համար, որ Պոլսոյ մէջ, զանազան առիթներով, եւրոպական ամէն ազգերու պատկանող բանակներու տպաւորիչ զօրանցքը տեսած էինք... առաջնակարգ «ֆանֆառ»ներով: Բայց հայ ժողովուրդի եւ հայրենիքի ազատութեան ի խնդիր, արիւնոտ եաթաղանն ու մահուան դրօշակը իբր առաջնորդ ունեցող դարաւոր թշնամիի մը դէմ մահու-կենաց վճռական մաքառումէ մը դէտնոր դուրս եկած այս ժողովուրդէն ու իր աննման ղեկավարներէն, կառավարութենէն աւելի ի՞նչ ակնկալել այօսը: Այս օրուան այս «անշուք» հանդէսը, իր ազգային ու բարոյական արժէքով, մեզի համար ամէնէն շքեղն ու հարուստն էր: Երեւակայեցէք, առաջին անգամն էր, որ վեց դարերու գերութենէն ետք, ազատ Հայաստանի մայրաքաղաքին մէջ, հայ պետական հանդիսութեան մը ներկայ կ'ըլլայինք...»:

«Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը» տիտղոս մըն է, պատւաբեր տիտղոս մը, համալսարանական տիտղոսի մը չափ արժէքաւոր: Ինչ ալ հայ պատանին կը սորվի Հ.Մ.Ը.Մ.ին մէջ, չի՛ կրնար սորվիլ ուրիշ որեւէ տեղ:

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

**Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՌՈՒՔԷՆ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ**

«Ես շատ սերունդներ տեսայ տարբեր վայրերու մէջ, բայց այդ սերունդին համն ու հոտը տարբեր էր, ինչպէս Արտամետի խնձորինը՝ թէկուզ մէջը որդ ինկած լինի»:

Ռուբէն Տէր Մինասեան

ԿԵԱՆՔԸ

Անգուգական հայ լեղափոխականը ծնած է 1882ին, պատմական Զաւախք գաւառին մէջ, Ախալքալաք: Նախնական ուսումը կը ստանայ Ախալքալաքի ծխական վարժարանին մէջ: Ապա կը դրկուի Էջմիածինի Գէորգեան ճեմարանը, ուր կ'աշակերտէ Մանանդեանի, Աճառեանի եւ Կոմիտասի պէս բազմահմուտ ու տաղանդաւոր դէմքերու, որոնք հայ ժողովուրդի, հայոց պատմութեան, հայ մշակոյթի եւ հայ լեզուի գանձերը պիտի բանային պատանի Ռուբէնի մտքին ու հոգիին մէջ:



Հազիւ քսան տարեկան, կը մտնէ ուսական բանակ՝ պահեստի սպայի աստիճանով: Ապա կ'երթայ Մոսկուա, իբրեւ Լազարեան ճեմարանի բարձրագոյն դասընթացքի հետեւող ուսանող:

Հայն հետաքրքրություններ ունէր,- գիտական, իմաստասիրական եւ գրական բնագաւառներու մէջ: Կը կլանուի հայագիտական հարցերով:

1903ին կ'անցնի Թիֆլիս: Կը գետնի հայ յեղափոխութեան ալիքներուն մէջ եւ կը ծրագրէ Երկիր անցնիլ: Նախ կը գործէ «Կարսի հնոց»-ին մէջ, ուր կը թրծուին Ռուբէնն ու Արամը: Արամէն ետք, Ռուբէնի վրայ խոր ազդեցութիւն կը գործէ ուրիշ տիրական դէմք մը՝ Նիկոլ Դուման:

1905ին կ'անցնի Վան, ուր երկար չի մնար: Կ'անցնի Լեոնապարի շրջանը: 1906ին կը մեկնի Տարօն: Գէորգ Չաւուշի հետ միասին կը վերակազմակերպէ ֆետայական շարժումը: Միշտ Գէորգ Չաւուշի հետ, կը մղեն բազմաթիւ կոիւներ, որոնք մէյմէկ հերոսական անպատմելի դրուագներ կը կազմեն: Այս հերոսական մարտնչութիւններուն գլխաւորները կը կազմեն. (ա) ՍՈՒ-ԼՈՒԽԻ կոիւր, ուր կը նահատակուի Գէորգ Չաւուշ: (բ) Փէթարի կոիւր, ուր հերոսաբար կ'իյնան Սպաղանաց Մակար եւ Շէնիկի Մանուկը:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք, Ռուբէն կը զբաղի կազմակերպական հարցերով: 1913ին կ'անցնի Ժընեւ, ուր կը մնայ երեք տարի: Կը վերադառնայ Տարօն: Առաջին աշխարհամարտին կը գլխաւորէ Տարօնի ինքնապաշտպանութեան գործը:

Անկախութեան հռչակման առաջին օրերուն, Ռուբէն նախ կ'անդամակցի Անդրկովկասի ՍէՅՄ-ին, ապա՝ Հայոց Ազգային Խորհուրդի անդամներուն հետ կը փոխադրուի Երեւան: Հոն, կը սկսի Ռուբէնի պետական գործունէութեան շրջանը, ուր երեւան կը բերէ կազմակերպչական եւ զինուորական հմտութիւն, իրապաշտ ու օգտաշատ գործելակերպի բացառիկ ձիրք:

Զօրավար Արարատեանի հետ գործակցաբար՝ մեծապէս կը սատարէ հայկական բանակի կազմակերպման գործին: Կը դառնայ ներքին գործոց եւ պատերազմական նախարար: Մեծ ձեռնհասութեամբ կը զսպէ 1920ի մայիսեան շարժումը: Սակայն իր կեանքի ամէնէն նշանակալից ու մեծ գործը կը կազմէ Հայաստանի հայացումը: Եւ եթէ այսօր Հայաստան մը ունինք հայ զանգուածով, ատիկա մեծագոյն չափով կը պարտինք Ռուբէնի քաղաքական հեռատեսութեան, անդրդուելի կամքին ու ամէն արգելք խորտակող վճռականութեան:

ՌՌԻԲԷՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՌԻՐՍ

Իր կեանքի վերջին երեսուն տարիները Ռուբենն ապրեցաւ տարագրութեան մէջ, հեռու՝ իր մայր երկրէն եւ ժողովուրդէն, բայց չապրեցաւ երբեք պարապ, անպտուղ կեանք մը: Արտասահմանի մէջ եւս ան իր ուժերը ամբողջովին նուիրեց իր կազմակերպութեան եւ անոր միջոցով ազատատենչ հայութեան ու Հայ Դատին: Իր անգուգական յուշերու հրատարակման միջոցով ան վերակենդանացուց մեր մօտիկ անցեալի դիցազնական սերունդը, անոր ոգին, անոր հերոսական դէմքերը եւ գործերը, որպէսզի այդ կերպով վերապրող հայութեան մէջ վառ պահուի մեր ազատագրական պայքարի կրակը եւ մեր նոր սերունդի համար ստեղծուի ներշնչումի ու նուիրումի մշտահոս աղբիւր մը:

Ամէն հայ երիտասարդ պէտք է անպայման կարդայ Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները»:

Կը մահանայ 1951ին, Միացեալ, Ազատ, Անկախ Հայաստանի երագով:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՌՌԻԲԷՆ

Ռուբենը քաջատեղեակ էր Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան: Համակրանքով եւ հաւատքով կը դիտէր Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը, որովհետեւ անոնց մէջ կը տեսներ յուսալից երթը մեր ժողովուրդին: Զինուորականի աչքով կը դիտէր Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն տողանցքը եւ անոնց մէջ կ'ողջունէր ապագայի հայ զինուորը:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ վառ պիտի մնայ պատմական այն հանդիպումը, որ տեղի ունեցաւ 16 Օգոստոս 1920ին, Երեւանի մէջ, ներքին գործոց եւ պատերազմական նախարար Ռուբեն Տէր Մինասեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչներուն միջեւ:

Ահա՛ թէ ինչ կը գրէ յիշեալ պատուիրակութեան անդամ եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր սերունդի գլխաւոր ներկայացուցիչներէն՝ Տիգրան Քհնյ. Խոյեան, իր «Նահատակ ցեղի անմահներ» գիրքին 101րդ էջին մէջ.

«... Նախապէս ժամադրուելով՝ այցելեցինք պատերազմական նախարար Ռուբեն Տէր Մինասեանին: Ժամադրութեամբ որոշուած տեսնին զացիք իր պաշտօնատեղին, բայց ստիպուած սպասեցինք, որովհետեւ ֆրանսական զինուորական պատուիրա-



1940ականներու վերջ. Ռուբէն Տէր Մինասեան կը հետեւի Հալէպի Նաասարդեան խաղերու փակման հանդիսութեան:
Իր աջին՝ Ատուր Գապաբեան

կութեան մը հետ զբաղած էր: Մեր այդ սպասման ատեն հաճոյքն ունեցանք ծանօթանալու երիտասարդ հայ սպայի մը հետ, որ իր զօրավարին՝ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ մասին խօսեցաւ խանդավառ հիացումով եւ իր ըսածները փաստող մէկ-երկու դէպքեր պատմեց մեզի: Վերջապէս, ֆրանսական բանակի երկու բարձրաստիճան սպաները դուրս եկան նախարարին սենեակէն եւ մենք հրաւիրուեցանք նախարարին մօտ:

«Չափազանց լաւ ընդունեց մեզ Հայաստանի պատերազմական նախարարը: Հետաքրքրուեցաւ սկաուտական գիտելիքներով ու անոնց տրուած դաստիարակութեամբ, հետախուզական վարժութիւններով եւ մեր հայերէն հրամաններով: Բարձրօրէն գնահատեց նոր, մատղաշ սերունդին տրուած այդ դաստիարակութիւնը եւ խոստացաւ մեզի ամէն դիրքութիւն ընձեռել: Հիանալի տրամադրութեամբ ու զոհացած բաժնուեցանք մեր նախարարէն»:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԿԱՄՄԱԻՈՐԱԿԱՆ Բ. ԳՈՒՆԴԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԱՊԱ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԴՐՕ

ԿԵԱՆՔԸ

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարէն ներս մուտք գործեց ահաբեկիչներու դուռնէն, իր անունին կապելով Սուրմալուի հայատեաց գաւառապետ Գալանցիի, Բագուի արիւնարբու նահանգապետ Նակաշիձէի (1905) եւ Ալեքսանդրապոլի նահանգապետ Ալիխանով Աւառսկիի ահաբեկման մարտական ելոյթները:

Աւագանի անունով Դրաստամատ Կանայեան, ծնած էր Արարատեան դաշտի Սուրմալու գաւառի Իգդիր քաղաքին մէջ, 1884ին:

Բարեկեցիկ ընտանիքի գաւակ Դրոն ուղարկուած է Երևան, կրթութիւն ստանալու ռուսական *գիմնազիայի* (վարժարան) մէջ: Դասընթացքը չաւարտած, 1904ին մտած է զինուորական ծառայութեան մէջ, պատրաստուելու համար իբրև ռուս բանակի սպայ, սակայն հայ ժողովուրդի ալեկոծ կեանքը թոյլ չէ տուած Դրոյին լրացնելու իր զինուորական կրթութիւնը:

Մինչեւ Առաջին Աշխարհամարտ Դրո թրծուեցաւ հայ յեղափոխական շարժման հնոցին մէջ, իր մասնակցութիւնը բերաւ «Դէպի Երկիր» գէնք փոխադրելու վտանգաւոր եւ դժուարին



գործին: Այդ օրերուն Հայոց Ազգային Բիրոն ձեռնարկած էր հայկական կամաւորական գունդերու կազմութեան: Դրոն կը ստանձնէ կամաւորական Բ. գունդի հրամանատարութիւնը: Ռուս-թրքական պատերազմը սկսելուն պէս կ'արշաւէ դէպի Վան, բայց առաջին կոիւին ծանր կերպով կը վիրաւորուի: Գրեթէ մահամերձ վիճակի մէջ կը փոխադրուի Իգդիր, ապա Թիֆլիս, ուր կը խնամուի երկու ամիս: Ողնայարին մօտերը մտած գնդակը կը մնայ թոքերուն մէջ:

1915 Մարտին, կրկին իր գունդին գլուխը անցած՝ Քեռիի եւ Համազասպի հետ Դրօ կ'արշաւէ դէպի Վան: Թրքական պաշարումէն ազատած Վան մտնող առաջին գունդը եղած է Դրոյի ձիաւոր հարիւրեակը՝ Խէչոյի գլխաւորութեամբ:

1918ին, երբ ռուս բանակը լքեց թրքական ճակատը, հայկական նորակազմ ուժերու գլուխը անցած՝ Դրօ պաշտպանեց Արարատեան դաշտի ճակատը: Այդ ճակատին վրայ թուրքերը երբեք չկրցան յաջողութիւն արձանագրել:

1918ի մայիսեան կռիւներու ժամանակ Դրօ վարեց Բաշ-Ապարանի ճակատամարտը:

Նոյն տարուան Դեկտեմբեր ամսուն դուրս քշեց վրացական զօրքերը հայկական Լոռիէն:

Միմօն Վրացեանի վարչապետութեան օրով եղաւ Զինուորական նախարար: 1920ին, հայ-թրքական պատերազմի ընթացքին, դարձեալ իրեն վիճակուեցաւ Սուրմալուի ճակատին հրամանատարութիւնը: Վերջապէս, Հ. Տէրտէրեանի հետ, ան ներկայացուց Հայաստանի հանրապետութիւնը՝ խորհրդային պատուիրակ Լըզրանին մօտ, որուն հետ 2 Դեկտեմբեր 1920ին կնքուեցաւ Հայաստանի խորհրդայնացման համաձայնագիրը:

Դրօ, Համաբարձում Տէրտէրեանի հետ մաս պիտի կազմէր Խորհրդային Հայաստանի նորակազմ կառավարութեան, սակայն երբ բոլշեիկները մուտք կը գործեն Երևան, Դրոն կը տանին Մոսկուա, իբրեւ արքայական, ուր կը մնայ երկու տարի, ապա կ'անցնի արտասահման:

Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին, գերմանական բանակներու կողմէ գրաւուած երկիրներուն մէջ, կը դառնայ հայութեան պաշտպան:


1948ին կը հաստատուի Լիբանան եւ իր կեանքի վերջին տարիները կ'անցընէ Մերձաւոր Արեւելքի հայաշատ գաղութներուն մէջ:

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

1955ին կը մեկնի Միացեալ Նահանգներ, կը միանայ իր ընտանիքին, եւ հոն ալ կը փակէ իր աչքերը 1956 Մարտ 8ին, Միացեալ եւ Անկախ Հայաստանի կարօտը սրտին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԳՐՕ

1920ական թուականներէն արդէն իսկ ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան եւ ազգանուէր գործունէութեան Երեւանի եւ Ալեքսանդրապոլի մէջ: Լիբանան հաստատուելէն ետք, 1948-1955, կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի ջերմ ջատագովը: Իր բարոյական ազդեցիկ ներկայութեամբ ու կոտ ճառախօսութիւններով, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային Նաւասարդեան խաղերուն, կը հմայէ



Դրօ (բարեւի կանգնած) եւ Կոմս (ձախին) միջ-մասնաճիւղային խաղերու պատուոյ հիւրերէն:

յաղթանակի ու հպարտութեան ծարաւի մեր ժողովուրդը, որ որոտընդոստ ծափերով կ'ողջունէ երէկի իր հրամանատարին, քաղաքական դէմքին եւ ահաբեկիչին հռետորաշունչ խօսքերը՝ իր հետ տանելով պատգամ հայրենի լեռներէն, դաշտերէն ու ամալացած քաղաքներէն: Ո՛րքան տպաւորիչ եղած է իր խօսքը, նո՛յնքան եւ անելի՝ զինուորականի իր բարեւը՝ ի տես տողանցող, շարան առ շարան, սկաուտական խումբերուն, նորօրեայ մեր «կամաւոր բանակ»ներուն:



Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի «Նաւասարդեան» դաշտի բացումին (1946), Դրօ բարեւկանգնած՝ տողանցող սկաուտներուն եւ մարպիկներուն:

Եկէ՛ք, տղաք նաւասարդեան: Անցէ՛ք նորէն մարպադաշտէն ու ակումբէն: Յուզում տուէք հոգիներուն, այլեժածան ժողովուրդին, բո՛յրը տուէք հայրենիքի գարուններուն:

Տղաք, պայծա՛ն ճակատներով: Անցէ՛ք հպարտ ու աննկուն:

Անձրեւի պէս օրհնէք իջնէ՛ք ձեր տողանցքներուն:

Գարուն իջնէ՛ք ձեր հոգիին՝ գարնան զուարթ այս օրերուն:

Վարդ թափթփի ձեր ծունկերուն՝ Ծաղկազարդի այս օրերուն:

Պատմութենէն աղօթք կաթի ձեր մապերուն՝ աղօթաբոյր այս օրերուն ու հայրենի պատմութեան մէջ յաղթանակի յաւերժական դափնի հիւսուի ձեր կուրծքերուն:

Ձեր տողանցքին ու ձեր հոյլին:

Գաղափարին, ձեր Երապին ու Դրօշին:

ՊԵՏՐՈՍ ՀԱԾԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԾԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 1889ին, Սասնոյ Ահրոնք գիւղը: Նախնական ուսումը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, կը մեկնի Մուշ՝ ուսումը շարունակելու:

1906-1908 Տիգրանակերտ է, իբրեւ ուսուցիչ:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք կ'անցնի Պոլիս, կ'աւարտէ Պոլսոյ Կեդրոնականը եւ կը մտնէ իրաւաբանական վարժարան:

Ուսանողական շրջան է. խանդավառ ցոյցերու, բանախօսութեանց, վիճաբանութեանց շրջան: Կարօ Սասունի Պոլսոյ ուսանողական շարժումներուն փայլուն դէմքերէն է:

1912ին կը դրկուի Մուշ, իբրեւ գործիչ:

1913ին Ս. Կարապետի ուխտագնացութեան, հայ գիրերու գիտի 1500ամեակի տօնակատարութեան առիթով տեսակցութիւններ կ'ունենայ շարք մը ղեկավարներու հետ, ինչպէս՝ Արմէն Գարօ, Վրամեան, Կայծակ Առաքել, Աղբալեան, Զամալեան եւ ուրիշներ: Գլխաւոր մտահոգութիւնը եւ օրակարգը կ'ըլլայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան հարցը: Այնուհետեւ Կարօ Սասունի կը շրջի Սասնոյ զանազան շրջանները՝ կազմակերպական գործով:



1913ին կը վերադառնայ Պոլիս եւ տարի մը ետք կը վկայուի իրաւաբանական վարժարանէն:

1915ին, Թիֆլիսի մէջ, խումբ մը սասունցի ընկերներով կ'ընկերանայ կամաւորական գունդերուն:

1917ին, Երկիր վերադարձող հայ գաղթականութեան կեանքի կազմակերպման կարեւոր դերակատար է Կարօ Սասունի:

1918ին կը յաջողի անցնիլ Երեւան, մասնակից դառնալով հայ ժողովուրդի նորանկախ պետութեան կազմակերպման աշխատանքներուն:

Խորհրդարանի անդամ է, միաժամանակ՝ Շիրակի նահանգապետ: Փետրուարեան ապստամբութենէն ետք, ան կը ստանձնէ Սիմոն Վրացեանի նախագահութեան տակ գործող Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ներքին գործոց նախարարի պարտաւորութիւնները:

1921 Ապրիլէն մինչեւ 1977 Օգոստոս, Կարօ Սասունիի կեանքը կը թաւալի Սփիւռքի տարածքին. Պոլիս, Պուլկարիա, Ֆրանսա, Զուիցերիա, Սուրիա, Լիբանան, տեսարար գտնուելով հանրային կեանքի առաջին գիծերուն վրայ, առանց անտեսելու մտաւորական եւ մշակութային գործունէութիւնը, իբրեւ գրագէտ, խմբագիր եւ ուսուցիչ:

1933ին կը հաստատուի Լիբանան, ուր ամբողջ քսան տարի կը դասաւանդէ Ճեմարանի բարձրագոյն կարգերուն:

1962ին կը հիմնուի «Բագին» գրական ամսագիրը, որուն խմբագրապետութիւնը կը վարէ ան 12 տարի:

Իր աչքերը կը փակէ 11 Օգոստոս 1977ին, Սասնոյ եւ Արարատեան աշխարհի կարօտը սրտին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

Տիգրան Ա. Քհնյ. Խոյեան իր յուշերուն մէջ կը պատմէ, թէ ինչպէ՛ս Օգոստոս 1920ին Ալեքսանդրապոլ հասնելով՝ Վահան Չերազ, ինք եւ Օննիկ Եազմաճեան հաճելի անակնկալի մը դէմ յանդիման կը գտնուին: Խոյեան կը նկարագրէ. «Եկան տեղւոյն սկաուտները, մեզ առաջնորդեցին Շիրակի նահանգապետ Կարօ Սասունիի մօտ, որուն ծանօթ էինք Պոլսոյ Կեդրոնական Վարժարանէն: Սասունին շատ ուրախացաւ մեր առաքելութեամբ: Կարեւորութեամբ շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի հայրենաճուրէր գործունէու-

թեան բերելիք բարիքը հայ նորահաս պատանիներու նկարագրի կազմաւորման եւ յատկապէս որբերու դաստիարակման գործին մէջ, որուն այնքան պէտք ունէր նորաստեղծ Հայաստանը»:

Սասունի անվերապահ գորակցութիւն յայտնելով Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ պատուիրակութեան, կը խոստանայ ներկայ գտնուիլ ֆութպոլի բարեկամական այն մրցումին, որ տեղի պիտի ունենար Երեւանի եւ Ալեքսանդրապոլի խումբերուն միջեւ: Մրցումը կ'անցնի ծայր աստիճան հետաքրքրական: Մրցումի ւարտին խօսք առնելով՝ նահանգապետ Սասունի կը շնորհաւորէ Երեւանի յաղթական խումբը եւ անոր կը յանձնէ օրուան բաժակը:

Մշեցի ազգային գործիչը նոյն տրամադրութիւնը կը ցուցաբերէ նաեւ Արտասահմանի մէջ, ուր ներկայ կը գտնուի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի միջ-մասնաճիւղային բազմաթիւ հանդիպումներուն, ամէնուրեք իր հոգիին խորերէն կ'ողջունէ տողանցող հայ սկաուտները, անոնց մէջ տեսնելով հայկական ապագայ բանակի հիմքերը:

Ի՞նչ է այդ ոգին, որ ես կը բաշխեմ ամբողջ հայութեան, առանց հրեայի եւ հեթանոսի խորութեան:

Այդ ոգին համահայկական է:

Այդ ոգին հայոց պատմութեան ամէնէն հեռաւոր եւ ամէնէն խորունկ ընդերքներէն կու գայ:

Այդ ոգին հայ ծնած ամէն հայու արեան գնդիկներուն մէջ կայ ժառանգականօրէն:

Ու հետեւաբար, այդ ոգին բոլոր հայերուն կը պատկանի, ուզեն թէ ոչ, գիտակցին թէ անգիտակ մնան... Այդ ոգին իրենց հայ ծնած ըլլալու էութենէն կը բխի:

Ազգ մը որ մեռած չէ, այդ ոգին պիտի կրէ, ինչ որ կը նշանակէ կեանք ունի եւ ապագայ:

Մայիս 28ը ապագան է Հայ Ժողովուրդին:

(«ՄՍ.ՐԶ.ԻԿ» 1995, թիւ 3):

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԵՐՈՍ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԿԵԱՆՔԸ

Նժդեհ՝ աւագանի անունով Գարեգին Տէր Յարութիւնեան, ծնած է Հին Նախիջեւանի Կզնութ գիւղը, 1 Յունւար 1886ին:

Աւարտել է ետք իր ծննդավայրի ուսական դպրոցը, կ'երթայ Թիֆլիս, ուր ան կը ստանայ միջնակարգ կրթութիւն: Թիֆլիս եղած ատեն կը մտնէ Հ.Յ.Դ. շարքերը: 1902 թուականին կ'աւարտէ Գիմնազիան եւ նոյն տարին կը մեկնի Սան Փեթերսպուրկ եւ կ'ընդունուի համալսարանի իրաւաբանական բաժինը: Երիտասարդ Գարեգինը համալսարան եղած շրջանին իր ազատ ժամերը կը յատկացնէ Րաֆֆիի հայրենասիրական վէպերու ընթերցման: Իր վրայ խոր ազդեցութիւն կը թողուն «Սամուէլ»ի, «Կայծեր»ի, «Խենթ»ի եւ այլ վէպերու հերոսները: Կ'որոշէ նուիրուիլ հայ ժողովուրդի ազատագրական պայքարին: Երկու տարի իրաւաբանական համալսարանի մէջ ուսանելէ ետք, 1904ին կը ձգէ համալսարանը եւ կը մեկնի Սալմաստ (Պարսկաստան) եւ կը ստանձնէ կուսակցական քարոզիչի պարտականութիւն:

Հ.Յ.Դ.ի Բիւրոյի թելադրանքով 1905ին կը մեկնի Պուլկարիս եւ կը մտնէ զինուորական դպրոց, որուն ընթացքը կ'աւարտէ յաջողութեամբ, ստանալով սպայի կոչում: Նոյն տարին, երկրորդ անգամ ըլլալով, կը մեկնի Պարսկաստան, բայց այս ան-



գամ ոչ իբրև կուսակցական գործիչ, այլ՝ իբրև զինուորական կրթութիւն ստացած սպայ: 1908ին, Նժդեհ կը մեկնի Կովկաս, զէնք եւ ուզմամբերք հասցնելու նպատակով, սակայն կը ձերբակալուի ցարական ստտիկանութեան կողմէ: Մօտ 3 տարի բանտին մէջ անտանելի տանջանքներ կրելէ յետոյ, կ'ազատուի, կը մեկնի Պուլկարիա եւ կը մտնէ զինուորական ծառայութեան մէջ: 1912ին, Հ.Յ.Դաշնակցութեան հրահանգով, Անդրանիկի հետ կը կազմէ կամաւորական գումդեր, որոնք պուլկարական բանակին հետ պիտի կռուէին Թուրքիոյ դէմ:

1914ին կը բռնկի Համաշխարհային Ա. պատերազմը: Անդրանիկ եւ Նժդեհ Պուլկարիայէն կու գան Կովկաս, մասնակցելու համար այն պատերազմին, զոր ցարական Ռուսիան պիտի մղէր Թուրքիոյ դէմ: Անդրանիկ կը նշանակուի առաջին գումարտակի պետ, իսկ Նժդեհ՝ երկրորդ գումարտակի պետ Դրոյի օգնական: 1915 Ապրիլին, Դրոյի եւ Նժդեհի հրամանատարութեան տակ եղած հայ կամաւորներն էին, որ առաջին անգամ մտան Վան, ուր հերոս ժողովուրդը Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ 40 օր ինքնապաշտպանութեան ահեղ կոխ մղեց թուրք ցեղասպան բանակներու դէմ:

1918 Մայիս 21-28ին, Ղարաբիլիսէի ահեղ ճակատամարտներուն, Նժդեհ մեծ դեր խաղաց թէ՛ իր ճարտար լեզուով եւ թէ իբրև խիզախ կռուող: 1918ին ստեղծուած ազատ-անկախ Հայաստանի սահմաններուն մէջ չէր մտներ Զանգեզուրը եւ, երբ թրքական բանակները հեռացան Կովկասէն եւ անոնց տեղ գրաւեցին անգլիական գումդերը, Զանգեզուրը մնաց բոլորովին մեկուսացած արտաքին աշխարհէն, շրջապատուած թուրք եւ քիւրտ զանգուածներով: Ազրպէյճանի կառավարութիւնը ուզեց Զանգեզուրը կցել իրեն, միանալ Նախիջեւանի եւ սահմանակից դառնալ իր ցեղակից Թուրքիոյ: Այս ծրագրին թիկունք կեցած էին անգլիացիները, սակայն Զանգեզուրի հերոս ժողովուրդը կտրուկ կերպով մերժեց եւ պատրաստակամութիւն յայտնեց զէնքի միջոցով պաշտպանել իր հողերը: Նոյն թուականին, Հայաստանի հանրապետական կառավարութիւնը Նժդեհը ուղարկեց Զանգեզուր: Ան նախ շրջեցաւ գիղէ գիղ, ուսումնասիրեց դիրքերը, ժողովուրդի սովորութիւնները: Զէնք կրելու ընդունակ մարդոցմէ կազմեց մարտական խումբեր եւ սորվեցուց ինքնապաշտպանութեան եւ յարձակողական արհեստը: Ատկէ ետք,

սկսաւ մաքրել թրքական գիւղեր, այն հաշիով, որ Զանգեզուրի հայ բնակչութիւնը բացարձակ մեծամասնութիւն կազմէ:

1920 Ապրիլին, Ազրպէյճան խորհրդայնացաւ: Կարմիր բանակը մտաւ Զանգեզուր: Նժդեհ, իր հաւատարիմ ջոկատներով բարձրացաւ Խստուփ լեռան անմատչելի գագաթները: Կարմիր բանակը, փոխանակ օգնելու հայ ժողովուրդին եւ սննդամթերք հասցնելու, սկսաւ կողոպտել ժողովուրդը: Քաղաքական հալածանքները, բանտարկութիւնները եւ գնդակահարութիւնները այն աստիճան հասան, որ Զանգեզուրի ազատասէր ժողովուրդը ոտքի ելաւ եւ ապստամբութեան դրօշ պարզեց: Նժդեհի ղեկավարութեամբ զանգեզուրցիներու հերոսական պայքարը եթէ չմղուէր ազերիներու, թուրքերու եւ Կարմիր բանակին դէմ, այսօր Զանգեզուրն ալ ենթակայ կ'ըլլար Ազրպէյճանին՝ Նախիջեւանի պէս:

*ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԳՐԵԹԷ ԱՄԲՈՂ-
ԶՈՒԹԵԱՄԲ ՄԱՔՐԵՑ ԹՈՒՐՔԵՐԷՆ ԵՒ ԶՈՒՏ ՀԱՅԱԲՆԱԿ
ԳԱԻԱՌԻ ՎԵՐԱՄԵՑ:*

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

1921 Յուլիս 15ին, Նժդեհ կը լքէ իր այնքան սիրած ու փայփայած Զանգեզուրը եւ Արաքս գետն անցնելով կը մտնէ Պարսկաստան, ուր չորս տարի կ'ապրի գաղտնի: Հոնկէ կ'անցնի Պուլկարիա եւ եռանդով կը նուիրուի հասարակական աշխատանքի:

1932ին կը մեկնի Ամերիկայի Միացեալ Նահանգներ, ձուլման վտանգէն փրկելու համար հայ երիտասարդութիւնը: Նժդեհ իր ճարտար լեզուով եւ իմաստալից մտքերով կը սիրաշահի հայ երիտասարդութիւնը եւ կը ստեղծէ Հայ Ցեղակրօն Ուխտը: Ապա կը վերադառնայ Պուլկարիա, ուր կը մնայ մինչեւ 1944: Իշխանութիւնը համայնավարներու ձեռքը անցնելէն ետք, վեց ամիս կը մնայ գաղտնի թաքստոցի մէջ: Ապա ինք կը ներկայանայ իշխանութեան. կը բանտարկուի եւ կ'աքսորուի Մոսկուա: 1945-48, երեք տարի, Նժդեհ բանտարկուած կը մնայ Երեւանի մէջ, շատ խիստ հսկողութեան տակ: Կը դատապարտուի 25 տարուան բանտարկութեան. զինք կը փոխադրեն Սիպերիոյ Վլադիմիր քաղաքի բանտը, ուր կը նահատակուի 1956ին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՆԺՌԵՆ

Նժդեհ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կ'իմանայ Հայաստանի մէջ, երբ երեք նուիրեալներ՝ Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օճնիկ Եագմանեան կը մեկնին Հայաստան, ընդառաջելով Նիկոլ Աղբալեանի կոչին: առաջին իսկ առիթով Նժդեհ կը փորձէ կապ հաստատել պատուիրակութեան անդամներուն հետ, Զանգեզուրի շրջանին մէջ եւս սկաուտութիւնը տարածելու նպատակով, որովհետեւ սկաուտական դաստիարակութեան մէջ կը տեսներ ապագայ զինուորականը եւ հայրենիքի պաշտպանը: Եւ այդ օրը չ'ուշանար: Ահա թէ ի'նչ կը գրէ պատուիրակութեան անդամներէն Տիգրան Խոյեան, իր «Նահատակ ցեղի անմահներ» գիրքին մէջ.

«... Նախապէս ժամադրուելով՝ այցելեցինք պատերազմական նախարար Ռուբէն Տէր Մինասեանին: Ժամադրութեամբ որոշուած ատենին գացինք իր պաշտօնատեղին, բայց ստիպուած սպասեցինք, որովհետեւ ֆրանսական պատուիրակութեան մը հետ զբաղած էր: Մեր այդ սպասման ատեն հաճոյքն ունեցանք ծանօթանալու Զանգեզուրի հերոս՝ Գարեգին Նժդեհին, որ անհամբեր մեզ կը սպասէր: Հետաքրքրուեցաւ Պոլսոյ հայութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ով եւ հայրենաճուղի մեր առաքելութեամբ: Մեծապէս խանդավառուեցաւ եւ քաջալերեց մեր շարժումը եւ հրաւիրեց մեզ Զանգեզուր՝ հոն եւս տարածելու համար Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը եւ սկաուտական շարժումը: Խոստումով եւ ակնածանքով բաժնուեցանք մեր սիրելի հերոսէն»:

Հ.Մ.Ը.Մ.:

Այս չորս գիրերը կը ներկայացնեն լաւագո՛յնը անցագրերուն եւ անձնաթուղթերուն: Ո՛ր ալ երթաս, տղա՛ս, ամէն մարդ պիտի ճանչնայ քեզ ու պիտի սիրէ քեզ ու պիտի պատսպարէ քեզ, որովհետեւ ամէն տեղ հպարտանքո՛վ պիտի պտըտցնես լաւագոյնը հաւատարմագրերուն, որ երբեւիցէ յղացուած ըլլայ մարդկային մտքին կողմէ:

ԵՂԻԾԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԱՐՇԱԻԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Արշաիր Շիրակեան ծնած է Պոլիս ու մեծցած՝ իրենց տունը ժամադրավայր դարձուցած ազգային դէմքերու եւ գործիչներու շունչին տակ, որոնք շուտով իրենց շրջանակին մէջ կ'առնեն պատանի Շիրակեանը եւ իրեն կը յանձնեն տեղեկութիւններ հաւաքելու գործը: Շնորհիւ իր փոքր տարիքին, բնական ուշիմութեան եւ արագաշարժութեան, մեծ ճարտարութեամբ գլուխ կը հանէ իրեն վստահուած բոլոր գործերը:

Պատերազմի ընթացքին փախստական մտաւորականներուն կը մատուցանէ թանկագին ծառայութիւններ:

Զինադադարին կ'անդամագրուի Տրամադիկին, բայց իր բուն զբաղումը կ'ըլլայ թաքստոցներէն գոյք դուրս հանել եւ յարմար վայրեր փոխադրել: Այդ օրերուն իրեն կը յանձնուի նաեւ Վահէ Իհսան անունով հայ մատնիչը աչքէ չհեռացնելու պարտականութիւնը: Աւելի ուշ իրեն կը յանձնուի Վահէ Իհսանին ահաբեկումը, զոր կը կատարէ 1920 Մարտ 27ին, Պոլսոյ Թարլապաշի պողոտային վրայ:

Երկու ամիս փախստական կը մնայ եւ գուիցերիական անցագրով, երկար ողիսական մը ապրելէ ետք, 1920 Յունիսին կը



հասնի Հայաստան: Նոյն տարին, պատերազմական նախարար Ռուբէնի որոշումով, Արամ Երկանեանի հետ կը դրկոյի Պաքու, Էնվէր եւ Խալիլ փաշաները ահաբեկելու: Թիֆլիսի մէջ կը ձերբակալուին ու կը նետուին Մետեխի բանօրը, ուրկէ կը յաջողին խոյս տալ: Երակեան կը վերադառնայ Պոլիս: Պատասխանատու մարմինը կը դրկէ զինք Հոռն, Թուրքիոյ վարչապետ Սայիտ Հալիմ փաշան ահաբեկելու համար: 1921 Յունիսին Արսիլ Սիսակ անցագրով ճամբայ կ'ելլէ եւ Դեկտեմբեր 5ին, հեքիաթային պարագաներու տակ, կ'ահաբեկէ Սայիտ Հալիմ փաշան:

Կը վերադառնայ Պոլիս, ուր կը հաղորդուի իրեն, թէ յաջորդ հանգրուանը Պերլինն է: Կը մեկնի ու երեք ամիս շարունակ մասնակցել է ետք հետապնդումի գործին, 1922 Ապրիլ 17ին, իր գործակից ընկերոջ՝ Արամ Երկանեանի հետ կ'ահաբեկեն Ճեմալ Ազմին եւ Պէհաւտտին Ծաքիրը:

1923ի սկիզբները կը մեկնի Միացեալ Նահանգներ ու կը հաստատուի Նիւ Ճըրքի:

1965ին Պէյրութի «Համագգային»ի տպարանը լոյս կ'ընծայէ իր յուշերը՝ «Կտակն էր նահատակներուն» անունով:

Խղճի սրբազան պարտքը կատարած մարդու հանգստութեամբ՝ Արշաիր Երակեան իր ժողովորդէն յաիտենապէս կը բաժնուի 12 ապրիլ 1973ին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱՐՇԱԻՐ ԾԻՐԱԿԵԱՆ

Եղբայրասիրական տենդով տոգորուն՝ Արշաիր Երակեան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան թուականներէն սկսեալ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր սերունդին հետ: Ուրախութեամբ ողջունած է Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը եւ ատկէ ետք, ամէն տեղ եւ ամէն առիթով, քաջալերած է Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը եւ գնահատած է անոնց ազգանուէր գործունէութիւնը: Երակեան Հ.Մ.Ը.Մ.ը սիրած է համոզումով, հաւատքով: Հ.Մ.Ը.Մ.ի արձանագրած նուանումներուն եւ յաղթանակներուն մէջ տեսած է հայ ժողովորդի փթթումը եւ հայ երիտասարդութեան վերականգնումը՝ առողջ եւ գաղափարապաշտ տեսլականով:

Պոլսէն յետոյ, Երակեան արդէն Հայաստան է - Պաթում, Թիֆլիս, Երեւան: Եւ ի՛նչ երջանիկ հանդիպումներ ու ընկերութիւն վահան Չերագի, Տիգրան Խոյեանի եւ Օճնիկ Եազմանեանի հետ: Հայաստանեան առաքելութեան անդամներէն Տիգրան

Քհնյ. Խոյեան, իր «Նահատակ ցեղի անմահներ» գիրքին մէջ, յատուկ սիրով ու քաղցր ապրումով կը նկարագրէ այս հանդիպումը.

«... Ծաբաթ , 9 Օգոստոս 1920: Կը մեկնինք Պաթուսէն, շոգեկառքով՝ դէպի Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երեւան: Պաթուսի հայ հիւպատոս՝ պրն. Աթաբէկեանի խոստումին համաձայն, մեզի տրամադրուած է առանձին վակոն, ու ընդունած ենք ալեքսանդրապոլցի մայրիկ մը եւ երեք քոյրեր (Խոստավէրտեան), ինչպէս նաեւ կարնեցի ուրիշ գաղթական մը. որով վակոնին մէջ կը գտնուին տասը հոգի եւ մեր Պոլսէն բերած մարգական եւ սկաուտական գոյքերու սնտուկները: Մեզի հետ է ԱՐՇԱԻԻՐ ՇԻՐԱԿԵԱՆը, մեր յանդուգն հերոսը, որուն անակնկալօրէն հանդիպեցայ Պաթուսի գլխաւոր պողոտային վրայ: Ես զինք Երեւանի մէջ կը յուսայի տեսնել, որովհետեւ մէկ ու կէս ամիս առաջ մեկնած էր Պոլսէն: «Անառակ»ը իրեն յատուկ արագութեամբ պատմեց իր ճամբորդութիւնը, թէ ինչպիսի արկածներ անցուցեր եւ, Արշաւիրավայել ողիսականէ մը ետք, վերջապէս յաջողեր էր հասնիլ Պաթուս: Երբ իմացաւ թէ շուտով կը մեկնինք Երեւան, որոշեց իր գործերը արագ կարգադրել ու միանալ մեզի...»:

Ահա եւ մէկ ուրիշ պատկեր.

«... Հիմա, Սանահինի կը մօտենանք, արդէն Հայաստանի հոտը կ'առնենք... Մեր ամբողջ կարաւանը զարդարուած է հայկական դրօշակներով եւ ուռնիի ճիւղերով, որոնցմով այնքան հարուստ են ԴԵՆ ՊԵՏ գետի եզերքները: Ծոգեկառքը կանգ կ'առնէ Մատախլու կայարանը: Առիթէն օգտուելով, կ'երթանք լողալու: Չերագին ու Արշաւիրին հետ Դենպետի զով ջուրերուն մէջ երբ լողանք կ'առնէինք, սկսայ երգել «Անոյշ»ի «վուշ վուշ, Անոյշ»ը: Ըիրակեան հեռուէն ընկերակցեցաւ ինձի: Հաճելի եւ անմոռանալի օր մը անցուցինք միասին Սանահինի մէջ: Յաջորդ օրը ճամբայ ելանք դէպի Ալեքսանդրապոլ եւ ապա Երեւան՝ լաւ օրերու հեռանկարով...»:

Այնուհետեւ, ուր որ գնաց, Ըիրակեան միշտ մնաց Հ.Մ.Ը.Մ.ի կողքին, քաջալերեց անոր երիտասարդ ղեկավարութիւնը, ամէնուրեք պատգամելով՝ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայելով, մենք ծառայած կ'ըլլանք մեր պահանջատիրութեան:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱԶԳԱԶԻՆ ԳՈՐԾԻՉ ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Աւագանի անունով՝ Կարապետ-Կարպիս, Հրաչ Փափազեան, ծնած է, 19 Յունիս 1892ին, Եոզկատ:

Եօթ տարեկանին կը փոխադրուի Սեբաստիա, ուր հինգ տարի մնալէ ետք, 1904ին կը դրկուի Պոլիս իր ազգականներուն մօտ եւ հոն ալ կը ստանայ իր կրթութիւնը: 1910ին կը մտնէ Հ.Յ.Դ.ի շարքերը եւ մինչեւ 1922 կ'ունենայ բեղուն գործունէութիւն:



Պոլսոյ իրաւաբանական համալսարանի ուսանողներէն եւ 1914ի ընթացաւարտներէն էր Կարապետ: Համաշխարհային Առաջին պատերազմէն ետք կը դրկուի զինուորական վարժարան: Հազիւ սպայի աստիճանը ստացած՝ կը փախի եւ կը պահուրտի, Պոլսոյ մէջ, ապա՝ 1918ին, թուրք սպայի մը ինքնութեան թուղթով կ'անցնի Հալէպ՝ կորսնցնելով իր հետքը:

1919ին կը վերադառնայ Պոլիս: Բաց աչքերով տեսած էր Մեծ Եղեռնը եւ սիրտը լեցուած էր վրէժխնդրութեամբ: Կը կապուի Դաշնակցութեան պատասխանատու մարմինին, կը ստանձնէ պատասխանատու պարտականութիւններ եւ ի յայտ կը բերէ պահանջած բոլոր ընդունակութիւնները:

ԳՈՐԾԻ ՄԱՐԴԸ

Գործի մարդ էր Հրաչ Փափազեան եւ օր մըն ալ, իր առա-

ջարկին հիման վրայ, իրեն կը վստահուի շատ կարեւոր գործ մը՝ Պերլինի մէջ:

Պերլին գտնուող հայ հետախույզները կրցած էին երեւան հանել հետքը Տրապիզոնի ջարդարար կուսակալ Ճեմալ Ազմիին, որ սկկարեթի խանութ մը բացած էր հոն: Կրցած էին գտնել նաեւ հետքերը Պոլսոյ ոստիկանական տնօրէն եւ ապա Պէյրութի կուսակալ Ազմիին եւ ասոր կարգին նաեւ ուրիշներու, բայց տակաւին անյայտ կը մնար Պէհաէտտիին թաքստոցը: Յապաղու մը կրնար ձախողեցնել անոր դէմ արձակուած մահապճիողին գործադրութիւնը, որովհետեւ մէկ օրէն միւսը ան կրնար հեռանալ Պերլինէն: Ասկէ զատ, կարեւոր էր ոճրագործներուն շրջապատէն իմանալ անոնց մշակած ծրագիրներն ու տեղեկանալ անոնց շարժումներուն, որպէսզի ըստ այնմ ձեռք առնուէին անհրաժեշտ միջոցները:

Եւ Հրաչն է, որ կ'առաջարկէ Պոլսոյ պատասխանատու մարմինին՝ թուրքի ծպտումով երթալ Պերլին եւ հոն փորձել օգտուիլ ջարդարարներու շրջանակին մօտեցալու եւ անոնց հետ մտերմանալու պատենհութենէն: Լաւ թրքագէտ եւ թրքախօս, մօտէն ծանօթ թրքական բարքերուն եւ կրօնական սովորութիւններուն, այլեւ մեծապէս պաղարիւն եւ շրջահայեաց, Հրաչ ունէր առաջադրուած գործը լաւագոյն արդիւնքով գլուխ հանելու ինքնավստահութիւնը: Ուրեմն առաջարկը կ'ընդունուի եւ Հրաչ կ'անցնի գործի: Ամէնէն առաջ կը թլփատուի: Ապա, քանի մը շաբթուան ընթացքին կը ստանայ թաղապետի մը հաստատագիրը, կը հանէ անցագիրը, կը վերջացնէ օրինական ձեւակերպութիւնները եւ արդէն պատրաստ է ճամբայ ելլելու դէպի Պերլին:

«Թուրք» է այլեւս, հարիւրէն հարիւ, թէ՛ իր խօսակցութեամբ, թէ՛ իր արտայայտած մտածումներով եւ թէ շարժումներով: Անունն ալ՝ Մէհմէտ Ալի: Կեսարիոյ այսինչ գիւղէն, հարուստ, այլ մեռած թուրքի մը զաւակը, որ յանձնուած է նոյնպէս հարուստ, իր Ռիզա հօրեղբօրը հոգածութեան: Հիւանդ է եւ դարմանման ճար մը գտնելու համար, հօտերբայրը կը դրկէ զայն Պերլին, որպէսզի վայելէ մասնագէտ գերմանացի բժիշկներուն խնամքը: Գրպանը լեցուն է դրամով եւ պատրաստ է նիթական ամէն զոհողութեան, միայն թէ գտնուի իր հիւանդութեան դարմանը...: Եւ որովհետեւ ան ծանօթ է Պերլինին եւ գերմաներէնին, կը փնտռէ այնտեղ իր «ազգակից» թուրքերը, որպէսզի աջակցին իրեն բարոյապէս:

Այս է կազմուած ծրագիրը եւ ի գործադրութիւն այս ծրագրին, 1921ի աշնանավերջին, Հրաչ Փափազեան Պոլսէն կը մեկնի Պերլին: Այնտեղ են արդէն կատարուելիք նոր ահաբեկումներու կազմակերպիչները եւ հետախոյզները: Դեկտեմբերին հոն կը հասնի Պէհաւտտինը սատկեցնելու պարտականութիւնը ունեցող ահաբեկիչ Արամ Երկանեանը, այն սքանչելի երիտասարդը, որ արդէն երեք յաջող ահաբեկումներ գլուխ հանած էր Թիֆլիսի մէջ, 1919-20 թուականներու: Քանի մը ամիս ետք Պերլին է նաեւ Սայիտ Հալիմի ահաբեկիչը՝ Արշաիր Ծիրակեանը, որուն գործը պիտի ըլլայ սատկեցնել Ծեմալ Ազմին:

Ու ահա՛ Հրաչն ալ Պերլինի մէջ: Սկզբնական քանի մը զգուշատր տեսակցութիւններ իր ընկերներուն հետ, հրահանգներու եւ ժամադրաւայրերու ճշդում եւ ապա հանդիպումներու վերջնական խզում իր եւ անոնց միջեւ: «Թուրք» մըն է ինք եւ իր տեղը թրքական շրջապատն է:

Ցոյց տրուած է իրեն Ծեմալ Ազմիի խանութը: Եւ օր մըն ալ կը մտնէ խանութէն ներս: Ազմիի տղան՝ Էքմէլն է այնտեղ: Կը ծանօթացնէ ինքզինքը, կ'ընէ իր պատմութիւնը եւ կը խնդրէ անոր աջակցութիւնը երիտասարդ ազգակցի մը, որ հիւանդ է եւ դարմանումի պէտք ունի: Էքմէլի վերաբերումը կ'ըլլայ շատ սիրալիի իր այս Վաթանտաշին հանդէպ: Կը բարեկամանան եւ, շատ չանցած, բարեկամութիւնը կը յանգի մտերմութեան: Էքմէլն է, որ կը տանի զինք մասնագէտ բժիշկներու եւ գիշերներն ալ հանոյքի կեդրոնները, ուր ընդհանրապէս Մէհմէտ Ալին է, որ կը ծախսէ: Խօսակցութիւններ կը տաքնան: Էքմէլ կը պատմէ իրեն թուրքերու ծրագիրներու մասին: Կ'իմանայ, որ կը պատրաստուին անոնք մէկիկ-մէկիկ անցնիլ Անգարա եւ Պոլսարա: Էնվէր, Նազըմ, Մուսմէր եւ ուրիշներ անցած են արդէն, բայց տակաւին Պերլին կը մնան Պէհաւտտին Ծաքիրը, Պոլսոյ ոստիկանապետ Պետրին, Վանի կուսակալ Ծէվտէթը, Ազմին եւ ուրիշներ: Կ'իմանայ մտանապէս, որ Պէհաւտտին Ծաքիր վերադարձած է Պոլկարիայէն, ուր գացած էր զէնք եւ ռազմանիւթ գնելու Մուսթաֆա Քէմալի համար:

Յաճախ կ'այցելէ խանութ: Ծեմալ Ազմին առանց նուազագոյն կասկած ունենալու իր անդրանիկ զաւկին ընկերոջ ինքնութենէն, ցոյց կու տար իրեն հանդէպ հայրական վերաբերում: Այնտեղ կը հանդիպի ուրիշ ջարդարարներու: Եւ կը լսէ անոնց խօսակցութիւնները: Ամէն ինչ կարգին է. երբ օր մը կը պատահի անախորժ անակնկալ մը:

Ծեմալ Ազմիին խանութը գտնուած պահուն, ներս կը մտնէ Պոլսոյ իրաւաբանական վարժարանի Հրաչի դասընկերներէն թուրք երիտասարդ մը: Էքսէլ կը ծանօթացնէ Մէհմէտ Ալին: Եւ երբ այս վերջինը կը մեկնի (օրեր անց Էքսէլն է, որ կը պատմէ -, թուրքը կ'ըսէ անոր, Մէհմէտ Ալին շատ կը նմանէր Պոլսոյ իր մէկ դասընկերոջ, որուն անունն էր Կարապետ Փափագեան Հրաչը ի'նքը)...: Կասկածն է, որ կը ծագի Էքսէլի մտքին մէջ, թէ արդեօք Մէհմէտ Ալին ծպտուած հա՞յ մըն է: Էքսէլ, Մէհմէտին ինքնութիւնը ճշդելու համար, կը դիմէ Տոթթ. Նազմիի, եւ Հրաչ պաղարհունութեամբ, պատշաճ պատասխաններ տալով անոր հարցումներուն, Տոթթ. Նազմի եւս Հրաչը կ'ընդունի որպէս կատարեալ թուրք մը Կեսարիայէն: Էքսէլ բարեբախտաբար չի կրնար համոզել ինքզինք այս կասկածի ուղղութեամբ եւ չ'ուզեր մտքէն անցընել, թէ իր այնքան մտերիմ ընկերը կրնար այդպիսի մէկը եղած ըլլալ: Իրարու նմանող մարդիկ քի՞չ կան աշխարհի երեսին: Հրաչ յաջորդ օրերուն իր շփումներով կը հաստատէ, թէ ոչ իսկ Ծեմալ Ազմին հաւատացած էր նման եմթադրութեան մը: Կարելի՞ էր այսքան կեղծիք, երբ Մէհմէտ Ալին ամէն տեղ ի յայտ կը բերէ թուրքի հարազատութիւնը: Օրինակի համար, Մարտ 15ին, բոլոր թուրք ջարդարարներուն հետ ներկայ կը գտնուի Թալէաթի սպանութեան առաջին տարելիցին առթիւ կատարուած հոգեհանգիստին, ինքն ալ կ'աղօթէ Մոլլա-յին հետ:

Արդարեւ, Էականը այն էր, որ շնորհիւ Էքսէլի հետ ունեցած իր մտերմութեան, Հրաչ յաջողած էր ստուգել Պէհաւտտին Ծաքիրի թաքստոցը եւ երեկոյ մը, ճաշարանի մը լուացարանին մէջ, տեղեկացուցած էր լուրը ահաբեկչական խումբի ղեկավար Ծահանին: Գործը դիրացած էր այլեւս եւ շուտով պիտի գործադրուէին ահաբեկումները: Ապրիլ 17ի կէս գիշերին, երկու կտրիճները մէկ-մէկ գետին փռեցին Պէհաւտտին Ծաքիրը եւ Ծեմալ Ազմին:

Հրաչ կատարած էր իր պարտականութիւնը պաղարհունութեամբ եւ մեծ ճարպիկութեամբ, եւ երբ ամէն ինչ պատրաստ էր իր մեկնումին համար, հրաժեշտ կ'առնէ Էքսէլէն եւ թրքութեան դիմակը Պերլին ձգելով՝ կը վերադառնայ Պոլիս 1922ին Մայիսին, հայ կտրիճի միտոնը ճակատին:

ՔԱՂԱՔԱԳԷՏԸ

Յստակատես քաղաքագետ, ճկուն ու հեռատես դիւանագետ մըն էր Հրաչ Փափազեան: Սուրիացի մեծ ղեկավար մը իր մասին ըսած է. «Առանց Հրաչի կարծիքը առնելու, երկրին համար կենսական կարեւորութիւն ներկայացնող որեւէ որոշում չենք առներ»:

Ան սերտ կապեր ունեցած է սուրիական պետական վարիչներուն հետ եւ դարձած գործակիցը Սուրիոյ հանրապետութեան նախագահ Շուքրի Քուաթլիի:

Խօսքը կշիռ էր նաեւ Ազգային Իշխանութեան մէջ, գաւառական, քաղաքական եւ Ազգ. Ընդհ. Ժողովներուն մէջ, Հալէպէն մինչեւ Պէյրութ եւ Անթիլիաս:

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

1922ին Հրաչ Փափազեան կը հեռանայ Պոլիսէն եւ կ'անցնի Յունաստան, ուր կը զբաղի ազգային, քաղաքական եւ կուսակցական աշխատանքներով: 1926ի վերջերը կը հաստատուի Հալէպ:

Հրաչ Փափազեան մեծ դեր կ'ունենայ Հալէպի «Համազգային»ի հիմնադրութեան մէջ 1930էն:

Մեծ դեր կ'ունենայ նաեւ Հալէպի Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի հիմնադրութեան մէջ՝ 1947ին:

Հրաչ Փափազեան հիմնադիրն ու արտօնատէրն էր նաեւ Հալէպի մեծագոյն հայ օրաթերթին՝ «Արեւելք»ին, շրջան մը վարելով անոր տնօրէնի պատասխանատու պաշտօնը:

ՄԱՀԸ

1957ին Հրաչ Փափազեան կը փոխադրուի Պէյրութ, երբ արդէն գէշ հիւանդութիւնը սկսած էր իր աները գործել: Իր կեանքին վերջին ամիսները կ'ըլլան ծանր եւ այդ տառապանքով ալ կը փակէ իր աչքերը: Ազգային յուղարկատրութիւն տեղի կ'ունենայ նախագահութեամբ՝ Զարեհ Ա. Վեհափառ Հայրապետին, որ այդ առիթով կը խօսի յուզիչ դամբանական մը եւ Եռագոյնով ծածկուած դագաղը կը յանձնուի հողին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՀՐԱԶ ՓԱՓԱԶԵԱՆ

Ազգային բոլոր գործիչներու նման Հրաչ Փափազեան եւս եղաւ այն անձերէն, որոնք պորտակապով կապուած մնացին Հ.Մ.Ը.Մ.ին, վաղ տարիքէն մինչեւ խոր ծերութիւն, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ տեսան հայ ժողովուրդի գոյատեւման նպաստող բոլոր էատարրերը: Տեսան, զգացին ու վկայեցին, որ Հ.Մ.Ը.Մ. անփոխարինելի ուժ է, եզակի միութիւն է՝ հայը հայ պահելու գծով, սփիւռքի ապահայացնող մթնոլորտին մէջ: Հրաչ Փափազեան նաեւ մարգասէր էր: Առիթ չէր փախցնէր ներկայ ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ի ֆուրսայուի մրցումներուն, ըլլան անոնք Հալէպի մէջ, թէ այլուր: Մրցախաղի մը պարտութիւնը բան չէր նշանակէր իրեն:

Օր մը, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբի բակին մէջ, ֆուրսայուի անտեղի պարտութենէ մը վերջ, երբ երիտասարդութիւնը ակումբին մէջ կը վիճէր, ինք, ի տես երիտասարդութեան յուզման, հանդարտեցնելու համար անոնց գրգռուած շիղերը, խօսք առաւ եւ քանի մը բառեր ըսաւ, որոնց մէջ շեշտեց, թէ պէտք չկար իրար անցնելու, որովհետեւ պարտութիւնները յաղթանակներու կ'առաջնորդեն: Այդպէս էր, եթէ քանի մը բառ ըսէր, բա՛ն կ'ըսէր, պատգա՛մ կու տար...

Մարգասէր էր Հրաչ Փափազեան: Միշտ անպակաս էր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ հանդիսութիւններէն, միջ-մասնաճիւղային հանդիպումներէն: 1958ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի ֆուրսայուի խումբը քաջալերելու համար, Գահիրէի մէջ նույնիսկ Ահլիի մարզադաշտն էր: Հոգեպէս կը վերանար դիտելով Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն եւ սկաուտներուն հպարտադէմ տողանցքը, որ ամէն տարի տեղի կ'ունենար Հալէպի մէջ, Ս. Զատկուան տօներուն, որովհետեւ այդ հանդիպումներուն առթած ազգային ոգեշունչ մթնոլորտը անմոռանալի յիշատակներ կը թողուր իրաքանչիւր հայորդիի յիշողութեան եւ հոգիին մէջ եւ կ'երթար հեռուները՝ մինչեւ Մայր Հայաստան:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՄԱՐԶԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝ ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 1894ին, Պոլիս (Կէտիկ փաշա): Նախակրթութիւնը ստանալէ ետք թաղային վարժարանին մէջ, յաճախած է Պէրպէրեան, Պարտիզակի Ամերիկեան վարժարանը, ապա՝ Պոլսոյ «Ռոպըրթ գոլէճ»ը: Ուշիմ է զգայուն, բայց մանկութենէն իսկ ըմբոստ Մատթէոս Զարիֆեան չի կրնար հաշտըիլ օտար հաստատութեանց մթնոլորտին հետ եւ դարձեալ կը մտնէ Սկիւտարի Պէրպէրեան դպրոցը, ուր կը տիրէր գրական եւ հայրենասիրական մթնոլորտ: 1913ին կը մեկնի Ատանա՝ կրթական գործին նուիրուելու որոշումով: Սակայն տարի չբոլորած, անակընկալ հիւանդութիւնը կը ստիպէ, որ աշխատանքը ձգէ եւ անցնի Լիբանան՝ բուժուելու համար:



1914ին Մ. Զարիֆեան դարձեալ Պոլիս է եւ կը փափաքի բժշկութեան հետեւիլ: Սակայն թոքախտի նշանները եւ Համաշխարհային Առաջին պատերազմը արգելք կ'ըլլան իր ծրագիրներուն: Կը կանչուի զինուորական ծառայութեան: Զօրանոցի մնայլ եւ կաշկանդուած կեանքը կը ջլատէ զինք՝ հոգեպէս եւ ֆիզիքապէս:

1918ի գինադադարին Մ. Զարիֆեան կ'ազատի թրքական բանակի ծառայութենէն եւ իր հոգիին մէջ կը ծլին նոր յոյսեր:

1919ին Մ. Զարիֆեան կը դառնայ թարգման անգլիական բանակին մէջ: Յանձնախումբի մը հետ կը մեկնի գաւառ՝ արեւելեան նահանգներու վերաբերեալ տեղեկագիր մը կազմելու եւ հայ որբուկներ հաւաքելու առաքելութեամբ: Բացուած էր ազգային ծառայութեան ասպարէզ մը, որուն կը նուիրուի անսպառ եռանդով:

Սակայն 1920ին թոքախտը կը սկսի աւերներ գործել բանաստեղծի կուրծքին տակ: Հակառակ հիւանդութեան, Պէրպէրեան վարժարանի մէջ կը ստանձնէ անգլերէն լեզուի եւ մարմնակրթանքի դասեր:

Պէրպէրեան վարժարանի ուսուցչական շրջանը անոր կարճատեւ ստեղծագործական կեանքի ամենէն բեղուն շրջանն է: Այս շրջանին կը գրէ իր լաւագոյն բանաստեղծութիւնները եւ օրագրութեան էջերը:

Կը մեռնի 9 Ապրիլ 1924ին եւ կը թաղուի Սկիւտարի հայոց գերեզմանատունը, Պետրոս Դուրեանի մօտ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Մ. Զարիֆեանի ստեղծագործութեան շրջանը հազիւ վեց տարի տեւած է, 1918-1924: Առաջին բանաստեղծութիւնները լոյս տեսած են Պոլսոյ «*Մակատամարտ*» թերթին մէջ:

Առանձին հատորով հրատարակած է՝

1. «Տրտմութեան եւ խաղաղութեան երգեր»,
2. «Կեանքի եւ մահուան երգեր»:

Մատթէոս Զարիֆեանի գրականութիւնը կը զուգահիշի պատմական եւ հոգեբանական բացառիկ պահու մը: Այն տարիներուն, երբ ինք սկսաւ գրել (1918-1924), ամայացած էր մեր գրական անդաստանը: Արեւմտահայ գրականութեան վարպետները նահատակուած էին: Թերթերը լեցուն էին Եղեռնի ցնցող պատմութիւններով: Դադրած էր հնչելէ քնարերգութեան լարը:

Ահա այս կացութեան մէջ է, որ կը յայտնուի Զարիֆեան՝ իր գերազանցապէս նուրբ զգայարանքով:

**Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՄԱՐԶԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝
ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ**

Մ. Զարիֆեան եղած է նկարագրով անկեղծ, ընկերասէր եւ անձնագոհ: Երբ դեռ հիւանդ չէր, մասնակցած է ողիմպիական խաղերու եւ շահած յաղթանակներ, իբրեւ լաւ մարզիկ: Եղած է երեք քալլ ոստումի անպարտելի ախոյեան: Պալքանեան երկիրներու միջեւ տեղի ունեցած մրցումներուն խլած է միշտ առիծի բաժինը, ստանալով մէկէ աւելի ոսկեայ մետալներ:

1919ին, Հ.Մ.Ը.Մ.ի կամակերպած յետ-պատերազմեան առաջին ողիմպիականին, Մ. Զարիֆեան չի տար իրմէ ակնկալուած արդիւնքը: Արտօնուած երեք փորձերը կ'անցնին ապարդիւն: Տիգրան Խոյեան, որ կը շահի երրորդ դիրքը, տեսնելով Զարիֆեանի անհաւատալի պարտութիւնը, կը դիմէ իրաւարարին, որ չորրորդ առիթ մը շնորհէ բանաստեղծ մարզիկին: Իրաւարարը եւս շշմած Զարիֆեանի այս անակնկալ պարտութենէն, կը ներկայանայ մրցակիցներուն: Անոնց հաւանութիւնը առնելէ ետք, չորրորդ առիթ մը կու տայ Զարիֆեանին: Զարիֆեան, մոռցած ինքզինք, հոգեկան ճոր ու թափ առած, կը թռչի ասուպի նման եւ կ'արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ ճախընթաց չունեցող մրցանիշ: Տարիներ ամբողջ, այդ մրցանիշը մնաց ամենաբարձրը:

Հետագային միայն իմացուեցաւ, որ այդ օր, չարաղէտ հիւանդութիւնը արդէն բոյն էր դրած գեղադէմ եւ անպարտելի մարզիկին կուրծքին մէջ:

**Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՍԿԱՌԻՏ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝
ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ**

Մ. Զարիֆեան եղած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սկաուտներէն: Երջան մը վարած է Հ.Մ.Ը.Մ.ի Սկիտարի մասնաճիղի սկաուտական միաւորի աւագ խմբապետի պաշտօնը:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ
ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ ՔԱՅԼԵՐԳԻ ՀԵՂԻՆԱԿԸ՝
ԳԷՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՅ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 1892ին, Պոլու (Թուրքիա): Նախնական ուսումը կը ստանայ Իզմիրի Մխիթարեաններու վարժարանը, իսկ երկրորդական ուսումը՝ Ամերիկեան գոլէճին մէջ, զոր կ'աւարտէ 1908ին:

Այնուհետեւ, ուսուցչական ասպարէզը ընդգրկելով, կը դասաւանդէ Թուրքիոյ գանազան քաղաքներուն, յատկապէս Անգարայի մէջ: Միաժամանակ կը գործէ ու կը ստեղծագործէ՝ որպէս բանաստեղծ-գրագէտ եւ խմբագիր-մտատրական:

1938ին, իր կնոջ եւ երկու զաւակներուն հետ կը փոխադրուի Յունաստան: Կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին: Գաղափարի տէր մարդ էր պատանի տարիքէն: Քերթողական արուեստին հետ կը մշակէ նաեւ երաժշտութիւն: Կը յօրինէ ու կը դաշնաւորէ բազմաթիւ երգեր: Կը գրէ ազգայնաշունչ շարք մը բանաստեղծութիւններ, որոնցմէ աչքի կը զարնեն «Կամաւորական քայլերգ»-ն ու «Յառաջ Նահատակ»-ը: Հ.Մ.Ը.Մ. այս վերջինը կ'որդեգրէ որպէս իր պաշտօնական քայլերգը:

Տառապանքի, տրտմութեան, խռովքի եւ հայրենասիրութեան լարերով կազմուած է Կառվարենցի քնարը: Ունի էջեր, որոնք ինքնատիպ զգայնութեանց եւ խորաթափանց մտքի ստեղծագործութիւններ են, ճոխ բառամթերքով եւ տեղ-տեղ, խրթին տողերու մէջ անգամ, հնչելը կշռոյթով եւ իմաստի ու պատկերներու գեղեցկութիւններով զեղուն:



Քերթուածները ամփոփուած են երեք գիրքերու մէջ - «Հառաչանքներ» (1910), «Գերեզմանի Ծաղիկներ» (1921) եւ «Տաւիղ Եւոլեան» (1931):

Կառվարենց կը դառնայ նաեւ երգչախումբերու արժէքաւոր խմբավար եւ իր երգահանդէսներով կը դառնայ համբաւի տիրացած անուն՝ յունահայ գաղութին մէջ:

Կառվարենց ունէր նաեւ դերասանական շնորհք:

Կառվարենց լաւ գիտէր ֆրանսերէնն ու անգլերէնը: Կատարած է շատ յաջող թարգմանութիւններ օտար գրականութենէն, յատկապէս՝ Օսկար Ուայլտէն: Այս բոլորի կողքին, ան հիանալի հռետոր էր եւ անուն ունէր որպէս ինքնատիպ դամբանախօս:

Բնատրութեամբ շատ դիրահաղորդ էր: Կառվարենց միշտ կը փնտռուէր իր շրջանակէն՝ ընկերական-բարեկամական հաւաքոյթներու ընթացքին: Իր ներկայութիւնը զուարթութիւն կը սփռէր ամէնուրեք: Պատրաստաբան էր ու կատակախօս: Ապրուած մանրավէպերու շտեմարան մըն էր եւ արագօրէն՝ զուարթ քառեակներ յօրինող: Առանձնութեան մէջ՝ ընդհանրապէս մտատոյզ, գործի պահուն՝ ժիր ու լուրջ:

Համաշխարհային Երկրորդ պատերազմէն առաջ, Աթէնքի մէջ, կը հրատարակէ իր բանաստեղծութիւններուն հաւաքածոն «Տաւիղ Եւոլեան» խորագրով: Յաճախորդ գտնելու փնտռութիւն մէջ, երկու օրինակ ալ կը դրկէ ունէտոր հայրենակիցի մը: Այս վերջինը, գիրքերը ստանալէն ետք, պաշտօնեային կը պատուիրէ գիրքի հեղինակին դրկել երկու սթերլիննոց չէք մը: Կառվարենց ափ ի բերան կը մնայ, երբ կը տեսնէ, որ չէքը գրուած է գրքի անունին, փոխանակ գրքի հեղինակին: Արդարեւ չէքին վրայ գրուած էր.

PAY TO THE ORDER OF MR. DAVIGH YEVOLIAN

Ի ծնէ կատակաբան, ա՛լ կարելի է երեւակայել խնդուքը, ի տես չէքը պատրաստող պաշտօնեային եւ զայն ստորագրող հայրենակիցին այն շփոթութեան, որ ծագած էր անշուշտ գիրքի «եան» վերջատրութենէն եւ որ մղած էր երկուքն ալ կարծելու թէ Տաւիղ Եւոլեան անունով մարդ մը կ'ապրի Աթէնքի մէջ...

Ու կ'աւելցնէ.

- Եթէ հարուստ եղած ըլլայի, կը պահէի այս չէքը, հայ գրքի մասին ոմանց ունեցած հասկացողութեան իբրեւ օրինակ...

1943ին, իր ընտանիքին հետ կը փոխադրուի Վիեննա: Յանկարծամահ կ'ըլլայ 4 Սեպտեմբեր 1946ին, Միլանոյի մէջ, ուր դարձեալ ապաստանած էր պատերազմական անցքերու հետե-

ւանքով: Ապրուստի ծանր մտահոգութիւններով եւ զրկանքներով լեցուն տաժանք մը եղաւ իր կեանքը վերջին տարիներուն եւ այդ մտալլկումներուն ճնշման տակ ալ, առաւօտ մը, մէկ անգամէն կանգ առաւ իր այնքան զգայուն սիրտը, Միլանոյի մերձակայ գիւղական կայարանի մը մէջ:

Գէորգ Կառվարենցի «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ» բնութագրումը այնքա՛ն հարազատօրէն պատկերած ու դրոշմած է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մէջ թրծուած-կազմաւորուած իրերայաջորդ սերունդները, որ մեր կողմէ ինչ ալ գրուի ու ըսուի, պիտի չկարենայ այս կազմակերպութեան ծնունդին եւ աշխատանքի թափին շնորհած ներշնչումը ներկայացնել այնպէս, ինչպէս որ ներկայացուած է միեւնոյն քայլերգի յաջորդող տողերուն մէջ:

«Յարեալ վեհօրէն՝ դամբանէն խաւար»...

Մ. ՔԻԻՐՏՕՂԼԵԱՆ

ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ
(Քայլերգ Հ.Մ.Ը.Մ.ի)

Դաշնաւորում Բ. Կանաչեան

Հեղինակ՝ Գ. Կառավարենց

Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ,
Վեց դարու անմեռ վրէժի զրահներ,
Կատարն հայրենի լերանց հեռագոյն,
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:
Հսկայ նուիրման
Տորմի՛ղ հըրաթեւ,
Կամաւո՛ր բանակ,
Յառա՛ջ անասան,
Յառաջ անդեղեւ,
Դէպի յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,
Տարագիր հայն իր կեանքը նորոգեց,
Երէկ շղթայուած, այսօր ինքնավար,
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:

Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը կախում չունի իր խումբերուն եւ մարզիկներուն տարած յաղթանակէն կամ կրած պարտութենէն:

Պարտութիւններէն կրնան մտահոգուիլ անոնք, որոնց գոյութեան միակ յենարանը եւ նպատակը իրենց խումբերուն յաղթանակներն են:

Հ.Մ.Ը.Մ.ը սրբացած, քիւրեղացած նպատակին ձգտող Միութիւն է: Անոր համար պարտութիւններն ու յաղթանակները կարեւորութենէ զուրկ են:

Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակը Հայ հոգիի, Հայ նկարագրի եւ Հայ բազուկի ազնուացումն ու ուժեղացումն է:

ԼՈՒՏԵՐ ՄԱՍՊԱՆԱԾԵԱՆ

Այս կազմակերպութեան իսկական դերը, արժէքն ու տարողութիւնը կարենայ կշռելու համար, կը բաւէ միայն պատկերացնել այն պարապը, որուն պիտի մատնուէր հայ կեանքը առանց ստոր:

Արդարեւ, աշխարհատարած հայ բեկորներ իրենց շօշափելի աչքերով ո՞ւր եւ ինչպէ՞ս պիտի տեսնէին եւ շօշափէին ցեղին վերածնունդը, եթէ չըլլար գաղութներու անմխիթար վիճակին քիչ մը խանդ սրսկող հայ մարզիկներու, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու կայտառութիւնը:

Իսկապէս, մեզմէ ո՞վ չէ ենթարկուած անբացատրելի այն խռովքին, երբ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներ ու արեւոյշներ, Եռագոյն դրօշի առաջնորդութեամբ, կարգապահ շարքերով հպարտօրէն տողանցքի են ելած օտար երկիրներու ճամբէքին:

Ազգային բանակի կարօտը մեր սրտերուն, սկառուտական այդ տողանցքներուն մէջէն մենք տեսած ենք նահատակ ցեղի անմահներու յաղթական երգն ու երթը:

ՄԻՀՐԱՆ ԲԻԻՐՏՕՂԼԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԵՍԱԲԱՆ ԳՐԱԳԷՏԸ՝ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

ԿԵԱՆՔԸ

Աւագանի անունով՝ Մուշեղ Ծէնտէրէճեան: Ծնած է 1913ին, Սիվրիհիսար (Անգարա): Նախնական եւ միջնակարգ ուսումը ստացած է Դամասկոսի Ազգային վարժարանին եւ Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան մէջ, ուր աշակերտած է Յակոբ Օշականին, ապա՝ Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանին մէջ, զոր աւարտած է 1935ին: Երեք տարի իբրեւ հայոց լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցիչ ճեմարանի մէջ պաշտօնավարել է ետք, 1938ին մեկնած է Պրիքսէլ, ուր հետեւած է գրականութեան եւ մանկավարժութեան:



Գերմանական արշաւանքի օրերուն՝ փախուստ տուած ու վերադարձած է Պէյրութ, ուր իբրեւ ուսուցիչ եւ դասախօս պաշտօնավարած է Նշան Փանալճեան ճեմարանին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքին մէջ՝ դասաւանդելով Հայ գրականութիւն, հոգեբանութիւն եւ մանկավարժութիւն: Հիմնադիրներուն մահէն ետք, կը վարէ ճեմարանի փոխ տնօրէնի պաշտօնը, միաժամանակ գրադէլով գրականութեամբ, ստորագրելով գաղափարական, ազգային եւ մշակութային յօդուածներ: Աշխատակցած է Հայ մամուլին:

ԳՈՐԾԵՐԸ

«Տուներու երգը» (բանաստեղծություն), «Կրակը» (բանաստեղծություն), «Հայաստան» (բանաստեղծություն), «Կեանք եւ էրազ» (բանաստեղծություն), «Հացի եւ լոյսի համար» (վէպ), «Հացի եւ սիրոյ համար» (վէպ), «Երեք մեծ հայեր», «Ողջոյնք եզ, կեանք» (բանաստեղծություն), «Ոսկի աշուն» (բանաստեղծություն), «ՏԱՌԱՊԱՆՔ» (բանաստեղծություն), «Մեննիլը որքան դժուար է» (թատերախաղ), «Արդի հայ գրականություն» (երեք հատոր), «Սպասում» (յուշագրական վէպ), «Սառնաքանէն ելած մարդը» (վիպակ), «Թատերախաղեր»:

Մուշեղ Իշխան յետ Եղեռնի սերունդին ամէնէն օժտեալ քերթողներէն է:

Մշակած է գրեթէ գրական բոլոր սեռերը: Բոլոր գրուածքներուն մէջ արծարծած է նոյն հիմնական խնդիրները՝ հայրենիքի սէր, հայրենիքի կարօտ, հայ մօր պաշտամունք, հայ մշակոյթ եւ հայ ոգի: Ո՞վ անգիր չի գիտեր «Հայ մամիկիւն աղօթքը», ո՞ր բեմերէն չէ լսուած «Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն»: Մուշեղ Իշխանի տարագիր հոգին կ'ապրի ընդվը-զում՝ ի տես պանդուխտ իր ժողովուրդի ճակատագրին: «Ա՛յ կը բաւէ, Տէր Աստուած, Մեր տունն ու տեղ դարձուր մեզ»:

Մուշեղ Իշխանի բոլոր գրութիւնները կը յորդին ազգի ու հայրենիքի զգացումներով:

Իր աչքերը փակեց 10 Յունիս 1990ին, Պէյրութի մէջ: Մեռաւ գրիչը ձեռքին:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Ո՞րքան քնարակիր, նո՛յնքան հրապարակագիր ու կրթական մշակ Մուշեղ Իշխան մանկութենէն կապուած է Հ.Մ.Ը.Մ.ին: Ան-ցած է Հ.Մ.Ը.Մ.ի սկստութեան շարքերէն: Հետագային անոր հոգեկան կապը մնաց անքակտելի ու մամուլէն թէ բեմէն բազմիցս անդրադարձաւ մեր միութեան յաղթանակներուն եւ յաջողութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ.ի գրականութիւնը ճոխացաւ Մուշեղ Իշխանի գրութիւններով: Դարձաւ ուղեցոյց, պատգամ ու կոչ՝ ներկայ ու գալիք սերունդներուն:

Հիմնադիրներէն ետք, քանի-քանի սերունդներ իրենց ներ-շնչումը առին Մ. Իշխանի գրութիւններէն:



Հ.Մ.Ը.Մ.ի Գամակոսի կազմը 1927ի ընդհանուր ժողովին առիթով: Ետեւէն Բ. կարգ, ոտքի, ձախէն աջ երկ-
 րորդը՝ բուխուտեղծ Մ. Իշխան: Կեդրոնը՝ նստած այնտղով՝ առեւնայեա Ջարեհ Տօնապետեան, իր ձախիս
 ֆուրպոլիստ Օղլագեան եւ իր աջին ֆուրպոլիստ Սեպար:

Հիմնադիրներէն ետք, քանի-քանի սերունդներ արտասանե-
 ցին իր «Երգ շքերթի»ն ու քանիներ տողանցեցին հպարտ ու
 խրոխտ՝ յիշեալ քայլերգի հնչիւններով:

Ան Հ.Մ.Ը.Մ.ին նուիրեց սկաուտական քայլերգ «Հ.Մ.Ը.Մ.
 Հայ Արիներ» եւ «Երգ շքերթի», որ արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Մեր-
 ձաւոր Արեւելքի կազմակերպած մրցանքի առաջնութեան:

Ստորեւ կու տանք քաղուածքներ իր գրութիւններէն:

ԱՆՑԷՔ ՀՊԱՐՏ

Անցէ՛ք հպարտ, անցէ՛ք խրոխտ ու ժպտուն,
 Դուք ժառանգներ մեր փառապանծ անցեալին.
 Ձեզմով հիմա, ձեր շարքերուն հետ եռուն
 Կը տողանցէ երազն անմահ հայ ցեղին:

Պայքարներու եւ խոյանքի ախոյեան՝
 Ձեզ կ'ողջունեն սրտերը մեր բոցավառ.
 Յաղթանակի լոյս դափնիներ բազմազան
 Կը պսակեն ձեր ճակատները պայծառ:

Դո՛ւք էք ներկան, ձեր հաւատքով տիրական՝
 Գարնանային ձեր ծաղկումով յորդառատ.
 Դուք էք նաեւ մեր երջանիկ ապագան՝
 Փառքէ ի փառք ձեր վերելքով անվհատ:

Դարձէք բանակ, դարձէք հեղեղ ու անցէք
Օտարութեան ճամբաներէն այս բոլոր.
Չբոլորի եւ չկասի՝ թող երբե՛ք
Յառաջընթաց երթը կեանքին ձեր հօր:

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրութեան օրէն ի վեր մեր
մարզական եւ սկստական շարժումները ազգայնա-
ցուց, եւ այդ պատճառաւ հայ ազգը ինքզինք հարա-
զատ կը զգայ այս Միութեան:

Տղաք, Հ.Մ.Ը.Մ.ը երբ հազարներով կը տողանցէ,
հայ ժողովուրդը ձեր մէջ կը տեսնէ հայկական բանա-
կը, անկախութիւնը եւ զայն խորհրդանշող Եռագոյնը:
Անոնք ձեր մարզական մրցանիշներով եւ յաղթանակ-
ներով շատ ալ չեն հետաքրքրուիր, այլ անոնք ձեզ կը
տեսնեն ուխտաւորները այն բանակին, որ զինուորն է
հայոց պայքարին, որուն նպատակն է հայ մնալ եւ հե-
տապնդել Ազատ, Անկախ Հայաստան ստեղծելու իտ-
էալը:

Երբ դուք կ'ուխտէք եւ երդում կը կատարէք Եռա-
գոյնի, հայրենիքի եւ պատուոյ վրայ, դուք կը դառնաք
գաղափարապաշտ զինուորները Հայ Դատին:

Ծճմարիտ Հ.Մ.Ը.Մ.ականը ուխտեալ զինուորն է
Հայ Դատին: Ֆետայիի փափախին տեղ այսօր սկսու-
տի գլխարկը ձեր գլխուն, վաղը որպէս ուսուցիչ,
բժիշկ, արհեստաւոր կամ գործաւոր միակ մէկ նպա-
տակի պէտք է ձգտիք, մնալ ու ապրիլ որպէս հայ եւ
նուիրուիլ անկախութեան պայքարին:

*

**

Հ.Մ.Ը.Մ.ին դերն ու առաքելութիւնը ներկայիս
շատ աւելի դժուարացած են: Եթէ սկզբնական տարի-

ներուն այս կազմակերպութեան բուն նպատակն էր ֆիզիքապէս եւ հոգեպէս կրթել ու զօրացնել հայ պատանին, այսօր յաւելեալ պարտականութիւն մըն ալ ունի ան, նախ պիտի հայացնէ հայածին եւ հայանուն պատանին, որպէսզի կարենայ նաեւ զայն կրթել Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանով:

Սքանչելի է այդ նշանաբանը. «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր»: Բայց այլեւս անբաւարար է առանձին լրացնելու մեր ազգային ամէնէն կարելոր պահանջները: Առանձին՝ չի կրնար պատնէշ դառնալ մեր վտանգուած գոյութեան: Պէտք է որ այդ նշանաբանը իր զուգակշիռ ուղեցոյցը ունենայ. «Հայացի՛ր, հայացո՛ւր»:

*

**

Այսօր կ'անդրադառնամ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարգարաշտը կտոր մը հայրենի հող էր կարծես մեր ոտքերուն տակ: Հոն մենք կը մոռնայինք գաղթը, արքորը, թշուառութիւնը, ջարդերու պատկերներն անգամ, որոնց յիշողութիւնը այնքա՛ն թարմ էր տակաւին ամէնուն մտքին մէջ: Հոն մենք մեզ կը զգայինք մխիթարուած, երջանիկ, յուսալից: Հոն գալիքը մեզի կ'երելէր լուսաշող եւ կեանքը՝ վերածաղկող գարնան պէս խնդալից: Հոն կը հնչէր հայոց բարբառը, լիահագագ պոռթկումով: Եւ անո՛ւշ էր այդ լեզուն, իր բոլո՛ր էլեւէջներով, եթէ նոյնիսկ խառնուած ըլլար երբեմն աղիլեղի բառերով:

*

**

Սակայն տարին անգամ մը կրկնուող միջմասնաճիւղային մրցումները ուրիշ հմայք եւ ուրիշ համունին բոլորիս համար: Այդ մեծ ընտանիքին զաւակ-

ներն են, որ իրարու քով կու գան, իրար կը գտնեն անհուն կարօտով եւ նոյն դաշտին վրայ կը դառնան պատկառելի ամբողջութիւն, որ հսկայ բանակ մը կը կազմէ եւ կազդուրիչ հրճուանքով կ'ողողէ տարագիր հայութեան սրտերը: Տեսակ մը ուխտագնացութիւն, տեսակ մը եղբայրական ողջագործում, որու ընթացքին ամէն մէկ մասնաճիղի ցուցադրած գերազանցութիւնը եւ արժանիքները ծնողական վարձատրութեամբ կը պսակուին:

*

**

Իր մկանին խոյանքը, իր հասակին ծաղկումը եւ կարգապահ նկարագրին գեղեցկութիւնները ցուցադրող ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ական կենդանի յուշարձան մը եւ բաբախուն տաճար մըն է, որուն մէջ հայուն դարաւոր երազը կ'ապրի եւ մեր նախնիքներու հարազատ զգացումները կը խօսին:

Ի տես անոնց խրոխտ շարքերուն՝ հայ մամիկն ու պապիկը ի՞նչպէս զսպեն ուրախութեան արցունքները եւ ի՞նչպէս մեր կուրծքերը չուռին արդար հպարտութեամբ: Ի տես անոնց նուաճումներուն մեզ դիտող օտարը ի՞նչպէս չբացագանչէ. «Հիանալի՛ ժողովուրդ»:

*

**

Այս բանակը, զինուած փողով ու թմբուկով, գունդով ու զնդակով, անփոխարինելի տեղ մը գրաւեց սփիւռքի մեր իրականութեան մէջ: Եղաւ փրկարար լաստ նաւաբեկման վտանգին ենթակայ մեր նորահաս սերունդներուն: Ուրիշ մարզական միութիւն մը դժուար թէ դիմանար այսքան երկար եւ իր ժողովուրդին տարայնքան բան, որ տուաւ Հ.Մ.Ը.Մ.ը:



1959 Գահիրեի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի մարզիկները Հալեպի միջ-մասնաճիղային 33րդ մարպախաղերուն

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը կարողացաւ Հայաստանի իւրաքանչիւր գաւառէն կամ գիւղէն եկած երիտասարդներ, պատանիներ եւ մանուկներ մէկ դպրոցի մէջ առնել եւ անոնցմէ կազմել մէկ միութիւն եւ մէկ կազմակերպութիւն: Այսօր կայ Հ.Մ.Ը.Մ.ական սերունդ մը, որ ունի նոյն գաղափարը, նոյն նկարագիրը եւ նոյն ձգտումները: Ապագայ պատմութիւնը, եւ վստահ եմ, որ պիտի արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.ի այս մեծ դերը ազգապահպանման մեր գործին մէջ:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՓԱՅԼՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 29 Նոյեմբեր 1888ին, Ծուշի (Արցախ): Իր նախնական եւ բարձրագոյն կրթութիւնը ստացած էր ռուսական վարժարաններու մէջ՝ Ծուշի, Բագու եւ Փեթերսպորկ: Աւարտած էր Փեթերսպորկի համալսարանը, պատմութեան եւ տնտեսական գիտութեանց տոքթորայի աստիճանով: Հակառակ իր ռուսական կրթութեան, ինքնաշխատութեան ճամբով՝ տիրապետեց նաեւ իր մայրենի լեզուին, մասնագիտական հմտութեամբ: Պատանեկան տարիքէն գտնուած է Դաշնակցութեան շարքերուն մէջ: Ու հազիւ 19 տարեկան ընտրուած է Բագուի պէս կարեւոր շրջանի մը Կեդրոնական Կոմիտէի անդամ: Այդ թուականէն ասդին եւ մինչեւ իր մահը գտնուեցաւ կուսակցական պատասխանատու դիրքերու վրայ: Եղաւ դասախօս Էջմիածնի Գեորգեան ժեմարանին մէջ եւ Ալեքսանդրապոլի քաղաքապետ Ալեքսանդր Խատիսեանի օգնական՝ ռուսական յեղափոխութեան առաջին շրջանին: Անկախութեան շրջանին ընտրուած է երեսփոխան Հայաստանի խորհրդարանին, իսկ առկէ առաջ՝ Թիֆլիսի կովկասեան Սէյմին:



ԳՈՐԾԻՉԸ

Ջէնքի մարդ չէ եղած, բայց եղած է գաղափարի անխոնջ մարտիկ: Եղած է ուսուցիչ, հանրային ու կուսակցական գործիչ եւ հրապարագիր: Օժտուած էր նաեւ խօսելու եւ բազմութիւնները իրեն կապելու բնածին ուժով: Ան կը ճանչնար մեր կեանքը՝ իր փառքերով ու անկումներով: Մեր պատմութիւնը, «հին» եւ «նոր», բաց գիրք էր իրեն համար եւ աղբիւր՝ ոգեւորութեան:

Մէկը միսէն գերազանց այս արժանիքներով է, որ իր կեանքի տարիներուն յիսունը ան ընծայաբերեց իր ժողովուրդին, անձնամոռաց նուիրումով ու արդիւնաշատ վաստակով: Հայրենիքի մէջ՝ մօտ 15, հայրենիքէն դուրս՝ ուղիղ 35 տարի:

ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ

Վահան Նաւասարդեան ո՛րքան փայլուն գործիչ եղաւ, նո՛յնքան եւ աւելի եղաւ փայլուն եւ հազուագիտ հրապարակագիր մը: Ան խմբագրած է թերթեր Կովկասի մէջ, բայց անոր խմբագրական տաղանդը իր բովանդակ ուժով հրապարակ եկաւ «Յոսսաբեր»ի միջոցաւ (Գահիրէ), որուն խմբագրութիւնը վարեց բացառիկ ձեռնհասութեամբ ամբողջ 34 տարի, միեւնոյն ատեն հրապարակեց 20ի չափ գրքեր՝ ազգային, քաղաքական, կուսակցական եւ տեսաբանական բովանդակութեամբ:

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Անկախութեան խորտակումէն ետք՝ տարագիր, նախ Պոլիս եւ Պերլին, ապա՝ 1922ին Գահիրէ, ուր հրատիրուած էր իբրեւ «Յոսսաբեր»ի խմբագիր:

Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմնի անդամ ընտրուեցաւ 1933ի Ընդհ. Ժողովին եւ պահեց այնուհետեւ իր այդ հանգամանքը մինչեւ իր մահը: Նախապէս ալ, 1919ի Ընդհանուր Ժողովին (Երեւան) ընտրուած էր Հ.Յ.Դ. Բիւրոյի փոխ անդամ:

Ան իր աչքերը փակեց 24 Յունիս 1956ին: Մեռաւ գրիչը ձեռքին, ուղմանակատի առաջին գիծին վրայ գէն ի ձեռին մեռնող հերոսին մահով:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի հետ կապը կու գայ գրական-հրապարակագրական ճամբով: Որպես խմբագիր, «Յուսաբեր»ի էջերէն, յաճախ անդրադարձած է Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան, անոր ազգանուէր առաքելութեան եւ երիտասարդանուէր դերակատարութեան՝ սփիւռքի ապահայացնող մթնոլորտին մէջ: Ունի Հ.Մ.Ը.Մ.ին նուիրուած շքեղ գրութիւններ:

*Մարմնամարզը - Հայամա՛րզ պէտք է դառնայ,
Հայո՛ւն կամքը կոելու, անոր նկարագիրը ա՛լ աւելի
ազնուացնելու եւ անոր Հայրենիքի հմայքն ու ազնը-
ւականութիւնը նաեւ օտարներուն մէջ ծաւալելու հա-
մար:*

*Եթէ մեր մարզիկները ամէն տեղ իրենց հետ մեր
Հայրենիքի ու մեր Ազգի բոյրը պիտի չտանհին,*

*Եթէ մեր մարզիկներու մէջ հազարաւոր հանդիսա-
տեսներ Հայաստանի ու Հայութեան խորհրդաւոր
պատկերը պիտի չտեսնեն՝ լուրջ ու կորովի, արդարա-
միտ ու արի, յամառ ու տկուն, լաւատես ու հաւատա-
ւոր, մի՛շտ լոյսի, գեղեցիկի ու բարիի հետ, այդ մար-
զիկները ոչի՛նչ կը բերեն իրենց ժողովուրդին ո՛չ իբր
փառք եւ ոչ իբր յաղթանակ:*

*Երջանիկ ենք ու հպարտ բարձրաձայն վկայելու
համար, որ մեր տղաներուն մէջ մենք ճիշդ այդ Ոգին
տեսանք:*

*Տեսանք պատկերը այն Երկրի ու Ազգի, որուն գա-
ւակներն են իրենք:*

ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՄԵԾԱՆՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷԼԵԱՆ

ԿԵԱՆՔԸ

Ծնած է 1913ին, Պարտիզակ: Եղեռնէն ճողոպրած է իր հօրը պարագաներուն շնորհիւ: Իզմիրի ջարդին կորսնցուցած է հայրը, իսկ աւելի ուշ վերադարձած է Պոլիս եւ միացած է ընտանիքին: Կարճ ժամանակ մը յաճախած է Պոլսոյ Մխիթարեան վարժարանը, ուր յօրինած է իր առաջին բանաստեղծութիւնը: Պատանեկան տարիքէն մեծ սէր ցուցաբերած է մամուլի նկատմամբ: 17 տարեկանին, ընկերոջ մը օժանդակութեամբ սկսած է հրատարակել գեղարուեստական պարբերաբերթ մը՝ «Արձան» անունով:



Մինաս Թէօլէլեանի կեանքը մէկ մանրանկարն է իր ժողովորդին: Աստանդական ու վտարանդի, ան անցած է երկրէ երկիր՝ Ռումանիա, Պուլկարիա, յետոյ նորէն Պոլիս, ապա Միջին Արեւելք՝ Եգիպտոս, Սուրիա, Լիբանան, իսկ 1960էն ետք վերջնականապէս հաստատուած է Միացեալ Նահանգներ:

Անգնահատելի է Մինաս Թէօլէլեանի դաստիարակ-ուսուցիչի եւ մամուլի մարդու վաստակը: Ուսուցչական ասպարէզն ու խմբագրական աշխատանքը զուգահեռաբար ընդգրկած մտաւո-

րականը իր կնիքը դրած է գաղափարական մամուլին վրայ՝ Պոլսոյ թերթերէն, «Ազդարար»էն մինչեւ Սուրիոյ «Արեւելք»ը, Եգիպտոսի «Յուսաբեր»ը, Պէյրութի «Ազդակ»ը, Փարիզի «Յառաջ»ը ու Պոսթընի «ՀԱՅՐԵՆԻՔ»ը, միաժամանակ ստանձնելով ուսուցչական եւ տնօրէնութեան պաշտօններ՝ Պոլսոյ Մխիթարեաններու, Հալէպի Հայկազեան վարժարանի, Ազգ. Քարէն Եփփէ Ծեմարանի (առաջին տնօրէն) եւ Պէյրութի Ս. Նշան վարժարանի (տնօրէն) մէջ:

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

- «Նախերգանք», բանաստեղծութիւններ, Սոֆիա, 1936:
- «Մթնոլորտ», բանաստեղծութիւններ, Հալէպ, 1944:
- «Քերականութիւն Արեւմտահայ լեզուի», Հալէպ, 1950:
- «Դար մը գրականութիւն» Գահիրէ, 1955 (2 հատոր):
- «Հայկական արտասահմանը եւ Ազգային Սահմանադրութիւնը», Պէյրութ, 1968:

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷԼԵԱՆ

Թէօլէլեան Հ.Մ.Ը.Մ.ական գրականութեան կարեւոր դէմքերէն է: Իր շուրջ կէս դարու պատկառելի գրական վաստակը, իրաւամբ, հրայրքով լեցուն ծառայութիւն մը հանդիսացաւ Եռագոյնով եւ «Յառաջ Նահատակ»ով արտայայտուած մեր տենչերու իրականացման: Անոր գրիչը տեսարար հարուստ մնաց հայ կեանքի փոթորկոտ օրերուն: Արդարեւ, յոգնութիւն չճանցողի իր նուիրումով տասնամեակներ շարունակ, իբրեւ մամուլի հաւատարմ սպասարկու, դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ը, կարեւորեց անոր դերը սփիւղքի մէջ, իբրեւ ազգային երիտասարդական հայաբոյր կազմակերպութիւն:

Մինաս Թէօլէլեան կը յատկանշուի անով, որ ամէն տարի, Հալէպ քաղաքի մէջ (Ս. Զատկուան տօներուն կազմակերպուած) միջ-մասնաճիւղային խաղերուն, եւ աւանդական տողանցքներուն նկարագրութիւնը եւ օրուան խորհուրդը, ժողովրդային լայն զանգումներու վերաթարմութիւնը կու տայ գերազանցօրէն վառ գոյներով, հարազատութեամբ եւ անչափելի յստակութեամբ:

Ստորեւ կու տանք հատուածներ իր գրիչէն.



*Միջ-մասնաճիւղային խաղերու պատուոյ թրիպինը-
Վերի շարքին մէջ աջին՝ Սուրիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Ղեւոնդ Արք. Չէպէեան
եւ Սիմոն Վրացեան: Կեդրոնը՝ յաղթական խումբերու բաժակները:*

1915-1918, համատարած սարսափի եւ ընդհանուր տեղատուութեան տարիներէն քիչ ետք, կազմակերպուելու մեր հասարակաց փոյթին եւ ձգտումին հետ, անասնական ճիգերու եւ կրթական վերանորոգումի փորձերու կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները մեր ազգային նոր շէնքին շաղախն էր որ կ'ապահովէին, երիտասարդութիւնը մէկտեղելով նոյն դրօշին տակ, ու այդ դրօշին վրայ իբրեւ ընդհանրական հանգանակ յայտարարելով «ԲԱՐՁՐԱՅԻՐ, ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»ը,

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը ստորակայութեան մեր զգացումը պոկելու տեսակէտով եւս հիմնական դեր կատարեց հայ

կեանքի մէջ, որովհետեւ մեր բազմաթիւ կարելիութիւնները հանդէս բերաւ փառաւոր յաղթանակներով, ու սորվեցուց իրեն վստահուած սերունդին, թէ ցեղովին բարձրարժէք եւ ստեղծագործ ժողովուրդ մըն էինք, մարմնակրթանքէն ու բոլոր մարզական խաղերէն անդին նուաճումներ իրագործելու կոչումով մը: Մեր գաղութահայ պատմութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ.ակաճութիւնը համազօր եղաւ գաղափարականութեան, անխաթար նկարագրի եւ ցեղային գիտակցութեան:

*

* *

Ո՞վ արցունք բերաւ մեր աչքերուն, երբ, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան հանդիպումին, մեր ծաղիկ երիտասարդութեան շարքերը տողանցք կատարեցին երեսուն հազարի հասնող մարդկային ծովու մը առջեւ:

- Մեր պատմութի՛ւնը:

Անոնց ձիգ հասակին եւ բարձրաճակատ յառաջընթացին մէջ, մեզմէ ամէն մէկը ժամանակակից իր պատմութեան վերապրումը գտաւ,- գտաւ պատմութիւնը ոճիրին, ու առ յաւէտ նահանջը՝ բոլոր տեսակի վատութիւններուն:

Անոնց մէկ ժամուան տողանցքին մէջ, տողանցեցին դարե՛րը,- իրենց յաղթանակի դափնիներով ու գիտակցուած պարտութիւններու վերանորոգիչ շունչով: Ակնթարթային վերապրումով մը, մեզմէ ամէն մէկը զգաց, թէ ճակատամարտները կորսնցուցած ենք, բայց երբեք՝ պատերազմը: Զոհեր տուած ենք, սակայն չենք մեռած: Կրցած ենք մեր նահատակներու եւ անթիւ մեռելներու աճիւնը կամուրջ ու օղակ դարձնել փառաւոր անցեալէ մը դէպի շքեղ ապագայ:

*
* *

Ինչո՞ւ արցունքը տասկացաւ մեր կոպերուն տակ,
երբ մանուկ, պատանի ու երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ական-
ներու բանակը, հպարտ ու պղնձադէմ, ծփացող բազ-
մութեան ծափերու որոտին ու կոկորդներու մէջ
բռունցք դարձող յուզումին դէմ յանդիման, իր դրօշնե-
րուն վրայ պտըտցուց ապրելու ուխտը մեր ժողովուր-
դին:

- Որովհետեւ՝ մեզմէ ամէն մէկը խոովքը ունեցաւ
անմեռ ու մեծ ժողովուրդի մը շարունակութիւնը ըլլա-
լու խոր գիտակցութեան:

*
* *

Ո՞վ չզգաց, ժամերու այդ յուզումէն եւ խոովքէն
վերջ, իր հոգիին ու մտքին մէջ արմատացող այն հա-
ւատքը, թէ փշրուած անօթը, - հայ ժողովուրդը -, իր
ապրումներով ու իտէալներով, իր ուխտով ու պայքա-
րով, իր բոլոր անկորուստ արժանիքներով, կը մնայ
հարազատ ու անայլայլ երկարաձգումը՝ յաւերժափառ
Հայոց Պատմութեան, արիւնագիր անցեալի՛ն, որուն
բաւիղներուն մէջ մեր արժանապատուութիւնը կը շա-
րունակէ եռալ ու պղպջալ, եւ ուրկէ՛ մեր նոր սերունդ-
ները կ'ըմպեն կտակը մեռնողներուն,- միշտ արի ու
բարձր մնալու, արատ չբերելու իրենց «գիտակցեալ
մահու» դրօշին, եւ հաւատալու՝ Փոքր Ածուի պատմա-
կան կոչումին եւ յաւերժօրէն գոյատեւելու իրաւունքին:

*
* *

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ՝ աճիւն մը կայ մեր
հերոսներէն, որովհետեւ՝ ամէն մէկ անգամ, ծառայու-

թեան կոչուած է՝ հերոսներու մահով անմահացած ազգային իտէալներու:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ՝ անմահութեան մէկ գաղտնիքը կայ մեր փոքր ժողովուրդին, որովհետեւ՝ ամէն մէկ անդամ կանչուած է որակ մը դառնալու, իր հայրենիքին ու ցեղին համար:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ՝ պատմութիւնը կայ Հայոց ժողովուրդին.- որովհետեւ Պատմութիւնը անցեալ մը չէ միայն, այլեւ՝ ներկայ մը ու մա՛նաւանդ՝ ապագայ:

*

* *

Հալէպի դաշտերուն վրայ Միութեան դրօշը պտըտցնող Հ.Մ.Ը.Մ.ական շարքերը, աներեւոյթ, բայց յաւերժօրէն իրական ուրի՛շ դրօշ մըն ալ կը պտըտցընէին իրենց բարձր ճակատներուն վրայ.- Հայրենիքի երկու միլիոն հայ ժողովուրդի փառքը: Ա՛յն փառքը, որ՝ լուռ, բայց խոր երկունքով մը՝ կը խմորուի, իբրեւ ազատութեան եւ ինքնօրէն գոյութեան պաշտամունքով ապրող ժողովուրդի մը դարաւոր ուխտը: Եւ մենք. բազմահազար ներկայներս, մանաւանդ ա՛յդ դրօշն էր որ կ'ողջունէինք, մեր արցունքը մեր հաւատքին խառնած:

*

* *

Հ.Մ.Ը.Մ.ը գտանք անապատի աւազներէն, եւ՝ յանուն գաղափարի աճիւնացած սերունդի մը երկունքէն ծնած իբրեւ կոչ ու պատգամ: Հրաւէր՝ վերապրումի, եւ ուղեցոյց՝ նոր կերտումներու, նոր խոյանքներու եւ ճախրի: Անոր մէջ փնտոնեցինք, կարենալ բարձրանալու, կարենալ ուղիղ եւ անդեղեւ քալելու, անկարելի վերելքներ նուաճելու հոգեկան ուժը - եւ գտանք:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Քսաներորդ դարուն, Ապրիլեւն օրհասական Եղեռնէն անցած եւ լինելու վճռականութեամբ, մեր ժողովուրդի գտարին զաւակներէն «իրենց հոգիներուն մէջ արեւ ունեցող» երիտասարդներ, Ազգին յաւերժութեան հաւատքով, նուիրումի կամքով, վարդաթոյր ապագայի մը տեսիլքէն մղուած, հիմը դրին հոգեկան, ազգային, գաղափարական մեր արժ.քներու պաշտամունքին ձօնուած բազմախորան տաճար՝ քառագմբէթ Հ.Մ.Ը.Մ.ին:

ՏՈՔԹ. ՄԻՍԱԿ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

*

**

Աչքերը բացած օտար աստղերու տակ, բայց Աստուծոյ ծանայ եւ Հայրենիքի կամաւոր, Հ.Մ.Ը.Մ. կախարդական անունով ամո՛ւր, նկարագրի տէր եւ զոհաբերումի ախոյեան երիտասարդութիւն մը նախախնամական դեր կատարեց Սփիւռքի տարածքին (պահ մըն ալ Հայաստանի՝ երբ ժամը հնչեց), ու պիտի շարունակէ իր յանձնառութիւնը նո՛յն թափով, մինչեւ այն օրը, երբ տակաւին հայ երիտասարդ մը կայ Արտերկրի մէջ:

Յ. ԳԵՂԱՐԴ

*

**

Հայ ժողովուրդը ձեր լաւ կեցուածքին, ձեր յաջողութիւններուն պէտք ունի, որովհետեւ դուք միայն Հ.Մ.Ը.Մ.ի խումբ չէք: Դուք հայութեան խումբն էք: Թէեւ դժուար եւ քրտինք ու զոհողութիւն պահանջող պատասխանատուութիւն է, բայց վճռական ու ազնիւ իմացականութեամբ հետապնդեցէք ձեզի յանձնուած պարտականութիւնը, որպէսզի մեր միութեան, մեր ժողովուրդին արժանի խումբը ըլլաք: Եւ հաւատացէք, թէ կը յաջողի՛ք...:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆ

*

**

Հ.Մ.Ը.Մ. հայութեան համար եղաւ աստուածային բարիք, եղաւ եռքի, վէրքի բալասան:

Որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. աշխարհ եկաւ հայոց արհաւիրքի օրերուն, հայոց արիւնի երկունքէն եւ ինչպէս փիւնիկ, մեծցաւ հայ ժողովուրդին հետ, կրեց ժողովուրդին տառապանքը, ցաւը: Նաեւ ուրախացաւ, հրճուեցաւ ժողովուրդին յաջողութիւններով, նուաճումներով: Ու տակաւ նոյնացաւ, եղբայրացաւ ժողովուրդին հետ եւ իր տեսլականով դարձաւ ժողովուրդին, հայ ժողովուրդին ազգային իտէպլներուն խտացած խորհուրդը, հաւատամքը:

ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ

*

**

Մփիւռք ու Հայաստան պիտի գտնեն զիրար, պիտի տեսնեն, եւ ցոյց պիտի տան աշխարհին, թէ մէ՛կ մարմին են իրենք, մէ՛կ հոգի են իրենք, մէ՛կ մտածողութիւն են իրենք, հակառակ բոլոր

երելություններուն: Եւ թող ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ական չմոռնայ, թէ անհրաժեշտ է, որ ինք «Կազմակերպուի, ազնուանայ, որքան որ կրնայ լեցնել իր սիրտն ու միտքը, որովհետեւ ինք պիտի ըլլայ վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւներէն մէկը»:

Տոբթ. ԲԱԲԳԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ

*

**

Ձեռք մոռցած մեր Ուխտը, «Ծառայել Հայրենիքին»...

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ, անօրինակ յաջողութիւն ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.: Ո՛չ միայն սերունդ դաստիարակեց ու հայրենիքի սէր ներշնչեց անոնց, ո՛չ միայն «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»ը տիրական դարձուց, այլեւ ազգին անդամներուն մէջ եղբայրական կապ հաստատեց. կը բաւէ, որ մէկը ըսէ, թէ ժամանակին Հ.Մ.Ը.Մ.ական եղած է, անոր հանդէպ սէր ու վստահութիւն կը տածեն իր հեռաւոր ու մօտաւոր ընկերները:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

*

**

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութիւնը հայակերտիչ ու մարդակերտիչ միութիւն է: Ներկայ՝ ու ներկայութի՛ւն: Նորոգուող ու վերանորոգուող: Հայ ժողովուրդը շատ բան կը պարտի անոր հրաթել բանակին: Թող ապրի՛ ու ապրեցնէ՛: Թող բարձրանայ՝ ու բարձրացնէ՛:

Կարծէք հայ մկրտունցայ հայ ժողովուրդի եւ պատմութեան դարերուն մէջ, կնքահայրութեամբը Եռագոյնին:

Պարգապէս, հայ՛ եղայ:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

<i>Երկու խօսք</i> – Կ. ԹԻԻԹԻՒՆԾԵԱՆ	3
<i>Վկայություն մը</i> – ՏՈՔԹ. Մ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ	5
<i>Վկայություն մը</i> – Յ. ԳԵՂԱՐԴ.	7
- Հ.Մ.Ը.Մ. եւ «սկառու Պատրիարքը» ԶԱԻԷՆ ԱՐՔ. ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ	9
- Հ.Մ.Ը.Մ. եւ «սկառու Կաթողիկոսը» ՎԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ	15
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբը՝ ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	24
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հոգեւոր հայրը՝ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ	29
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ.ի Զօրեղ Պատգամախօսը՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ	39
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հոգեւոր Հովիւը՝ ՇԱԻԱՐՇ ՔՀՆՅ. ՄԵՀՐԱՊԵԱՆ	48
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ ԱԼԵՔՍԱՆ ԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ	53
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հայաստանի Կրթական նախարար՝ ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ	57
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հայաստանի Հանրապետութեան Յրդ Վրչ.՝ ՏՈՔԹ. ՀԱՄՕ ՕՀԱՆԶԱՆԵԱՆ	64
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հայաստանի ներքին գործոց նախարար՝ ՌՈՒԲԷՆ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ	68

- Հ.Մ.Ը.Մ. եւ Կամաւորական Բ. գումդի հրամանատար՝ ԴՐՕ	72
- Հ.Մ.Ը.Մ. եւ Ծիրակի նահանգապետ՝ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ	76
- Հ.Մ.Ը.Մ. եւ Զանգեզուրի հերոս՝ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ	79
- Հ.Մ.Ը.Մ. եւ Ազգային հերոս՝ ԱՐՇԱԻԻՐ ԾԻՐԱԿԵԱՆ	83
- Հ.Մ.Ը.Մ. եւ Ազգային գործիչ՝ ՀՐԱԶ ՓԱՓԱԶԵԱՆ	86
- Հ.Մ.Ը.Մ. եւ Մարզիկ բանաստեղծը՝ ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ	92
- Հ.Մ.Ը.Մ. եւ «Յառաջ Նահատակ» քայլերգի հեղինակ՝ ԳԷՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ	95
- Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ.ի տեսաբան գրագէտ՝ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ	99
- Հ.Մ.Ը.Մ. եւ փայլուն հրապարակագիր՝ ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ	106
- Հ.Մ.Ը.Մ. եւ մեծանուն հրապարակագիր՝ ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷԼԵԱՆ	109
<i>Վկայութիւններ.....</i>	115